այսօր մի առանձին թովշանքով, քաղցրությամբ ու հպարտությամբ են հնչում ազգ ու հայրենիք բառերը ու նրանց հմայքը շատ մեծ է: Այս նկատառությունով կարդինալ Աղաճանյանը ցանկացել է այդ բառերով արտահայտվող նվիրական գաղափարներն իր շրջաբերականում աղճատել ու աղափաղնել, երբ ամենուրեմք խոսվում է հայ ազգի իր հայրենիքում համախմբման մասին, կաթոլիկ եկեղեցին լուսիամբ անցնել դրա կողքից շեր կառող, քանի որ սայնքան այլանդակ, օտարամեւու և կործանադրար մոլորութիւններ ապերասանօրէն կը հրապարակուի ամենուրեմք և որոնցմէ կը նան վարակուի և թունաւորուի մնարիններն անգամ»: Ահա հենց այս նպաստակով էլ կարդինալը ազգ ու հայրենիք գաղափարներին յուրահաստով մեկնարանում տալով ցանկացել է վարակազերծ ու թունազերծ դարձնել, նա մի կողմից ուշում է ցույց տալ, որ կաթոլիկ եկեղեցուն խորը շեն եղել ազգի ու հայրենիքի գաղափարները, որ սկաթողիկէ կրօնքը ոչ մէկ տաեն ուրացած է հայրենիքի և ազգութեան գաղափարականներս, բայց մյուս կողմից իր իսկ թերած օրինակներով ժըխտում է ազգի ու հայրենիքի գաղափարները, նարի աղավաղնուով ու նույնացնելով հայրենիքի գաղափարը ծննդավայրի հետ և ապա շաղապատելով սերկրաւոր ու երկնաւոր» հայրենիքի մասին. ըստ Աղաճանյանի ստոցվում է, որ մարդն ունի «երկրաւոր» հայրենիք և աշդ «երկրաւոր» հայրենիքն այսուղ է, որտեղ ծնվել է նա, այսպիսով ըստ կարդինալ Աղաճանյանի ստացվում է, որ հայկական բազմաթիվ գաղումներում ծնված հայ մատաշ սերնդի հայրենիքը հանդիսանում են հենց այդ գաղութները. ուրեմն լավ լսիր, պանդուխտ հայորդի, ուր ուրիշ հայրենիք շունես, քան այն սերկրաւոր հայրենիքը, ուր ծնվել ու սնվել ես գու, և մոռացիր ու իսկական հայրենիքը, որտեղ քո հարացատ եղբարիներն այսօր փենց երջանիկ կանքն են կերտում, մոռացիր քո պապենական օջախը, որ քո նախնիքների՝ հաղարագոր հայրերի ու մայրերի, քույրերի ու եղբարիների արյունով է ներկվել: Կարդինալ Աղաճանյանը, գեղ նախքան սերկրաւոր ու երկնաւոր հայրենիքների մասին շաղակրատելը, իր շրջաբերականի սկզբում ժըխտում է այն, հնչ որ հետագայում ասում է ազգի մասին, այստեղ նա պարապում է նըրանց, որոնք «հակառակ Քրիստոսի պատգամին.... մի հօտ և մի հոսքիւ լինելու փոխարեն պկամփոփուին ազգի մը, պետութեան մը սեղմ սահմաններու մեջը. ապա հորդոր է կարգում հանուն աստուծու մոռա-

նալ ազգ ու Հայրենիք, ռոտովհետև Աստծոյ Հանդէպ պարտականութիւնները աւելի նուփրական են քան մաղկանց հանդէպ եղածները։

Բայց մի՞թե Հայրենիքը սիրել, Աստծուն մոռանալ է նշանակում կամ Աստծուն սիրելու համար հարկ կա մոռանալ Հայրենիքը, որ կարդինալը պահանջում է ժնախաղասել Հոգոյն բարիքը մարմնոյ բարիքին։

Անուշետև որպեսզի ընթերցողները հանկարծակի շգան իր հետագա Հայրենատյաց առաջարկներից, նաև աշխատում է նախապատրաստել նրանց՝ հայոց պատմությունն աղավաղելու և մեր նախահայրերի Հայրենասիրության վրա թանձր ստվեր նետելու միջոցով։ ԱՄեր դարաւոր պատմութեան արնթացքին, մեր Հայրերը, քաղցր հայրենի հողին վրայ, յաճախ գտած են իրենք զիրենք ահաւոր երերնտորանքի տոչե, կամ ուրսնաւ, ճշմարիտ Աստուածը, զՔրիստոս և անոր Ս. Եկեղեցին, և կամ, եթէ ոչ միշտ արիմնով մկրտովիլ, գէթ պանդատութեան ցուպը ձեռք առնելու, օտարութեան և անոր պատմադրած զրկանքներուն մէջ ապրիլ Անոնք սական Ս. Աւետառանի լուսով հոգեզմայ և անկեղծ ու խորունկ հաւատով սիած ու զրահաւորուած, չվարանեցան հրաժարելու ամէն բանէ միայն թէ Աստուածէ շօտարանալին։

Անք է մեր Հայրերու մեջի ձգած օրինակը և կտակը, Վարդանանց օրերէն մինչև վերջին տեղահանութիւններօն։

Եթէ ոչ զրպարտում, ապա մխաղվում է կարդինալը։ Մեր նախահայրերը Վարդանանց օրերից սկսած մեզ չեն կտակել, որ առանց վարամիման պանդատության ցուար ձեռքներս առնենք ու օտարություն դիմենք Աստծոց շօտարանալու համար, այլ ընդհակառակը նրանք հայրենի հողի վրա մարտնչելու պայտարիկ են ոչ միայն Աստուածու, այլ և իրենց Հայրենիքի անկախության, աղավության ու թշնամուց ուսնակիր չարվելու համար։ Անմահ Վարդանը Ավարայրի դաշտում իր դրոշը պարզեց ոչ միայն հանուն Աստուածու ու քրիստոնության, այլ և հանուն Հայրենիքի։ Հանուն քրիստոնեության և հանուն Հայ ազգի ու Հայրենիքի աղատության ու ինքնուզույնության Ղեկնդ ծրեցի կողմից Ավարայրի դաշտում պարզած փաշն էր, որ դարերի ընթացքում զորավիր հանդիսացավ Հայ ժողովրդի ազգապահպանմանը։

Իսկ ի՞նչ կասի կարդինալը այն մասին, երբ բազմաթիվ ազգեր հանուն Հայրենիքի

պատերազմում են իրենց իսկ կրոնակից ազգերի դեմ։ ի՞նչու նրանց էլ նման խորհուրդները չի տալիս Բայց թողնենք այդ երեսը է խնդիրն այս հարթության վրա դնելը նրա դիտավորությունների սահմանից դուրս է։

Պարզվում է, որ այս բոլոր շաղակրատանքները ազգի ու Հայրենիքի մասին արվում էր կանխամտածված նպատակով։ երկար ու բարակ գատողություններից, մանվածապատ ճանապարհներ անցնելուց հետո, վերինականապես կարդինալ Աղամանյանը ձեռնամուխ է լինում իր բուն նպատակի շարդրմանը։

Ահաւոր պատերազմի ընթացքին ուրեմն, երբ Դաշնակից Փետութիւնները կը յալտարարէին որ իրենց յաղթանակով պիտի ապահովուէր մարդկութեան, ի մէջ ալլոց, Կրօնքի կատարեալ ազատութիւն, իրավունքով և անձկանօք մենք ալ ակնդէտ կը մնայինք այդ օրուան, որ Հնարաւորութիւն ախտի տար մեզի, անխախա պահելով մեր կրոնական Համբումներն ու կարգերը, երթաւոր Մայր Հայրենիք մեր բաժինը բերելու անոր վերադիմութեան և բարոյական ու կրոնական վերելքին։

ՅԲայց ոչ սակաւ նողաւ մեր յունախարութիւնը երբ Հայրենաղարձի բանքերները և անոնց մունիստիկները համազգային այս գործին յարանուանական շեղտուած ընուիթ մը տուին, և Հայ Կաթողիկէութեան հանդէպ որ Զարերու բռնատիրական ժամանակ անգամ, կը վանելէր իր ապատ կազմակերպութիւնը Հայրենի գաւառներու մէջ, կը զլացնեէր արդար և լիովին արժանացած ազատամիտ վերաբերում մը։

Ահա թե ինչի համար էր արմում այդ երկար ու բարակ շաղակրատանքները պապի հմայակիրութեան, ազոի, Հայրենիքի, եկեղեցու մասին։ Կարդինալ Աղամանյանը դժուն է մնացել անավոր պատերազմի վախճանից։ երեսը է նրա սպասելիքները չեն արդարացել, նա ոկրօնքի լիկահատար ազատութիւն էր ակնկալում և այն էլ դաշնակից պետությունների հաղթանակից հետո։ կարդինալ Աղամանյանը շէր կարող շիմանալ, որ Հայրենիքում անհատները և Համայնքները չեն հալածվում իրենց կրոնական համելումների համար և որ ոչ միայն քրիստոնեական, այլ և մահմեդական և ուրիշ կրոններ դավանողները համահավասար արտոնություններ են վայելում։ Ակեղեցու պետությունից անշատված լինելը դեռ չի նշանակում կրոնի ազատության շգրյու-

թլում. ուգիշ երկրներում էլ հկեղեցին անշատված է պետությունից, բայց ոչ ոք չի կարող ասել, որ օրինակ Ֆրանսիայում կրոնի ազատությունը գոյություն չունի: Եթե կարդինալ Աղաճանյանն այդշափ նախանձախնդիր է իրոնի լիակատար ազատության, ինչու ապա չի խոսում այն կրոնական հալածանքների մասին, որ կատարվում են Հռոմի Սկզբեցու հովանավորությամբ. ինչու նա լրում է Սթովպիան Բուալիայի կողմից օկուպացվելուց հետո այնտեղից բողոքական միսիոներներին դուրս վտարելու, Խաղաղայում բողոքական Ակեղեցիները փակելու ու ավետարանները բռնագրավելու, Մեկսիկայում մոտոքազականներին գանակոծելու սպասելու, նրանց կրոնական շնչերն ապերելու, Հարավային Ամերիկայի շատ երկրներում բողոքականներին հալածելու մասին և այլն:

Կարդինալ Աղաճանյանն ի հարկե չի կարող իրազեկ Սինել Հայրենիքում տիրող կարգերին. բայց նրան անհրաժեշտ է իրականությունը շրջված ներկայացնել, փաստերն աղավաղել, բամբասել, զրպարտել, որովհետև նպատակն արդարացնում է միջոցները, ուրօնիք լիակատար ազատութեանո շգոյության շուրջը հյուսած առանպելիներով նա ցանկանում է վախեցնել ոչ միայն իր հոտին, այլ ընդհանրապես հայ հավատացյալ ժողովորդին: Այս բոլորը նա կատարում է մի հիմնական նպատակ հնտապնդելով. Հայրենիքը մոռալ գույններով ներկայացնելով, կասեցնել հայ տարագիր ժողովրդի ներգաղթը Հայրենիք.

«Ըլքրեմն մեզի կը պարտապիտի տակապին պանդիտութեան մէջ մնալ որպես զի անաղարտ պահնենք մեր Կաթողիկէ Ս. Հաւատքը»:

Եվ ամբողջ զրցաբերականը գրվել է այս մի հատիկ նախադասության համար. Խնչակարնուանված է ասել «բոլոր ճանապարհները դեպի Հռոմ են տանում», այնպես էլ կարդինալ Աղաճանյանի բոլոր շաղակրատանքները այս մի նախադասությանն են հանդում:

Լավ լսի՞ր, հայ պանդուխտ հավատացյալ ժողովովդ, որ դեռ Ֆրկար պատք է զեկերես պանդիտության մեջ, չկա դարձ դեպի Հայրենիք. Կարդինալը քարոզում է ամուս պահել գաղթացուածը և Հայրենիք շերթալ, որ պիսգի անաղարտ պահնես քո Ս. Հաւատքը. նա հորդորում է հեռու մնալ Հայրենիքից, որովհետև այնտեղ ևկը տքնին հիմները քանդել ամեն կրօնը և աստուածապաշտութեան:

Բայց հարց է ծաղում, թե մինչև ե՞րբ պետք է հայ ժողովրդի աստանդական հատ-

վածները մնան հայրենի ափերից հեռու ու իրավագուրկ ապաքաղաքացու վիճակում թափառեն երկրա-երկիր. այս հարցին զատ անորոշ, մշտաշապաս, մոռալ ակնարկներով հզի պատասխան է տալիս կարդինալը. նա առաջարկում է սպասել մինչև Հայրենիքի ուղարձը քրիստոնէական արշալոյսի..... գեղեցկութեան և հուապրում է ոթէ պիտի հնչէ Աստուածէ որոշուած այդ ցանկալի ժամը, իսկ մինչ այդ հորդորում է մնալ «Սփիւթի մէջ, վայելելով ազնիւ և լայնամիտ ասպնջականառութիւնը գաղթավայրերու.....»:

Այսպիսով, երբ իրականացել են գաղթացուալը ձեռներին զեգերող բազմահազար հայրենադարձ հայերի իղձերը, երբ նրանց առաջ լայն բացվել են Հայրենիքի դմները, կարդինալ Աղաճանյանը, կեղծ դիմակ հագած, այդ դռների առաջ Աստուածու անոմից կուրծքը ծեծում, հավատացնում, համոզում է ետ կանգնել Հայրենիք մեկնելուց: Սակայն նա անզոր է հայրենակարտ մարդկանց խորաթափանց հայացքից ծածկելու Արարատի ստորոտում ծաղկող Հայրենիքը:

Ներգաղթի գործը ձախողելու համար կարդինալ Աղաճանյանը մրու կողմից ներկեր չի խնայում բաղմագայրերու կյանքը, մատաւանդ Մեղձաւոր Արեւելքի մէջ, վառ գույներով ներկայացնելու. նա գրում է. «Քողնի ճշմարիտ ազատութեան հետ ունեցանք և ունինք հասարակական կեանքի և մշակութի ամեն դիւրութիւններ, և որոնց շնորհիւ այս գաղթացները համեմատաբար թիւ ժամանակաւայը մէջ հասան նախանձելի մինակին: Սակայն նա դիտավորյալ կերպով նախ ալքաթուող է անում հայ մշակույթի գարդագումը ու Հայրենիքում և երկրորդը՝ մոռացության է մատնում այն հանգամանքը, թե ո՞րոնց են այն ակունքները, որ թե՝ սնում ու թե՝ խթանում են հայ մշակույթի զարգացումը գաղութներուած: Հայտնի է, որ ոչ մի հայկական գաղութում հայ մշակույթի զարգացումը պայմանավորված չէ պետական օժանդակությամբ և նրա փոքր ի շատե զարգացումը հանդիսանում է լոկ հասարակական կազմակերպությունների ու Հայրենասեր անհատների ձեւներեցության ալբումը, մինչդեռ բուն Հայրենիքում պետությունը բոլոր միջոցներն ստեղծել է հայ մրշակույթի ծաղկածան համար, որի հետևանքով էլ հայ մշակույթը ներկայաւուն Հայրենիքում ապրում է իր նոր ու փառահեղ Ասկեղդարը. միաժամանակ պիտի ասել, որ այս կամ այն հայկական գաղթացնում եթե հայ

մշակույթը զարգանում, աճում է, ապա շը-
նորհիվ Սովորական Հայաստանի գոյության
փաստի, որը ուղեցույց առաջ ողերու-
թան ու ներշնչուն աղբյուր է հանդիսանում
գաղտնահայ նշակույթի զարգացման հա-
մար, իմբանելով նրա առաջընթացը։ Սո-
վորական Հայրենիքի գոյության փաստը
շերմացնում, կնևսատու հյութով ներարկում
է գաղութահայ մշակույթի անխոնչ մշակ-
ների երակները, դուրս մղելով նախակինում
նրանց մտա իշխող լրամատությունը, հոռեսե-
սովիւնը, անկումային տրամադրություն-
ները և նոր թափ հաղորդելով, նորանոր խի-
զախումների մուս նրանց, իսկ եթե հայ-
կական գաղութիներում բարյացակամ վերա-
բերմունք գոյություն ունի դեպի հայերը,
ապա այդ էլ մասամբ շնորհիվ նրան, որ
ամենուղեք հայ ժողովուրդը անվերապահո-
րեն իր բոլոր ֆիզիկական ու հոգեկան կա-
րողությունները ի սպաս դրաց ազատամեր
ժողովուրդների Հայթանակի գործին, մեծա-
պես նպաստելով Գաղիստական վանդալնե-
րի շախչախման ու խորտակմանը։ այդ
բարյացակամ վերաբերմունքն ատեղծվել է
քառորդ միջինուց ավելի հայ քաջարի մար-
տիկների ու մի քանի տասնակ տաղանդա-
վոր հայ գորավարների շնորհիվ, որոնք ի-
րենց սրբանշեի սիրագործություններով ան-
ձան փառապահ հյուսեցին հայ ժողովուրդի
համար։ այդ վերաբերմունքը ստեղծվել է
աշխարհի բոլոր ուազմաբաներու մասունչող
հայ ուազմիկների և բարձրաթիվ երկրների
ընդհատակում պայքարող հայ պատմիզան-
ների շնորհիվ։

Խնչ վերաբերում է մնաբանների վիճա-
կին, ապա կարդինալ Աղանանյանն այս-
տեղ ևս հավատարիմ է իրեն, արտեղ ևս
նու փեղաթուրում է իրականությունը։ Ամե-
նայն Հայոց Հարբակետը հայկական զանա-
զան գաղութիւնից քազմաթիվ զիմուններ
է ստացել, որոնց մեջ նկարագրված է պան-
դուրիս հայ ժողովուրդի զրկանքներով լի-
կրանքը, նրա իրավազուրկ վիճակը, զործա-
զովութրումը, ձայր աստիճան ծանր կացու-
թյունը։ Դիմունները ինքում, աղօրում են
Ամենայն Հայոց Կաթողիկոսին միջնորդի
կառավարության առաջ փութեցնելու իշենց
օր առաջ ներգարթը։ Հայրենիք։

Կարդինալ Աղանանյանը իր շրջաբերակա-
նում խոսում է նաև Հայ Կաթողիկե Պատ-
րիքարանի մասին, որը որեքած է և կը
բերէ յաճախ ազդու իր աշակցութիւնը Հայ
Աղքիս և անոր դասին և զաւակներում ի նը-

պաստ։ Թէկ իր միջամտութիւնները շատ
անգամ կը մնան բաղարկուած և հեռու փո-
ղահարուելու։

Հետաքրքիր է, թե այդ ի՞նչ սմիշամու-
թիւններու են, որ ոչառ անգամ կը մնան քա-
ղարկուած և հեռու փաղահարուելու։ տարօ-
րինակ է, թե ինչո՞ւ նրանք քողարկված են
պահվում, եթէ իրոք արծանի են հրապա-
րակման։ Թույլ տվիք, կասկածելու, որ այդ
քողարկված ամիսամտութիւնները արվում են
ու թե հօգուտ հայ ազգի ու հայ գատի, այլ
հօգուտ Վատիկանի քաղաքականության և ի
մաս հայ գատի։ Անցյալը մի կողմը թող-
նելու և խոսենք այն մասին, թե ինչ է աշ-
վում հայ ազգի ու դատի համար Կաթողիկե
Պատրիքարքանի կողմից։ Այսօր, երբ բո-
վանդակ հայությունը միակամ պահանջում
է, որպեսզի Թյուրքիայի կողմից անարդա-
րացի կերպով բռնադրագուած հայկական
նահանգները միակցին Սովետական Հա-
յաստանին, որպեսզի այսպիսով հնարավո-
րություններ ստեղծվեն սիյունոքով մեկ ցըր-
ված պանդուստ բռնոր հայերի համար ի-
րենց Հայեններում համախմբվելու ու այն-
տեղ եղած եղբայրների հետ միամին իրենց
եղանիկ կյանքը կերտելու, երբ Միավոր-
քած Ազգությունների Կաթոմակեդրապությանը և
այլ տեղեր բազմաթիվ դիմուններ են ար-
վում, երբ օտարազդի քաղաքավան, հասա-
րակական, զիտական գործիչներն անգամ
դիմուններ են անում հայկական պահանջ-
ները հարգելու համար, Կաթողիկե Պատ-
րիքարքանը թշնամական դիրք է բռնում
ներգաղթի հանդեպ և լուսնիան մատնելով
հայկական պահանջները, զոր է լցնում
հայ ժողովուրդի թշնամինների շրագացի գրա-
Պատրիքարքանու դեմ լինելով ներգաղթին,
որմ է ընդհանրապես նաև Հայքական պա-
հանջներին։ Հայկական գերված հողերի վե-
րաբերման։ Մա՞ է Զեր ազակցությունը
հայկական գուստին կամ Դուք աշակցություն
՞ ՞ Համարում հայ դատին այն, որ պապար-
տելով ու գորկաբեկով Հայրենիքը, կոչ եք
անում հրաժարվել այնտեղ մեկնելուց։
Թույլ տվիք ասելու, որ Պատրիքարքարանիդ
ամիջամտությունները, որոնք անը մնան
քորարկուածն նպաստակ ունեն եղելի պաշտօնի
գիշան ազիտական ճանապարհներով Հայ
ժողովուրդի թշնամիններին արդամադրել արգե-
լակելու հայկական արդարացի պահանջների
կենսագործամբ։

Խոկ ի՞նչ է արել հօգուտ հայ գատի հայ-
այսեղ Պիոս Ժիոս Ժիոս Եմենայն Հա-
յոց Ֆայրապետ Գևորգ Զ, Հարազատ Բարդ-
մանը հանդիսանալով բովանդակ հայ ժո-
ղովուրդի իշեմերի, Ամիրական Արարատի ստո-

րոտից իր հայթ ծայնն է հնչեցնում, հրավեր կարգալով իր պարունակություններին հայրենիքում համախմբվելու և երեք մեծ տեղությունների զեկավարներին խնդրում հնանաշել Հայերի իրավունքը իրենց պատմական Հայրենիքի վրա, որ նորա սրբագրութել են իրենց արյունով ու քրտինքով և ժամկեւ հիշատակաց արժանի Հարուստ կաթողնելովք, Հռոմի Պիոս ԺԲ «Հայասեբ» պատը լուսիցուն է պահպանում՝ հրաժարվելով Հօգուտ Հայ դատի իր ձայնը հնչեցնելու Վատիկանի այն ձայնասփիւռի ալիքների միջից, որը «արեր շարունակ գովքը հիւսեց Հայ Տողովլրդին», առասպելներ Հյուսիւով պատի «Հայաստիրության» շուրջը, բայց խստիկ լուսիցուն պահպաննելով Հայ Հայրենիքի, Հայ դատի ու Հայկական պահանջների մասին:

Կամ նշենք, ինչ է արվում Միջին ու Մերձակոր Արևելքի հայաշատ գաղութներում. այս ժամանակ, եթք Գարեգին կաթողիկոսը ապրում, շնչում է Հայրենիքով, ամենուդեք սատարում է պազահավաքման մեծ գործը իր մեծագույն սժանդակությունը բերելով ներդաշի կազմակերպմանը և կոչ է սուսմ գաղութահայությանը արևածաղկի նման երեսով զառնալ զեպի հայ ժողովրդ՝ պահնդանության արևը, որ մեր Հայաստան է թանկագին. կարդինալ Աղաճանյանը քարոզում է երես գարձնել Հայաստանից, հրաժարվել այնտեղ ներդաշի լուց:

Կարդինալ Աղաճանյանի ներգաղթի դեմ
զինքեր չոճելը, պանդխտության մեջ մնա-
լու հիստերիկ կոչերը և հայկական պա-
հանջները ձախողեցու փորձերը մի ընդհա-
նուր ակունքից են բխում և այդ ակունքը
հանդիսանում է Վատիկանը. կարդինալ
Աղաճանյանի հականերգաղթային այս գոր-
ծունեությունը սերտ կերպով կապված է
Վատիկանի քաղաքական գործունեության
հետ, քաղաքական գործունեություն, որը
բանադրվել է Հայ Սկիենցու կողմից:

Իզուք է ճպում կարդինալ Աղամանյանը ամենայն զգուշությամբ թագանելու իրողությունը, որ «Հոռմայ Ա. Սթորը քաղաքական թևեր մը չե, այլ սոսկ կրօնական» և որ ինքը քաղաքական նպատակներ չի հետապնդում, այլ սոսկ նկատի ունի ժխջիմի աղաւութիւն, ոկոտնական վերելք», և այլ շահակրատանքներ:

Այսպիսով կարդինալ Աղաճանյանը շանը
ի խնայում հայ վտարանդի ժողովրդի բն-
կորները պապի քաղաքականության զոհա-
սեղանի մրա ողջակեհեգու

Ատկայն հայ աստանդական ժողովուրդը, լինի նա կաթողիկ, բողոքական, թե լուսավորչական, այնու ոչ մի մտադրություն շռնի աճ-ռորդի առարկա դառնալու:

Այս բոլորն արծանագրելով, մենք ընակ մտադրություն չունենք կրոնական վեճոր հրահրել ու կրքեր բրբրել. մեր նպատակն էր պատմական իրողությունների հաշտթյունը վերականգնել ու զերծ դարձնել այն աղավաղումից և միաժամանակ նշել այն դրդապատճառները, որոնք առիթ են ծառայել այդ աղավաղումանը:

Այժմ, երբ մեր առաջ ծառացած են Հայ-
րենիքի էլ ավելի ծաղկման ու հզորացման
և սփյուռքում ցրված հայությունը երա մեջ
համախմբելու փնտիրները, ժամանակը
և տեղը չէ կրօնական գամ այլ վեճերով
զբաղվելու Հայ ժողովրդից այժմ քան եր-
բեք պահանջվում է միասնական կամք:

Մեզ սիմալ շպետք է հասկանալ, մեր բոլոր ասածները ուղղված չէին մեր կաթոլիկ եղբայրների դեմ. Հայ Եկեղեցին թշնամության նշույլ անգամ չի տածում կաթոլիկ կամ ռողորական իր եղբայրների հանդիպության վեջույնուն, հակառակ Հոռոմի Եկեղեցու, խորթ են եղել կրոնական հալածանքները, անհամբերատարությունը կամ ուրիշներին իր գիրկը ներգրավելու ձգտումները. Նա մյուս Եկեղեցիներին համարելու համարում է քույրեր, Ինչպես Գևորգ Զ Հայրապետն և աստմ, Շահնշահ Եկեղեցին ունի վերին աստիճանի ներդաշամիւր ոգի. Նորա տարեգրությունների մեջ չի կարելի գտնել կրոնական հալածանք, ժողովուրդը ստրկացնելու ձգտում, աններողամտություն և անհամբերատարություն»:

Մենք համոզված ենք, որ կաթողիկ հայությունը լի բաժանում կարդինալ Աղաճանյանի տեսակետները ազգի, հայրենիքի և հատկապես Սովետական Հայրենիքի նվասամքը. այդ են վկայում Հայրենիք ներգաղթող կաթոլիկ հայերի խմբերը և կաթոլիկ հայերի Գորոյթները։ Մենք չենք կարծում, որ կաթոլիկ հայերի մեջ մեռած լինի հայրենասիրական ոգին նույնչափ, որշափ կարդինալ Աղաճանյանի մոտ. Հայրենասիրական զգացմունքները համաձարդակային են, ապա և նրանք խորթ չեն նաև մեր կաթոլիկ եղբայրների։ Համար, Քիչ բան չեն արել նաև մեր կաթոլիկ եղբայրները Հայոց ժողովարարական մեջ գոհում առաջարկությամբ ու անհում երախտագիտությամբ ու անհում կաթոլիկ հայերի անուններ, ինչպիսիք են Մյուսարարան միաբանության անդամները,

որոնք խոշոր ներդրումներ են արել հայ կուլտուրայի, հայ մշակույթի զարգացման գործում, ու բորբոքել հայի սրտում հայրենասիրական սրբազն զգացմունքները:

Կաթոլիկ, բողոքական և լուսավորչական հայերը ամենից առաջ եղայրներ են և կապված են միմյանց հետ բազմաթիվ անքակտելի կապերով. նրանք կազմում են մի միասնական ընտանիք և ինչպես ընտանիքի անդամները տարբեր համոզումներ ունենալով չեն դադարում մի համերաշխ ընտանիք կազմելուց, այդպես էլ պատմական դեպքերի ժերումով հայ ժողովրդի տարբեր հատվածների տարբեր կրոնական համոզումներ ունենալը չի խանգարում նրանց մի ընդհանուր համահայկական ընտանիքի մեջ, համախմբվելուն, հայունի օչախի շարքը բոլորվելուն: Խչափես հայ ժողովրդի մյուս հատվածները, այդպես էլ հայ կաթոլիկները հեռու լինելով հայրենի օչախից, տար հորիզոնների տակ չեն գաղտարել իրենց սիրաֆորով հայացքը դեպի նվիրական Արարատն տւշտել: Հայ ժողովուրդը, ներառյալ նաև հայ կաթոլիկներու դարեր շարունակ տենչացել է հայ պետականությունը վերականգնված տեսնել և

այսօր, երբ իրականացել են նրա դարավոր հոգերը, չի կարող նա սփրուռքում մնալ ու իր Հայրենիքը շդառնալ:

Թոփանդակ հայ ժողովուրդը փրկումյան մի հանգրվան միայն ունի և դա Սովետական Հայրենիքն է, քեզի ուր ձգվում նու բոլոր գաղութահայերի ուղիները: Հայ ժողովուրդը Միության ժողովուրդների եղայրական ընտանիքում միայն կարող է ապրել հաւերաշխ ու զարգացնել իր ազգային մշտեկույթը:

Իզուր են կարդինալ Աղաճանյանի փորձերը՝ ես պահելու հայրենադարձներին ու նրանց փրկության նավը դեպի Վատիկանի խութեգով ու ծանծաղուտներով հարուստ, մոռայ անակնկալներով հղի ու պղտոր նախանդիսն ուղղելու զանգերը:

Հայրենապարձ հայությունը, հայացքը հառած Արարատի ստորոտում վառ փայլող, ժամանել ու գերող ն գաղութահայության ուղին լուսավորող աստղին, իր փրկության նավի առագաստները լայն թացած, կյանքի արեծուփ ծովի արիքները ճեղքելով ու Պովտի նման առանց ես նայելու, դեպի Հայրենիք, քեզի Սովետական Հայաստան է շարժվում:

Վ.



Ի Ս Պ Ա Ս Հ Ա Վ Ր Ե Ն Յ Ա Յ *

«ՈՐԹԵՍ ՄԱՅՐ ՈՐԴԿՈՎՔ ԲԵՐԿՐՅԱԼ, ահա բացատրություն մը, որ Աստվածաշումշը կդորժածի արտօնացուելու համար գերագույն զգացումը այս խանդակաթ ուրախության, որ մայրերը կունենան երբ իրենց շուրջ հավաքած կտեսնեն իրենց զավակները։ Միթե մայր Հայաստանին չէ՝ որ ամեննեն ավելի կհարմարի այդ ասածվածքը, արդ սուզի բողերը վերցուցած թևերը կրանա ընդունելու ու իր ծոցին մէջ գողոտորդեն գրկելու համար դարձրե ի վեր սփյուռա աշխարհի ցրված իր զավակները։

—Այո՛, Մայր, պիտի դանք ամենքս ալ, որքան դռւն մեռ, նույնքան ալ մենք քո կարուտ ունինք։ Դուն, փուտիկի մը պես, քու ամելուններեղ հարություն առիր, ավելի առույգ ու ավելի գեղեցիկ քան երիտասարդությանդ օրերուն, իսկ մենք, Սփյուռքի զավակներդ, շանացինք, յուրաքանչյուրը իր կարողության շափով վառ պահել քու սերդ ու հիշատակդ մեր սրտին մեջ ու մեր երիտասարդ կուրծքերու տակ։

Ներգալիթի շեփորը կհնչե ու վերցապին կիրագործի դարձրու երազը հայրենիքի միության ու մեծության՝ որուն համար մեր հայրերը ամեն տառապանք հանձն առին, աքուրի, բանտի ու անապատներու մեջ ամեննեն անարդ մահով մեռան։ Այսպիսի նմիրական մեկ պահուն, սրբապղծություն ու քրեական հանցանք պիտի ըլլար ամենադուրի կերպով իսկ արժելք հանդիսանալ անոր իրականացման։

Ընդ առաջ երթալով Հայ Կաթողիկե երիտասարդաց Միության անդամներուն հայտնած բաղանքին, կուզենք այս սուղբերով լուսաբանել մտքերը Հայ Կաթողիկեներու զուրջ Հարցուցված տարակարծությանց մասին, որ սկսան շրջի այն օրեն ի վեր, որ Անդարային

*) Մեր տրամադրության տակ եղած բազմաթիվ նյութերից զետեղում ենք միայն մեկը, որպես ապացույց, որ կաթոլիկ հայությունը չի բաժանում կարգինալ Աղաճանյանի հայրենատյաց տեսակետներու ԽՄՅԱԳՐ.

եկած հեռագիր մը կըսեր թե Պալսու Հայ Կաթողիկեները կմերժեն նղեր Հայաստան վերադառնալ։

Կասկնանք ժողովրդական բնական հուզամը այրպիսի արտահայտության մը առշն, երբ այդ լուսոր զարմանք ու զայրութ պատճառուց նախ նույն ինքն կաթողիկե հայերուն։

Բայց Հեռագրին վերլուծումը բանականության լույսին տակ, ցույց կուտա, որ կամ թուղթին քաղաքական պայմանները չեն ներեք Հայոց ապատորեն շարժելու և կամ թե այդ հեռագրին անհիմն է, ինչ որ ավելի ճիշտ կթիվ, եթե նկատի առնենք այդ առթիվ թրքական մամուկին ըրած կարդ մը բողոքները, առանց հաշվելու ոսրիշ ստուգ աղբյուրների առած մեր տեղիկությունները՝ արձանագրուններու բազմության շուրջ։ Ապա Պոլսու հայ կաթողիկեներու միտքը հասկեալու համար պետք չէ դիմել օտար աղբյուրի բխած հեռագրի մը, այլ անոնց համանքին պետերուն, կամ գեթ հայ աղբյուրներու։

Բայց ահա ուրիշ հարցում մը Ի՞նչ է հայ կաթողիկեներու դիրքը ներգալիթի նկատմամբ իրանանու ու Սուրբի մեջ։ Կպատասխանենք. անվերապահ գործակցություն աղային բոլոր մարմիններու հնտ, որ այդ ուղղութամբ կաշխատին, նվ այս՝ Սասունցի Դամիթ գորասյաննեն սկսյալ մինչեւ երեկով Անթիշխատի ժողովը։

Որով և իրենց բաղձանքն է՝ ամբողջ հայությունը ամփոփված տեսնել ընդարձակված Հայաստանի մը սահմաններեն ներս, որկենուրու ազգացին փրկություն չկա։ Ապա արծարծել իսկ ամենուն սրտին մեջ ներգալիթի բուռն փափաք մը։ Ուստի և խրատել, ինչպես որ սրավ պրոֆ։ Աշու Արքահամյան, բացարձակ ու անկեղծ հավատարմություն մեր քաղաքացիական պարտականություններուն հուրընկալ ներկրներու մեջ մինչև ներգալիթի ժամը։

—Օքան եռանդով, նույնքան ալ հանգարտությամբ գիտնանք սպասել մեկնումի մեր կարգին։

Հայաստանի ներկա սահմանները անբար-
վարար ըլլալով արտասահմանի մեջ ու կես
միլիոն հայությունը ընդունելու, տարակուս
չկա թե, մինչև այդ սահմաններուն ընդար-
ձակումը (և մաղթենք որ շարաթիներու խնդիր
ըլլա ան) Հայաստանի իմաստուն և իրազեկ
կառավագությունը ծեռք պիտի երկարի նախ
ամեննեն ավելի զրկյալ իր զավակներուն։
Մեր պարտականությունը պիտի ըզլա ամեն
գնով օժանդակել Հայաստանի կառավարու-
թյան ծրագիրներուն գործադրության և
կարգապահությամբ սպասել մեզի տրվելիք
հրամանին։

Հայ կաթողիկեները ոչ մեկ տարակուս
ունին թե Հայաստանի մեջ պիտի վայելին
մյուս կրոնքերու համասար իրավունքներ,

որովհետև Հոն հայր հայ է միայն Կրոնքը
խղճի ազատության ձգված խնդիր մըն է։ Եվ
անռնք պիտի մեկնին Հայաստան վայելիկու
իրենց հայրենիքին բարիքները և ի սպաս ա-
նոր գնելու իրենց բազուկը, տաղանդն ու
կարողությունները։

Ահա մեր գաղափարը։ Երկրի մը մեջ ուր
լեզու սանձ շումի, եթե ասկե տարբեր մտա-
ծումներ արտաքերվին, Հայրենասիրությու-
նը կապհանջե բաղցրությամբ լուսարանի և
մողորոշը, փոխանակ մատի փաթթոց ընելու
անոր լսածները և փոխադարձ սիրով պա-
տրաստվի եղբայրաբար ապրելու մեր իդ-
ձերուն առարկա Մայր Հայրենիքին մեջ։

2. ՎԲԴ. ԹԵՌԵՑԱՆ

(«ԱՌԱԽՈՏ» Հունվ. 4 1946 թ.)





ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԻ

ՄԱՅՐ ԱԹՈՒ



— Սեպտեմբերի 28-ին, Վեհափառ Հայութիսի անվանակիցության օրը, տեղի ունեցավ Հանդիսավոլոր պատարագ և Հայրապետական մաղթանք Մայր Աթոռի ողջ միաբանության մասնակցությամբ և Հավատացյալների խումբ բազմության ներկայությամբ:

Վեհափառ Հայրապետի անունով շնորհավորական հեռագրեր նն ստացվել Տանն Եթիկիս Շնորհազարդ Կաթողիկոսից, Երուաղեմի Պատղիարքից, Միութենական և արտասահմանյան թեմերի Առաջնորդներից, ՀՍԾԻ-ի Մինիստրների Սովետին կից Հայեկաղեցու Գործերի Խորհրդից և բազմարիվ Հավատացյալներից:



— Օգոստոսի 5-ին Աթենքից ստացվեց առջեկա մեռնօրհնության համար Տ. Կալվականի նվիրաբերած ծիթապատճի լուղլէ Վեհափառ Հայրապետը գոհունակության և օրհնության հեռագիր և կոնդակ է ուղարկել նվիրատուին:



— Վեհափառ Հայրապետի կոնդակով պարգևատրվեցին Տ. Կարապետ քահ. Գալֆայանը՝ (Եղեմ, Կալիֆորնիա) ավագության պատվով, Տ. Պուակ քահանա Սարգսյանը՝ (Սան-Ֆրանցիսկո) լանջափաշով և Տ. Պետրոս քահանա Հակոբրանը՝ (Սան-Ֆրանցիսկո) լանջափաշով:



— Աստրախանի Հայ Հավատացյալների Համախոսական ղեմումի Համաձայն, սեպտեմբերի 24-ին Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Գեր. Տ. Ներսէս հպիսկոպոս Արքահայր քահանա ձեռնադրեց ընծայացու Գրիգոր Անանյանին՝ նույն քաղաքի հայոց եկեղեցու համար:

— Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշմամբ 1946—47 ուսումնական տարում Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի Ա. Կուրսան են ընդունվել 35 ուսանող: Ճեմարանի սամերի ընդհանուր թիվը, անցյալ տարվա սաների հետ միասին, ներկայումս կազմում է 60 հոգի:



Թեհրանի թեմի Առաջնորդ՝ Գեր. Տ. Ռուբեն հպիսկոպոս Դրամբյանը հայտնել է թեմական պատգամավորական ժողով գումարիու Համար 110 պատգամավոր հավաքելու գովարությունը և խնդրել է Թույլատըրել հիշյալ թիվն իշխնել 55-ի: Վեհափառ Հայրապետը հեռագրով բավարարել է այդ խնդրու:



— Սեպտեմբերի 16-ին Մայր Աթոռ ալեկեց ՍՍԾԻ-ի հետ կուստուրական կապը անդիհական ընկերության նախագահ, անդըլիական պարլամենտի անդամ պ. Դ. Ն. Պրիտոր՝ նույն ընկերության քարտուղար տիկին Զուգիտ Տողոքի ընկերակցությամբ:

Հյուրերը ընդունելություն գտան Վեհափառ Հայրապետի կողմից:



Մայր Աթոռ այցելեցին Սովետական Հայաստանի գրտուների Համագումարի մի խումբ մասնակիցներ, որոնք Մայր Տաճարը զիտելուց հետո ընդունելություն գտան Վեհափառ Հայրապետի կովմից և զրոյց ունեցան նորին Սրբության հետ:



Սեպտեմբերի 22-ին Հյուսիսային Կորճայի կուստուրական Հասարակական կազմակերպությունների գործիչների պատվիրակության ղեկավարները այցելեցին Ս. Էջմիածնին:

Մայր Տաճարը դիտեմուց հետո նրանք արժանացան Վեհափառ Հայրապետի ընդունելությանը:

— Իրանա-Հնդկաստանի թեմի Առաջնորդ Գեր. Տ. Վահան Խաչիսկոպոս Կոստանյանը խնդրել է թույլատրել ներգաղթի հետևանքով թափուր մնացած եկեղեցական ու դպրոցական շենքերի և եկեղեցական հողամասերի վաճառումը: Գերագույն հոգմոր Խորհուրդը որոշեց խնդիրը հարգել և առաջարկել վաճառումը փոփացնելու:

Նույն թեմի Մարգարան Առաջնորդը հայտնում է, որ ձեռնարկել է փր թեմի եկեղեցիներում գտնվող ձեռագրերը, ինչպես նաև ներգաղթի հետևանքով մնացած եկեղեցական գույքը Առաջնորդարանում հավաքելու գործին՝ հետագայում Մայր Աթոռ փոփառելու նպատակով:

— Հարավային Ամերիկայից Դիարքեքիրյան եղբայրները հայտնել են իրենց մտա-

դրությունը՝ Հայաստանում մի ընդարձակ մանարան կառուցելու իր սարքավորումներով և այն Հայաստանի կառավարությանը նվիրաբերելու մասին, խնդրելով Վեհափառ Հայրապետին կառավարության հաճությունն ստանալու: Հարավային Ամերիկայի Հայրապետական պատվիրակ՝ Գեր. Տ. Գարեգին արքեպիսկոպոսի միջոցով Վեհափառ Հայրապետը հայտնել է Դիարքեքիրյան եղբայրներին ՀՍՍՌ-ի կառավարության համաձայնությունը իրենց արած առաջարկության առթիվ:

— Վեհափառ Հայրապետի անունով Ամերիկայի Հայոց Բարեգործական Ընկերութեան ուղարկած 47 հակ՝ գործածված հագուստեղենը և կոշկեղենը, ինչպես նաև Հարավային Ամերիկայի ուղարկված 65 հակ հին ու նոր հագուստեղենները ու կոշկեղենները ստացվել են և Վեհափառ Հայրապետի հաճությամբ հանձնվել ՀՍՍՌ-ի կառավարությանը՝ կարիքավորներին բաշխելու համար:

Ս. ԳԵՎՈՐԳ ԶՈՐԱԿԱՐԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ Ս. ԷԶՄԻԱՇԽՆՈՒՄ

Աշնանալին առավոտ է. ամպամած երկրությոց լեղմորեն մաղում է անձրնը: Բազմաթիվ տղամարդիկ ու կանայք շտապում են ժամ առաջ հասնել սուրբ Էջմիածնի վանքը, հայ հավատացյալների հինավորոց պատմական սրբավայրը:

Ս. Գեորգ զորավարի տոնակատարության օրն է: Այդ օրը առավոտյան ժամը 9-ից ուստավորների խոտոներամ զարանը դիմում է գետի Ս. Էջմիածնի տաճարը: Տաճարում արդեն սկիզբ է ս. պատարագը: Վանքի բակում տիրում է աննկարագրելի խրախճանք:

Ովտակորների խուռն բազմության մեջ առանձնապես աշքի են ընկնում իրանից Մայր Հայրանիք վերադարձած հայերը իրենց վաղեմի հայկական տարագում: Դրանք այն հայերն են, որոնց պապերը Շահ Արքասի օրով գերմել են Պարսկաստանի խորգերը:

Օտարության մեջ տառապող այս ժամովուրդը զուրկ էր մարդավայել կյանքի պայմաններից: Ալժմ նրանք վախելում են Հարազատ պետոթյան հոգատար խնամքը: Նրանց մի մասը տեղավորվել ու վերաբնակվել է էլեմիածին քաղաքում ու շրջակայում:

Կանքի բակում եատվեռ է տիրում: Բազմաթիվ ուխտավորներ զոհ են մատուցում: Նրանցից շատերը ուխտ են արել զոհ մատուցել պատերազմից ողջ վերադարձ հարազատների համար, մայրեր՝ զավակների, քույրեր՝ եղբայրների, կանայք՝ ամուսինների ու զավակների՝ հայրերի համար:

Տաճարի ներսում պատարագից հետո հավատացյալ ժողովուրդը, երկրուկածությամբ մոտենում է Ամենայն Հայոց Հայրապետի՝ Տ. Տ. Գևորգ Զ. կաթողիկոսի աշը համբուրելու:

Տիկ. ՄԱՐԻ ՄԵԽԱՏՈՒՐ



ՊՈՂԱԾ ՍԹԵՔՑՈՒԻ ԿՅԸՆՔԸ ԵՎ ԴՐԱՄԱՆԵԱՒԹՅՈՒՆԸ

Իսկ որովհետև եւեայք նշան հայցեն և ներանոսք թմասառքին խնդրեն, մեր բարողեսուիք զիսաշիլեալն Քրիստոս, Երեխ գայրակղութին և ներանոսաց յիմարութին:

Առ Կորնելացիս Ա. թուղթ 122—23:



արմանալիորեն բեղմնավոր է եղել Պողոս առաքյալի կյանքը: Երիքտասաններորդ առաքյալ, Հեթանոսների առաքյալայսես են անվանում նրան, որն իր ամբողջ կյանքն անց է կացրել Հեթանոսների մեջ՝ նրանց դարձի բերելու համար. մի մըրկածին, ալեծուփ կյանք, լի ամեն տեսակի արկածներով. նեղություններով, դառնություններով, մինչև իսկ բազմիցն մահվան սպառնալիքի ենթակա, բայց առանց ընկճան, լրման ու հուսահատման: Այն նոր ժիմաստունական ուսմունքի սկզբունքները. որին ամբողջ հոգով ու սըստով նվիրվում է նա իր նշանավոր դարձից հետո, միշտ էլ ովառել ու պահապան հրեշտակի դեր են խաղացել նրա համար մինչև իսկ տանշանքների գագաթնակետին հասած ժամանակ: Որքան ավելի է շատանում փոքրությունը, հակածանքը, նա առավել համարձակությամբ ու համառությամբ է քարոզել տկում Քրիստոսի վարժապետությունը և պիրճախում ճարտարությամբ ու զորեղ տրամադրնությամբ իր քարոզած սկզբունքները պաշտպանում: Թե՛ թագավորի, թե՛ զինված հոգմայիցի հազարապետների ու հարյուրապետների, թե՛ կատաղած, մոլիուանդ հրյա ամրոխի, թե՛ Աթենքի այն ժամանակվակիրի հասարակության ու փիլիսոփաների առաջ, և թե՛ ցամաքի վրա կամ նախարհեկության պահին մրրկալի Միջերկրականի կատաղի ալիքների վրա, նա միշտ նույնն էր, երբեք իրեն շղավաճանող, նույն բյուրեղային համոզմունքների տեղ Պողոսը: Իր անձնական գեղեցիկ օրինակով նա բարձրապատկում էր իր քարոզած սկզբունքների վեհությունը, նա շերմ հավատացյալ էր, սիրու

շտեմարան, ամեն տեսակի առաքինության ու բարեկործության պաշտպան, սրբակենցաղ, աշխատանքի սիրահափ, ծույղերին ու դաստիքապորտուներին խարազանող, ընտանեկան մաքուր կյանքը գովերգող, կանանց, ժառանների ու ստրուկների պաշտպան:

Պողոս առաքյալն իր բնական մահով մտեափ:

Նրա քարոզներն այնքան վեհ ու նոր էին, որ նրա մահվանից հետո չին կարող անուշադրության, մոռացման ու մահացման ենթարկվել: Պարարտ հողի մեջ նետած առողջ սերմերի նման այս նոր ուամունքը արմատավորվեց և բոլոր խոշնդուները հաղթահարելով շորբորդ դարու սկզբին դարձավ այն ժամանակվա առաջավոր մարդկության պետական պաշտոնական կրոնը: Այսպիսով թեպես Պողոս առաքյալն իր քարոզած ըսկզբունքների համար նահատակվեց, բայց թողեց մի անժոռաց անուն, որ ահա 19 դար շարունակ փայլում է մարդկության լավագույն անունների կողքին: Այդ իսկ պատճառով արժեք ծանոթանալ քրիստոնեության այս ժրաշան ծանկի կյանքի ու գործունեության հետ, որի համար աղբյուր կարող են ժառանակի Գործք Առաքելոցն ու հենց իր Պողոս առաքյալի թղթերը:

Պողոս առաքյալի սկզբնական անունը Սավուս էր: Առաջին անգամ նրա մասին Գործք Առաքելոցում հիշվուած է, եղբ պատճառով է Ստեփանոս նախավիկայի քարկոծուածը: Քարկոծուածներն իրենց շորերն ի պահ են թողնում մի երիտասարդի մոտ, որի անունն էր Առվուղ: սա եկմ կողմանակից էր նրա սպանմանը: Եղբ նրուսաղեմի նոր կազմված քրիստոնյա համայնքի գեմ մնա համածանք է մկանուած, այս Սափուղն էր հենց, որ տնեւառու մտնուած, նորահակառ

տղամարդկանց ու կանանց դուրս քաշում, տանում ու բանոն էր նետում, Դրանով լրավականանաւով Սավուղը հրեց քանանայապեսից մի գրություն է վերցնում Դամասկոսի հրեաներին ուղղված և ուղևորվում Դամասկոս, որպեսզի թե այստեղ և թե ճանապարհին ճանդիպած հավատացյալներին ձերքակալի ու նրուսաղեմ բերի, Դամասկոսի մոտ, երբ դեռ նա քաղաք չէր մտնէ, ճանկարծ նրա շուպը երկնքից լույս է փայտակում: Գետնին փուլելով Սավուղը լըսում է մի ձայն, որ նրան ասում էր.

— Սավուղը, Սավուղը, ինչու ես հալածում ինձ:

Սավուղը երկուղած հարցնում է.

— Ո՞չ ես, Տե՛ր:

Զայնը պատասխանում է.

— Ես այն Հիսուսն եմ, որին դու հալածում են, ե՛լ, կանգնի՛ր և մտի՛ր այս քաղաքը ու քեզ կասպի, թե ինչ պետք է անես:

Ողեկիցները անշղանչ նույնպես լսում էին ալու ձայնը, երբ Սավուղը գետնից բարձրանալով շուրջն է նայում, զգում է, որ կուրացել է: Ուղեկիցները նրա թևերից բռնած Դամասկոս են մտնում: Երեք օր այսուղ մնալով նա ոչ՝ տեսնում էր, ո՛չ ուտում և ո՛չ էլ խմում: Դամասկոսում ապրող Անանիա անունով մի հավատացյալ աշակերտի Տիրոց Գործից տեսլյան մեջ ցուցում է արքում, որ գնա Ռևիլի փողոցի Հոռացի ապարանքում իշխանած տարսունացի Սավուղի մոտ: Անանիան առ այս ասում է.

— Շատերից եմ լսել, այդ մարդու մասին, թե որքան շարիք է հասցրել քո հավատացյալներին երուաղեմում: այստեղ էլ եկել, է քանանայապետի հրամանով, որպեսզի ձերքակալի բոլոր նրանց, որոնք հավատում են քեզ:

Տիրը նրան ասում է.

— Գնա՛ դու, ինձ համար նա ընտրության անթ է, թող կրի իմ անունը հեթանուների, թագավորների և նարայիշի որդիների առաջ, իսկ ես ցուց կտամ նրան, թե որչափ պիտի շարշարի իմ անվան համար:

Անանիան գնում, գտնում է Սավուղին և ձեռքը նրա վրա դնելով ասում է:

— Սավուղ նզրա՛լը, վեր նայի՛ր, ինձ ուղարկեց Տե՛րը, այն Հիսուսը, որ ճանապարհին երեաց քեզ: դու կտեսնես և կւցիս Սույրը հոգով:

Սավուղի աշքերն անմիջապես բացվում են, նա ուժի է կանգնում և մկրտվում: Մի բանի օր Դամասկոսում հավատացյալների մոտ մնալու հնատու, նա շուտով ըս-

կում է ժողովրդի մեջ բարողել, որ Թրիստոս Աստուծո Որդին է: Նրան լսողները ապշած հարցնում էին միմյանց, թե միթե սա չէր, որ երուսաղեմում բռնանում էր նրանց նկատմամբ, ովքեր Հիսուսի անունն էին տալիս և այստեղ էլ նույն նպատակով էր եկել, որպեսզի հավատացյալներին ձերքակալի, Երուսաղեմ տանի ու քանանայապետի ծեռոքը մատնի: Խոկ Սավուղուը (դարձից հետո միաժամանակ Սավուղը Սավուղու էր կոչվում) շարունակում էր Դամասկոսում ապրող հրեաներին քարոզել Քրիստոսի ուսումնքը:

Բավական ժամանակ անց հրեաները մըտադրվում են նրան սպանել: Սավուղու նորադարձ աշակերտները նրա կյանքը փրկելու համար դիշերով քաղաքի պարփակներից վանդակով ցած են իշեցնում նրան ու փախցնում: Սավուղու գալիս է Երուսաղեմ: Նա աշխատում էր միշտ հավատացյալների շրջանում լինել, բայց ամենցն էլ վախենում էին նրանից, չեխն հավատում, թե Քրիստոսի աշակերտ է դարձնել: Բայց Բառնաբասը, որ Հիսուսի աշակերտներին ամենաաջին հարողներից մենքն էր, Սավուղը ծեռոքից բռնելով բերում է առաքյալների մոտ ու պատմում նրանց Դամասկոսի ճանապարհին պատահած դեպքը և այն մասին, թե ինչպես հենց Դամասկոսում Սավուղու համարականություն է առնում և ակսում քարոզել Հիսուսի մասին: Այնուհետև Սավուղուը միշտ առաքյալների հետ էր և շարունակ Տիրոց մասին էր խոսում ու հույների հետ միջնորդ: Վերշիններու էլ են խորհում սպանել նրան, բայց հավատացյալ եղբայրները իմանալով այս բանը, նրան տանում են Պաղեստինի Կեսարիան, իսկ այստեղից էլ Տարսոն՝ իր ծննդավայրը:

Մինչ այդ, Ստեփանոսի նահատակությունից հետո, շրջակա իրկրներում ցրված հավատացյալները շարունակում են քարոզել Ժողովրդին և ավետարանել Տե՛ր Հիսուսի մասին: Նրանց գործն այնքան հաջող է բնախանում, որ առաքյալներն անհրաժեշտ են համարնամատուկ հատուկ մի մարդ տւղարկել Անտիոք մերքանատու լինելու դրան: Այդ մարդը Բառնաբասն էր: սա Անտիոք հասնելով ու տեսնելով, որ Տիրոց հավատացյալների թիվը անշափ շատացել է, սաստիկ ուկախանում է: Ապա զգալով Սավուղուի բացակայությունը, ուղերձվում է Տարսոն, գրտենում նրան այստեղ ու նրա հետ միասին վերաբերնում Անտիոք Մրանք եղմուսում մի ամրող տարի մնում են Անափորում և անդապար ուսուցանում ժողովրդին ու առաջին

անգամ այստեղ նորադարձ հավատացյալ-ներին բրիսուունիս անվանում, Այդ ժամանակները մեծ սովէ էր տիրում աշխարհում, Անտիոքի հավատացյալներն օգնություն են կազմակերպում Հրեաստանում բնակվող ի-

ՍԱՎԴՈՍԻ (ՊՈՂՈՍԻ) ԱՌԱՋԻՆ ԱՌԱՋԵԱԿԱՅԱ

Այստեղեւ Անտիոքի ազդեցիկ հավատացյալները որոշում են, որ Բահնարասն ու Սավդոսը զնան և ամենուրիք քրիստոնեություն բարողնեն, Նրանք երկուով նախ զնում են ծովափնյա Սելնկիա քաղաքը, իսկ ապա այստեղից նավում են Կիպրոս, Կիպրոսում ճանապարհորդիք Սավդոսն արդեն սկսում է անվանվել Պավլոս-Պողոս, երբ հասնում են Պիսիդիայի Անտիոքը, հրեից ժողովարանում Պողոսը մի ոգեշունչ ճառ է արտասանում, Համառոտավի հիշեցնելով հին ուխտից նահապետների, մարդարների ու թագավորների կանխագուշակությունները գալիք Փրկի մասին, բացատրում ու պարզաբանում է, որ այդ Փրկիը Հենց Հիսուս Քրիստոսն է, որին հրեաները մոտ անցյալում Պիղատոսի ծեռով տարապարուց զատապարտեցին, իաշլեցին ու թաղեցին, բայց Աստուած Նրան հարություն տվեց մեռելներից, շատերին երեաց նա և ամենից առաջ իր աշակերտներին, որոնք այժմ իսկ դրա վկաներն են ժողովրդի առաջ Այստեղեւն հորդոր է կարդում, որ հավատան Հիսուսին: Երբ դուրս են զայիս ժողովարանից, ժողովուրդը խրոնված Նրանց հիսուսից զնում ու խնդրում էր, որ երկրորդ անգամ ևս խոսեն: Պողոսն ու Թառնարասը Հարգելով ժողովրդի խնդիրը, հաջորդ շաբաթ օրը նորից գալիս են ժողովարան, որտեղ հավաքվել էր գրեթե ողջ քաղաքը. Հրեաներն այս ահազին ամրոխը տեսնելով նախանձից դրդված սկսում են հակածառել Պողոսին և նույնիսկ Հայոյին Բայց Պողոսն ու Բառնարասը աներկյուղ ու համարձակ ասում են Հրեաներին.

— Նախ ձեզ մոտ պիտի ասվեր Աստուծո խոսքը, բայց բանի որ դուք մերժում եք և ձեզ արծանի շք համարում համբաւենական կյանքին, մենք էլ այստեղեւ մեր քարոզությունն ուղղում ենք դեպի հեթանուները:

Հրեաները քաղաքի ազգեցիկներին ու պաշտոնյաներին գրգռում են Պողոսի և Բառնարասի դեմ ու Հայածանք Հարուցում. սրանք էլ զայրացած թույնում, հետանում են քաղաքից և գնում եկոնիս: Այստեղ էլ սկսում են ժողովրդին ավետարանել և Տեր Հիսուսի մասին խոսել: Հրեաներից ու Հույ-

րենց եղայրակիցների համար, այդ գործը հանձնելով Բառնարասին ու Սավդոսին, որոնք ծրուադիմ մեկնելով կատարում են իրենց վրա դրված պարտականությունը ու ապա նորից վերադառնում Անտիոք:

ՔԱՐՈՉՁԱԿԱՅԱ ՃԱԼԱՌԱՌՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Ներից շատերն ընդունում են նրանց քարոշությունը, երկար ժամանակ նրանք հազորություն նն ունենում այստեղ: Բայց այստեղ էլ Հրեաները հեթանուներին գրգռում են Պողոսի ու Բառնարասի դեմ, Ժողովրդի մեջ հերձված է ընկնում. մի մասը հրեաների կողմն է անցնում, մյուսը՝ առաքյալների: Վերջում հակառակործները, հրեաներն ու Պողոսը մի ժամանակ մարդկաների նրանց Առաջապահները մարդկան աշխատանքների մասին գործը հաջորդած է Դիլրի քաղաքները և այստեղ շարունակում իրենց առաքելական քարոզությունը: Սակայն նրանց գործը հաջող է զնում, որովհետեւ երբ առաքյալներին հաշովում է մի կաղ մարդու բժշկել, ամբողջ քաղաքը նրանց աստվածների տեղ է ընդունում և պատրաստվում աստվածավայել դիմացիցները: Բառնարասն ու Պողոսը հազիւկացանում են նրանց այդ մտադրությունից ետ պահել ու հասկացնել, որ իրենք էլ նրանց նման մահանացու մարդիկ են և եկել են միայն Աստուծու խոսքը քարոզելու և Տեր Հիսուսի մասին ավետարաններու:

Երբ այս երկու առաքյալներն շրջելով ուսուցանում էին, Անտիոքից և Եկոնիսից դաշիս են մի խումբ հրեաներ, որոնց հետ առաքյալները համարձակորդն վեճի են բռնվամբ, Եկոնիներին հաշողվում է ժողովրդը իրենց կողմը գրավել՝ առաքյալների քարոզածները սուս հայտարարելով: Պողոսը քարկոծվում է մահացած համարվելով պարագաներից դուրս է նետվում: Պողոսի աշակերտաները նրան գոնելով նորից քաղաքը են բերում, որտեղից վաղ առավտյան Բառնարասի հետ միասին հանապարհում են Դիլրի: Ավետարանելով այս քաղաքում և շատերին հավատացյալ դարձնելով, վերագրանում են նրանք Լյուատրա, Եկոնիսուն և Անտիոքիա: Այստեղ նրանց հաշողվում է հավատացյալների նոր համայնքներ կազմել և նրանց համար երեցներ ձեռնադրել, որպեսզի իրենց գործը շարունակին: Ապա շրջելով Պետիգիայի, կողմը անցնում են Պամփիլուս: Պերգեում քարոզելուց հետո իշնում են Աստալիս, որտեղ նաև նստելով ուղևորվում են Սելևկիա ու այստեղից էլ նորից Անտիոք, որտեղից ուղարկվել էր այս առաքելական պողումի համար, որ

Են հաջողությամբ կատարում են, ամենուրեք շեշտելով, թե հեթանոսների առաջ և սրացվել են հավատի դրսերը, Միաժամա-

նակ նրանք մնում են Անտիքում ու բարոզական նպատակով շրջում իրենց աշակերտների հետ:

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԳՈՂՈՎ ԵՐՊԻՍԱՂԵՄՈՒՄ

Այդ օրերին Հրեաստանից մի քանի հոգի Անտիք գալով առում են, թե հեթանոսները քրիստոնյա դառնալիս պետք է անպայման թլպատվեն Մովսեսի դրած օրենքի համաձայն: Եվ որքածեու այս խնդրի ջուրջը վեհափեց մի կողմից Պողոսի ու Բառնաբասի, իսկ մյուս կողմից Հրեաստանից եկած անձանց միջև, դրա համար էլ որոշվեց, որ Պողոսն ու Բառնաբասը և մի քանի այս մարդիկ վնան նրուսաղեմ, առաքյալների ու տեղի երեցների հետ միասին այդ իրենց դրսի վերջնականապես լուծելու: Անցնելով Փյունիկիայով և Սամարիայով նրանք հանում են նրուսաղեմ, որ փառափոր կերպով ընդունվում են ամբողջ գրիստոնյա համայնքի կողմից՝ Քրիստոսի առաքյալների ու երեցների գլխավորությամբ: Պողոսն ու Բառնաբասը մանրամասն պատմում են հեթանոսների շրջանում կատարած իրենց գործունեաթյան մասին, բայց փարիսեցիների հերձվածից նորադարձ հավատացյալները պահանջում էին, որպեսզի հեթանոսները քրիստոնյա դառնալիս անպայման թլպատվեն ու Մովսեսի դրած բողոք օրենքները կատարեն:

Այս առթիվ Քրիստոսի առաքյալներն անհրաժեշտ են համարում մի ժողով գումարել:

ԳՈՂՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՔԱՐՈՁԳԱԿԱՆ ՃԱՆԱԳԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Պողոս առաքյալը որոշում է մի շրջագայության կատարել իր հառուտառած համապատասխան համար: Այս նպասակով իր հետ վերցնում է Շիղային ու Անտիքից ճանապարհ ընկնուած Աստվիքի ու Կիլիկիայի կողմերը, ուր ընդարձակուած է առաջուց հիմնած համայնքները: Ապա վճռում են Դերբե և Լյուստրա, որտեղից իրենց հետ վերցնելով Պողոսի նախկին աշակերտը Տիմոթեոսին, որոշում են առանց որեւէ տեղ կամ գառնելու Փյունիկիայի և Գաղատիայի վրայով անցնել Տրոյադա և այնտեղից էլ Մակետոնիա, Կողովնիա քաղաքում մի քանի օր գաղար են առնում: Այստեղ կիդիա անունով մի ծիրանավաճառ կին առաջինն ընդունում է Պողոսի քարոզությունները, հավատում ու մկրտվում: Բայց այստեղ էլ հակառակորդներ են հայտնվում, որոնց նյութական շահերին սպանում էր նոր կրտնը: Սրանք բռնելով Պողոսին ու Շիղային, քաշ են տալիս հրապարակը, քաղաքի մեծամեծների ու զորագլուխների մոտ և մեղադրում, թե սր-

երուաաղեմում՝ հարուցված վեճը վերջնականապես լուծելու համար: Այս առաքելական ժողովը գումարվում է 52 թիվն: Ժողովում Պետրոս ու Հակոբոս առաքյալները հանդիս գալով պաշտպանում են այն միտքը, թե հեթանոսությունից դրած օրենքները կատարեն, որովհետև Հիսուսին հավատալով ու մկրտվելով, նրանք բոլորովին արդարանում են, հետևապես և նոր պարաւագործթյուններ չպետք է դրվեն նըրանց վրա, այլ պետք է միայն պատվիրել, որ հրաժարվեն մի քանի հեթանոսական սովորություններից, կուտքերի անունով զուված մսից, արյունից շաշակեն և պոնըկովից հեռու մնան: Այս իմաստով ժողովի կողմից մի թուղթ է Հղում Անտիքի: Սիրիայի և Կիլիկիայի հեթանոսությունից քրիստոնյա գարձածներին ուղղված: այս թուղթը ժողովի կողմից Հղում է երկու հոգու՝ Հոգու և Շիղայի միջոցով: Արանք միանալով Պողոսին ու Բառնաբասին, մեկնում են Անտիք և այստեղ նորադարձ համայնքների դրազեկով թղթի բռնադակությանը՝ մեծապես միթթարում նըրանց:

Պանք խոռվություն են բարձրացնում քաղաքում ու իրենք հրեա լինելով, մեզ մի նոր կրտն են քարոզում, որը մեզ համար անցնուածնելի է, քանի որ մենք համայեցի ենք: Ժողովությունը խոնվում է նրանց գլխին, իսկ զորագուխները հրամայում են ծեծել ու բանտ նետել, և աշարջությամբ հսկել: Պողոսը և Շիղան գիշերն աղոթքով են անցկացնում, որին ունինքրում են նաև բանտում եղած կալանավորները: Հանկարծակի երկրաշարժից բանտը հրմաց շարժվում է և նրա գոները բացվում են, բայց Պողոսն ու Շիղան շին փախչում: այս գեպքից զարմացած, բանտապետը նըրանց սրբի տեղ ընդունելով հավատում է նրանց քարոզած Հիսուս Քրիստոսին և մկրտվում իր տան բոլոր անդամների հետ միասին ու նքանց էլ փոխարքում իր տունը և պատվում: Առավոտյան զորագլուխները մարդ են ուղարկում քանտակեանի մոտ, որ Պողոսին ու Շիղային պատ արձակեն, բայց Պողոսն իր արժանապատվությունը պահպանով առում է:

— Մեզ, անմեղ հոռմայեցիներիս հրապարակով ծեծեցին, բանտ նետեցին և այժմ էլ ուսւ ու փուս ուզում են բանտից հանել. ոչ այդպիս չենք ուզում, թող գան և իրենք հանեն մեզ բանտից:

Նրբ զորագուխները լսում են, որ նրանք հոռմայեցի են, այսինքն հոռմեական կայսրության քաղաքացին, որոնց հոռմեական օրինքով իրավունք չունեին ծեծելու, սաստիկ վախինում են և գալով, խորապիս ներդրություն են խնդրում ու աղաշում, որ հեռանան իրենց քաղաքից:

Հեռանալով Կողովնիայից նրանք հասնում են Թեսաղոնիկի: Այսուղ ըստ սովորության Պողոս առաքյալը մտնում է հըրեաների մոտ և ս. Դրբի վրա հենվելով ապացուցում, որ խոսուացված Մեսիան՝ Հիսուս Քրիստոս եկել է և մարդկանց փրկելու համար շարշարմել, թաղվել ու ապա հարություն առել. հրեաներից ոմանք, իսկ հիթանոսներից շատերը հավատում են նրան: Ազդեցիկ հըրեաները նախանձից դրդված խոսվում են ամբողջ քաղաքը և մտնելով այն տունը, ուր իշխանել էին նրանք, տակն ու վրա են անում, Պողոսին ու Եփային գործելու համար: Բայց շտանելով, տանտիրոջն ու հավատացյալներից ոմանց քաշ են տախիս քաղաքապետի մոտ և ամբատանում նրանց՝ թե կայսեր հրամաններին հակառակ են գործում, ասելով որ Հիսուս թագավոր է: Վտանգը կանխահաս համարելով, քաղաքի հավատացյալները գիշերով Պողոսին ու Եփային փախցնում են: Այնուհետև Պողոսին հանդիպում ենք Աթենքում, որ նա շարունակ հանդիպում ենք էր ունենում հրեաների ու հիթանոսների հետ ու նրանց Հիսուսի ավտարանը քարոզում: Հիթանոսներից շատերից հավատացյալ դարձնում: Այս օրերին Տիմոֆեոսն ու Շիղան Մակեդոնիայից գալիս են Կորնթոս՝ Պողոս առաքյալի մոտ: Սրանց գալուց հետո նա ավելի շատ է զրադվում քարոզությամբ: Բայց որովհետեւ հրեաների կողմից ընդմունյան է հանդիպում և նույնիսկ հայուանքի առարկա գատնում, զարանալով նզովում է նրանց ու երես գարձնելով՝ ամբողջովին շըշվում հեթանոսների կողմօ: Սրանց մոտ քարոզության վրձն այնքան հաջող է գնում: որ տարի ու կես մնում է այնտեղ և շարունակ ուսուցանում: Այնուհետև Պողոս առաքյալը նավում է գեպի ծփեսու՝ այդ շըշանի իր հաստատած նորադարձ համայնքներն այցելու համար: Այստեղ տեսնվում է տեղի հրեաների հետ, նորմա աղալում են նրան, որ երկար մնա իրենց մոտ, բայց նա առամապես հրաժարվում է, խոստանալով հետագայում նորից այցի գնալ: Եփեսուից անցնում է Կեսարիա, այնտեղից էլ Անտիոք:

— Մեզ, անմեղ հոռմայեցիներիս հրապարակով ծեծեցին, բանտ նետեցին և այժմ էլ ուսւ ու փուս ուզում են բանտից հանել. ոչ այդպիս չենք ուզում, թող գան և իրենք հանեն մեզ բանտից:

Կրկու բառը բնաբան ընտրելով, նա հայտնում է, որ ինքը եկել է Հենց այդ Անծանոթ աստծու մասին խոսելու. ապա նա բացատրում է միաստուածության գաղափարը՝ նշավակելով ճարտար մարդկանց ձեռքով շինված մեջաների ու կուռքերի ստուփ պաշտամունքը և հորդորում դառնալ կեափի կենդանի Աստված, դեպի բոլոր արարածների Արարիլը, որն իր որորուն ուզարկեց աշխարհը փրկելու և համբատենական գատապարտ ությունից ազատելու. մարդիկ խաչեցին Փրկչին, բայց Աստուած Հարություն տվեց նրան մեռելներից: Երբ ունկընդիրները լսեցին մեռելների հարության մասին, պկացեցին ժաղորել նրան:

 - 5 չան հրեայք եւ ասեն. ի վերայ
 - 6 Ախազու ասացաւ բանդ վասն
 - 7 նզեկիա. Արդ եկ ընթերց
 - 8 ցուք զգիրս. խնդրեա դու քեզ
 - 9 նշան ի տէ այ քոմմէ. կամ
 - 10 ի խորութիւնս նամ ի ռառձրու
 - 11 թիւնս. նաեւ նշանս իսկ նոր
 - 12 աւրինակս ինչ սլաքտի երեւել.
 - 13 նշան չուրն որ ի վիմէն խոսե
 - 14 ցաւ. նշան ծովուն պատառ
 - 15 ել. նշան արեգականն անդ
 - 16 բէն յիստ դառնալ. եւ այս
 - 17 պիսի ինչոր յատնագոյն
 - 18 է. իրու ասի կարող ինչ
 - 19 յանդիմանել զհրեայսն ես
 - 20-25 կտրված է:
- 1 այլ
 - 2 յայտ է
 - 6 բանդ այդ
 - 7 եղեկիայ
 - 9 ի տեսանի. Աստուծոյ քոմմէ ասէ.
 - 11 նաեւ նշանն
 - 12 օրինակ, երևել
 - 13 հոսեցաւ
 - 15 անդրէն լունի
 - 16 դառնալն, ե
 - 19 ի. փոխ ես

Երկրորդ պահպանակ առաջին երես առաջին սյունյակ պատկ. 4^{**})

Տպագիր (տպ. եր. 231):

*) Լուսանկարը փոքր է ընազրից:

**) Բնագրի մեծութունն է 20,8 × 8,8 սմ., բայ
լուսանկարը քիչ փոքր է՝ 15 × 8,5 սմ.:



Պատկեր 4

Բնագրում ձախ սյունյակի մեծությունը $20,8 \times 8,5$ սմ
Լուսանկարում նույնը $15 \times 6,5$ սմ

- 1 ընդ մեղ զերեսում եւ երիս ամս .
 2 Արդ եթի պարծանո եւս ունի
 3 ցին կուսանք. վասն ինն ամ
 4 սեա ժամանակին առաւել եւս
 5 ունիմք վասն բազմամեա ժա
 6 մանակացս. արդ ամենեքեան (վերջինուն
 վերև գրուած և փոքր)
 7 զորրովթեան ճանապարհաց
 8 շնորհաւքն այ զնթացսն
 9 ընթացուք. երիտասարդք
 10 եւ կուսանք. ծերք եւ տղա
 11 յթ. մի ի ցանկութիմս ինչ
 12 պատրեալք. այդ յաւդ հնու
 13 թիմս կանխեալ անուանն տն
 14 մերոյ յի քի. մի տգէտք լի
 15 նիցիմք սրբութեանն. փա
 16 ուաւորութեանն. զի հրշտա
 17 կական են պսակքն. եւ հրշտ
 18 ակաց է աշողութիւնն.
 19 Ախալեսցուք ի մարմինս
 20 մեր. որ ժագելոցն են ի թեւ
 21—25 կորված
- 1 և զերիո
 2 եթէ
 3 բազմամեայ
 8 շնորհօքն Աստուծու զընթացս
 9 ընթացարուք
 10 և , և
 12 այլ յօրհնութիմս
 13 կանխեալք անուան տեառն
 15 սրբութեան
 16 փառաւորութեան Հրեշտակականք
 17 և Հրեշտակաց է յաջողութիւն


Երկրորդ պահպանակ առաջին երես Երկրորդ սյունյակ պատկ. 4
 Տպագիր (տպ. երես 231)

- 1 ծեսց(ուց. Զի առ փոքր մի)
 2 ժամանակի են մեղք, և մշ
 3 տնշենա(որ են տանշանքն)
 4 եւ ամափն յ(աւիտենից. Զի)
 5 իբրեւ հրշտա(կք յերկրի ըր)
 6 շին սրբութե(ան մշակք)
 7 կուսանքն ընդ (աստուածածնին Մա)
 8 թեմայ ունին (զբաժինն. Թքեալ)
 9 եւ ի բաց ընկե(ցեալ լիցին ամե)
 10 նալն պաճու(ճանք զար)
 11 զարանաց. եւ ամենայն
 12 ակն յայրատա(բաց եւ ամե)
 13 նախն ճեմելի(թ ստորաքար)
 14 զք. եւ ամենա(յն պաճումանք)
 15 պաճումեալք (ամենայն)
 16 խունկը յուզ (ակք ցանկու)
 17 թիան. եւ մե(զ խունկ լիցին ա)
 18 նոշութեան եւ մեզ ազօթք սրբու
 19 թիան գործ(թ բարութեան, մարմ)
 20-25 նոց ս(բրութիմք զի որ ի կուսէ
 անտի ճնեալ է տէր ասացէ վասն ձեր,
 արանց սրբականաց կանանց պսակնոց
 թէ բն)
- 4 ամօթն
 7 կուսանք
 8 Մարիամայ
 9 տեա շոմի
 12 յարատարաց
 13 ստորաքարչ
 17 ցանկութեանց
 18 անուշութեան

Երկրորդ պահպանակ Երկրորդ երես առաջին սյունյակ պատկ 5 °)
 Տպագիր (տպ. երես 232)

- 1 ակեցից (ի նոսա եւ Ճե)
 2 մեցայց (առ նորօք և)
 3 եղէց նո(ցա Աստուած և ն)
- 1 բնակեցայց

*) Ճիշտակարանի բնադիրը $19,8 \times 5$ սմ., լուսանկարը՝ $15 \times 6,5$ սմ.



Պատկեր 5

Բնագիրը $19,8 \times 8$ սմԼուսանկարը $15 \times 6,5$ սմ

- 4 ոքա եղիցին (իմ ժողովո)
 5 լոդ. (նմա փառ ե)
 6 պատիւ յաւ(իտեանս)
 7 յափտե(նից ա)
 8 մ...

7 ամէն

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

- 1 ըքա ալս
 2 զապետին
 3 ացույ
 4 ամիս հայոց
 (կտրված տողեր)

- 1 գրչի գրել ի մատն
 2 նիս յայսմ զսուրբ
 3 եւ զտենշալի եւ
 4 զհոգետովիլ բանքս.
 5 Արդ աղաջեմ զնթեր
 6 ցաւադ եւ զլսաւդսդ.
 7 յորժամ ընթեռնուք
 8 զստացաւդս սորա զտր
 9 Գուրգէն Արծրունի եւ
 10 զորդի իւր Ասում յիշ

Համեմատությունը ցույց է տալիս, որ մեծ տարբերություններ չունի հատակուտորը տըպագրվածից, բացի ննշունաբանության և ուղղագրության մի քանի երևույթներից, ինչպես դի և լ-ի, թի և գ-ի, ֆ-ի և է-ի նշանակված բառերի մեջ։ Ապա բարբառական ազդեցություն պիտի համարել խոսեցավ՝ փոխանակ նոսեցավ-ի անջուրյան փոխանակ անուշության։

Ուզագրության արժանի են զնթացն (պատկ. 4) և զնթերցաւզսդ (պատկ. 5) ընթերցուածները առանց ը-ի։ Նման երևույթուրի հին ձեռագրերի մեջ էլ հանդիպել է մեզ, օրինակ՝ լոքնէ (Princeton թանգիրապատում)։

Ե

Մի քանի խոսք էլ հնագրական նշանակության մասին։ Սովորաբար այն կարծիքն է տարածված, թե հայ գրի ժագումն ու զարդացումն ընթացել է հնուելալ աստիճաններով։ Նախ՝ միջրոպայան կոչված գրերը, ապա բոլորգիրը և վերջապես նոտրագիրն ու շեղագիրը, Սակայն մեր գրչության իրական մացորդների ուստամնասիրությունը ցույց է տալիս, որ ալդպես չէ։ Նախ հայտններ, որ երկաթագրի բոլոր տեսակներն էլ, մեծ, միշին և փոքր, երևում են ձեռագրերի մեջ միւնույն ժամանակ, երբեմն նույն ձեռագրի մեջ, և պիսպիսությամբ։ Կա արկաթագրի բոլորաձեւ, ուղղանկյուն և թեք տեսակը, և երբեմն նույն ձեռագրի մեջ տարբեր տեսակները և ձևակերպությունները։^{*)}

Բոլորգիրը ըստ ձեռագրերի նույնշափ

^{*)} Տես մեր օթարուեղ հայ հնագրութեան, Զետ. № 229/2374, գլուխը կազմով ավետարանը, § 41, 42, 43, 44 տախտ. ից, իթ, իէ, իք § 37, տախտ. իզ։

Հին է, որչափ ներկաթագիրը, այսպես՝ Գելվորգյան ցուցակ 102 կամ 2679, որ 971 թվականի ձեռագիր է, նշանավոր է ոչ միայն յուր հնությամբ և բովանդակությամբ իրու ժողովածու, այլև նյութով, որ թուղթ է և ամենահինգ հայոց մեջ^{**})։ Բոլորգիրի երկու տեսակը կա, իրենց պիսպիսությամբ։ արծվելլյան, որ գործածական է արևելյան վանքերի մեջ և արևմտյան, որ կիլիկիայում և ավելի զարգանում և հետո նաև արևելք անցնում և կատարելապես իշխող դառնում, որ է և ներկա մեր տպագրության բոլորգիրը, երկրորդ հնագույն օրինակն ունինք դարձյալ թզի վրա 999 թվականից, բայց շեղագրին նմանություն քերելով։ Նմանահանությունը տալիս է Ալիշան յուր Այրարատի մեջ^{***})։ Ապա ունենք 1040, 1174, 1196, 1190 և այլն թվականով բոլորգիրներ^{****})։

Եթե շեղագրի հնագույն օրինակ չհամարենք Ալիշանի բերած նմանահանությունը, ունենք Փ. դարի վերջերից կամ ԺԱ-ի սկզբ ներից իսկական շեղագրի՝ Դրիգոր գրչի ձեռքով^{*****})։ Ունենք և շեղագրի արձանագրություններ Գագիկ Ա-ի ժամանակից 990-1021^{*****}), իսկ ձեռագրերի մեջ 1118, 1159,

^{*)} Անդ § 36, տախտ. իր։

^{**) Այրարատ 498։}

^{***)} Մեր աթարտեղ հայ հնագրութեան, ցուցակը պատկերների և պրակների թվականների համապատասխան տեղում։

^{****)} Անդ § 46, տախտ. իր։

^{*****)} Հշմիածնից—Աշտական հանսպարչին Թարգմանչաց վանքը վերա և Կատարանից թագուհու իաւարքաբը Դասնիում։

1211, 1215, 1244, թ. թ. Վերջինը Սմբատ Գունդստավլի ծեռքն է*).

Հայ գրչության ավելի հնագույն մացորդները ունենք վիմական արձանագրություններով, ինչպես՝ Օծոնի, Եղոարդի մեծ բազիթիկայի, Արագածի Ավանի, Պտղընի, Կարսի և Նախճավանի պատերի վերա Զ. գարից, իսկ է դարից՝ Կոմիտասի, Եղիի, Կոտայքի Ավանում և Բագրեանդի Ս. Հովհաննեսում, Ներսես պատրիկ Կամսարականի՝ Թալինում, Մրենի, Ալամանի, Բագրանի, Զվարթնոցի, որոնք սովորաբար մեսրոպյան խոշոր տառելով են գրված, բայց կան և միջին երկաթագրով, ինչպես Օծոնում և Պտղեվանքում, որոնք Զ. գարի առաջին տասնամյակի և երկրորդ ժառարդի գրություններ են։ Օծունում արևելյան լուսամուտի ճակատին մի քանդակ կա, որի կենտրոնում Հիսուսի անդրին է, բաց ավետարանը ձեռքին և վերանգրված է միջին երկաթագրով, իսկ ԶԲԱՆ է է՛լ ԲԱՆՆ և երկրորդ երեսում՝ ԲԱՆ է՛լ ԱՌ ԾԻ ԱՌԱՆ։ Իսկ Պտղղնիի եկեղեցին շինողի քանդակի տակ միջին երկաթագրով քանդակված է ՄԱՆՈՒԵՂ ԱՄԱՏՈՒԵՂ Տ է՛լ։ Զ. գարի գործ ենք հայ համարում նաև Արագածի Ավանի բազիլիկ եկեղեցու խոյակի արձանագրությունը։

ՔՍ ԱՌ ԱԽՐՃՆԵԱ(լ են ՑԱՒՏԵԱ) ԱՆ ՑԻՇ ԷՌՍ ԱՌՍ ՍԵԼ (ՔՓԱՆՈՍ Ի ՔՈ ԹԱԳ) ԱԽՈՒՇ-ԹԵԱՆ*).

*) Մեր «Նիւթեր» և Առավելասերութիւններ Հայ, արձամուի և մշակութի պատմութեան, պրակ. Գ., Նյու-Յորք, 1944, էջ 14, 22, 36, պատկ. 14։

**) Քարտեղ Հայ հնագրութեան, թվականները համապատասխան տեղում։

Այս տեղեկությունները հիշում ենք, որ պիտի ցույց տանք, որ բոլոր տեսակներն ել հին հն, որոնց տվյալները տեսանք, բացի նոտրադրից։ Հայ գրի զարգացումը ոչ թե մի տեսակից մյուս տեսակին է անցնում, այլ տեսակներն իրենց պիտի սուլթյուններն ու զարգացման ընթացքն ունին Գրչության արվեստի պատմության մեջ, որի մասին մեր տեսությունն ու Հիմնավորումը, Հուսանք, թե պիտի հաջողվի կարճ ժամանակից հետո մատշվի դարձնել բանասիրության։

Տարաբախտաբար ավելի հին, քան 887 թվականը ձեռագիր շունենք, ուատի և Հայտնաբերումը այս հատակուտորի ժամանակակից կամ թիշ ավելի հին, ունի իր արտաքության ամեարանի ավետարանը և Լազարյան ճեմարանի ավետարանը բոլորածե երկաթագիր է, իսկ մեր հատակուտորը ուղղանկյուն և միջին երկաթագիր, այսինքն մի նոր ապացույց վերը հիշված մտքերի։ Անզուշտ կան ուղիղ հատակուտորներ շատ ավելի հին։ Հայ բանասիրության առաջ մի նոր փնտիր է գրվում։ Հետամուտ լինել հատակուտորների կամ կրկնագիրների ուսումնասիրության, որպեսզի Հայ գրի զարգացման մի մեծ բացարձություն գոցել կարողանանք, վիճական արձանագրություններով այդ բացը լիովին լցնել կարելի չէ, ոչ այն պատճառով միայն, որ ութերորդ դարը զատ ամուկ է արձանագրություններով, այլ և որովհետեւ տարբեր են արձանագրությունների և ձեռագիրների գրչության նյութն ու գրության եղանակները։

ԴԱՎԻԹ ԲԱՂԻՇԵՑՈՒ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐԺԵՔԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

§ 1. Հայ ժողովրդի պատմության ո՞ւ մի ժամանակաշրջան աճնքան անմշակ չէ, որքան 15-18-րդ դարերի միջև ընկած շրջանը:

Լենկ-Թեմուսի արշավանքից հետո, կարծես, կտրվում է մեր պատմության թեկը և հայ ժողովրդի հնտագա զրշանի պատմությունը գաղարում նախորդ շրջանի պատմության օրգանական շարունակությունը լինելուց: Դա այնքան սովորական է դարձել, որ այդ մասը հայոց պատմության որոշ դասընթացներում ուղղակի դուրս է նետվում և հայ ժողովրդի հին ու միջին դարերի պատմությունը հասցրվում է մինչև 15-րդ դարը և այստեղ էլ վերջակետ դրվում:

Ինչ որ արհամարական վերաբերմունք գլուխյուն ունի նաև այս շրջանի աղբյուրների նկատմամբ: Այն ժամանակ, երբ հին շրջանի և վաղ միջնադարի բոլոր հայ պատմագրերը հրատարակվել են, կամ անգամ այնպիսի մատենագրեր, որոնք հրատարկված են 40-50 անգամ (Եղիզե, Նարեկացի և ուղիղներ), 15-18-րդ դարերի պատմական սկզբնաշրջուրների մեծ մասը դեռ սպասում են հրատարակության հերթում: Ճիշտ է, այս շրջանի պատմագրները մանր են և նրանց նկարագրած ժամանակը պատմական շատ կարճ ժամանակաշրջան է ընդգրկում, բայց այնուամենայնիվ, նրանք կան և արժեքավոր են իրենց նկարագրած ժամանակաշրջանի համար: Այդ շարքի մանր պատմագրներից կարելի է հիշել Խաչատոր Կաֆայցուն, Կիրակոս Թանասերին, Օթեմիա Թոլյուրճյանին, Ստեփանոս Դաշտեցուն և ուրիշներին: Արժեքավոր են նաև ուշ միջնադարից մեզ հասած հաղարավոր հիշատակարանները, ուրիշ մեծ մասը նույնպես չեն հրատարակված:

Ուշ միջնադարի աշխաթող արված այս ժամանակների շարքին է պատկանում մեր ուսումնասիրության նյութ հանդիսացող բանա-

սեր Դավիթ Բաղիշեցու ծաղկաբաղ տարեգրությունը:

§ 2. Նախ մի քանի խոռոք Բաղեշի և նրա գրչության գպրոցի մասին:

Բաղեշն առաջին անգամ մեր մատենագրության մեջ հիշվում է Սներեսոսի մոտ^{*)}): Բաղեշն, ինչպես պարզվում է, պատմական և երեխն է: Այդ երեսում է Վարդան Բալվերցու որոշակի մի տեղեկությունից՝ որի առնված 1680 թվին: Նա իր թողած հիշատակարանում հայտնում է, որ իր ձեռագիրը «Դրեալ եղել ի Բաղեշ... որ ըստ Թերթողին Մովսէսի՝ և երեխն անուանի^{**}») Այնպես որ Հյուրշմանի կասկածներն այն մասին՝ թե Բաղեշը Աղձնիքի^{***} մասն է կազմել, թե Բզնուաց, այժմ արդեն փարատված պիտի համարել^{****}): Եիրակացու «Աշխարհացոյց» ում Բաղեշը հիշված է և երեխն ձևով, իսկ սա Աղձնիքի գավառներից մեկն է հանդիպացի^{*****}):

Հետագա մատենագրներից Բաղեշն ավելի որոշակի ձևով հիշում է Թովմա Արծրունին: Նա խոսելով Աշոտի (Վասպուրականի իշխանի) տարած հաղթանակի մասին արարական զորքի վրա, նշում է, որ հայոց զորքերը թշնամուն հետապնդեցին մինչև ոշահաստան Բաղեշը^{*****}): Բաղեշի ոշահաստան ձևով հիշվելու ինքնին ցուց է տակիս, որ նա 10-րդ դարում Հայաստանի վաճառաշահ քաղաքներից մեկն է հանդիսացել:

Հետաղա մատենագրներից Բաղեշն հիշված

^{*)} Սերեսոս հպիսկոպոսի Պատմություն, աշխատ.

Ա. Մալիխասյանի, Օթևան, 1839 թ., էջ 142:

^{**)} ՀՍՍԾ Մատենադարան, № 6434, թ. 223ա:

^{***)} Հ. Հիւրշման, Հին հայոց տեղույթ անուններ, կիևնա 1907 թ., էջ 128:

^{****)} Տե՛ս Ա. Արքահամբայնի «Եիրակացու մատենագրություն», Օթևան 1944 թ., էջ 349:

^{*****)} Թովմա վարդապետի Արքունու Պատմութիւն տանը Արքունուաց, ՍՊԲ 1987 թ., էջ 110:

է Վարդանի ռԱշխարհացոյցը-ում, Բաղեշն, ինչպես երևում է, 18-րդ դարում Արծիկի, Խաթի և Հիզանի հետ միասին, թվում յաց շրջանի մասն է կազմել^{*)}:

Բաղեշը մեծանում և առևտրական խոշոր կենտրոն է դառնում հատկապես 17-րդ դարում: Գտնվելով տարածության ճանապարհների խալածնեման կենտրոնում և ափսիվ մասնակցելով փոխանակմանը, նա դառնում է հարավային Հայաստանի խոշորագույն քաղաքներից մեկը: 17-րդ դարում Բաղեշը էր անցնում Շիռհայից Դիարբեքիրի վրայով դիմակի և Թավրիզ տանձող ճանապարհը: Բաղեշով էր անցնուած Խարբեցուց Արևելյան Արածանիի վրայով Մուշ և Աղսելք զնացող ճանապարհը Եղի վերջապես, Բաղեշից էր անցնում Սպերդի վրայով Ակող և Վանա լճի հյուսիսով՝ Խաթի, Արծիկ և Թերկորի վրայով հյուսիսով՝ Ճայակ այնքան էր մեծացնել, որ որոշ ուժում անապարհ կարծիքով, ունեցել է մինչև 25.000 տուն բնակչություն՝ մեծ մասը հայ առևտրականներ և արևելյանացուներ, էփրիկյանը Բաղեշի մասին միազմավէպում տեղակրած իր հորդածում, հիմնվելով Հնագույն հիշատակությունների վրա, գրտնում է, որ Բաղեշը պի հնոց հայոց ճոխ և բազմամարդ քաղաքներէն մին եղած (չ^{**}): Բաղեշն առանձնապես հայտնի է եղել իր ներկած կտավով— ոչիւրայով, որը արտահանության գիտավոր ապրանքներից մեկն է հանդիսացել: Նա հայտնի է եղել նաև իր խեժով, մոմով, մեղրով և այլ ապրանքներով:

Ահա այս շրջանում է, որ Բաղեշում սկսել են ծաղկել հայ գրչության աշխ ընկնող օրինակները:

§ 3. Բաղեշի գրչության գարնոց հայ կուլտուրայի և մատենագրության կարևորագույն օջախներից մեկն է համեմատացել: Նա մեծ գործ է կատարել հայկական ճնուագերը Հավաքելու և լինորինակելու գործում: Կասկած լինել չի կարող, որ եթե պիտի Բաղեշի հայ գրչության դպրոցը, ապա հին հայկական մեր մի շարք յատենագրներ և ունիկում ձեռագերեր անհետ կողման կիմներն մեզ համար: Բացի ալդ, Բաղեշը ստեղծել է հայ մանրանկարչության օրիգինալ մի շկոլա և մեծ դեր խաղացել, ընդհանրապես, հայ մանրանկարչության զարգացման գործում:

^{*)} M. J. Saint Martin. *Mémoires historiques géographiques sur l'Arménie* T. II, Paris 1819, p. 428:

^{**)} էփրիկյան, Բաղէշ (տես «Բազմավեպ», 1901 թ., № 3, էջ 13—20):

Իրավացի է բանասեր Սառաֆյանը, երբ փր ոկտավորության պատմությունը անգլերին աշխատության մեջ նշում է, որ ՇԱՄԻ Դաղեշի Ա. Ա.) դպրոցը աշխի էր ընկնում XVII դարում, որպես խոշորագույն կենտրոն ուսումնակիրության... նա ուներ ձեռագերերի լավագույն ժողովածու^{*)}):

Բաղեշի գրչությունը կենտրոնացած է եղել, պիտի վանքության, լորս վանքերում՝ 1) Գոմանց կամ Տատրաքնակ Աստվածածնում: ուր գտնվել է Բաղեշի հոգեւոր առաջնորդարանը, 2) Խորիսակատար կորչող Աստվածածնի վանքում (ուր աշխի ընկնող ուսուցիչներից էին Խերոս Բաղեշցին, մյուս Խերսեսը, Կարապետը, Հերապետը, Պետրոս վարժապետը և ուրիշները), 3) Ավելիու կուլուգով Աստվածածնում և 4) Ամբրոգու վանքում: (Վերջինս իր ծաղկման շրջանն ապրեց 16-րդ դարի վերջից մինչև 18-րդ դարը: Նրա աշխի ընկնող գործիչներն են հանդիսացել Հովհաննես և Խաչատուր գիտուն մարդապետները, հանրածանոթ տաղասաց Վարդան Բաղեշցին և ուրիշները):

Մեր հեղինակի, Գավիթ Բաղեշցու գործունեությունը կապված է եղել Խնդրակատար Աստվածածնի գրչության դպրոցի հետ:

§ 4. Գավիթ Բաղեշցու անձնավորության մասին սակակնաշափ տեղեկություններ հասել են մեզ նա, ինչպիս երևում է իր կոչումից, Բաղեշից է: Ծնված պիտի լինի մեր հաշվով, 1610-1620-ական թիվունին: Հոր անունն է Ալեքսան, իսկ մորը՝ Խանաղի: Ունեցել է մի եղբայր (մահաւոք Մելիքսեփը) և մեկ քույր (Խաթունաղը), որոց հիշատակարաններում Բաղեշցու այս հարազատների շարքում հջոված է նաև նրա եղբայր որդին՝ Սահակո (ինը բան հիշվեմ հիշվում է Խոհակ ձեռվ) և նրա սժրոց աշակերտը— Ավետիս քահանան, որը հայտնի է Բանասեր մականունով: Բաղեշցու այս բարեկամական շրջանի մասին ուշագրավ տեղեկություն մեզ տալիս է Գրիգոր եղեցը: Դամբիթի պատվերով ընդորինակած ձեռագերի հիշատակարանում:

«Երբ գրեցաւ սա ի քաղաք Բաղէշ, — գրում է նա, — ըսդ Հովհաննեա... որբոց, որը աստ կան հաւաքեալ ի հնդույ սրբազն և քաշալաղթ փիլիսոփայի Դամբիթի վարդապետին ի վայելումն անձին և յիշատակ բարի հոգույ հրու և ձնողացն — հօրն՝ Ալեքսանին և մօրն՝ Խանաղին և Ծովուր որդուու ի փոտը՝ տէր Ավետիս սրբանունդ տահանալին և հարազատ եղբայր Մելիքսեփին և գումը Խաթունաղին և նորաբողը մանկան Սահակ եղբօրորդուու^{*)}

^{*)} K. Sarafian, *History of Education in Armenia*, la Verno, 1930, p. 142:

իւրոյ և ամենայն արժանառու մերձամբացն, կենդանեացն և համգուցելոցն^{*)}։ Իր ծնող-ների և աշակերտի մասին փոքրիկ հիշատակութիւն ունի նաև ինքը Բաղիշեցին, Պրիգոր Տաթևացու Վանականի՝ Հորի մեկնութիւնն լուծման իր ընդօրինակած ձեռագրի հիշատակարանի մեջ ոճտրուած Բաղիշեցի Դափիքանասէրս հիշեցէք ի Թրիստոս Աստուած մեք, որ ստացաւ զՅորայ մեկնիլս և հոտու դրել զլուծմունք և եղի ի միում տփի՝ լիշատակ ինձ, անարժանիս, և ծնողաց Ալեքսանոսին և Խանաղին՝ Հանգուցելոցն և Թրիստոս, և Հոգմոր որդույն իմոյ տէր Աւետիս գործ աշակերտի, Թուին Ռժճ՛ (1664)^{**})։

Վանի առաքելոց վանքի երեխնի սեփականությունը կազմող մի ձեռագրի հիշատակարանից երևում է, որ Դափիթը բարեկամական որոշ կապ է ունեցել տաղասաց Վարդան Բաղիշեցու հետ։ Հիշատակարանում կարդում ենք. «Զպիրազանցեալն Հոգով, զպերճացեալն բանի իմաստութեան, զԲաղիշեցի Վարդան բարոնապետն իշխաչիք առյուն ամենեցուն Թրիստոս հանդերձ հարագատու իւրով Դափիր Վարդապետի» (Ընդբուժում մերն է Ա. Ա.), զի Եղիշապարու վանաց դրերն ե (40) Հին փթիեալ գիրք վերտին ետում նորոգել և կազմել, և զեկեղեցու սագերն և զգումբէթն վերստին նորոգեաց... Թուին Ռժճ՛ (1673)^{***})։

Դափիթ Բաղիշեցին իր ժամանակի մեծ հեղինակություն ունեցող ամենավորություններից մեկն է Հանդիսացելի Այդ, ի միջնայրց, երեսում է 1661 թին Բաղիշեցի Գոմանց Աստվածածնի Կոչվող վանքում գրված մի ձեռագրի հիշատակարանից։ Դրիշը առաջնորդ Մեսրոպ Վարդապետի հետ միասին, որպես Հովանավորող անձնավորության, հիշում՝ է նաև Դափիթ Բաղիշեցուն. «Դրեցաւ... ի կաթողիկոսութեանն սուրբ աթոռոյն եշմիածնայ տէր Յակոբին և ի Հայրապետութեանն սուրբ ովհութին տէր Մեսրոպ բարոնապետին և աշակերտի, Դափիթ Վարդապետին իւրոյ, որ բազում շանս և սէր ունին հետ մեղաւորին»^{****})։

Դափիթն իր կրթությունը, մանկական հասակից, ստացել է Բաղիշեցի առաջնորդ Մես-

^{*)} ՀՍՍԾ Մատենադարանի ձեռագիր, № 5179 թ. 242ա, թ.

^{**) ՀՍՍԾ Մատենադարանի ձեռագիր, № 5732 թ. 165ա:}

^{****)} Տես «Պիւան Հայոց պատմութեան» 10-րդ հատոր, Թիֆլիս 1912 թ. (Հրատ. Գ. քն. Աղանեանց), էջ 48:

^{*****) ՀՍՍԾ Մատենադարանի ձեռագիր, № 8079, էջ 354—355:}

րոպ եսիսկոպոսի մոտ։ Այդ մասին նա հիշում է իր տարթզգության մեջ. «Մնեալ ի մանկութենէ առ ուս երանիկ և երիցս երանեալ Հօրին մերոյ Մեսրոպ Վարդապետի անլայթ փիլիսոփայի և թաջ քարտովարի»։ Այս Մեսրոպը Հակոբ Չուզայիցու աշակերտներից էր և Փիլիպոս կաթողիկոսի կողմից Բաղիշեցի առաջնորդ էր նշանակվել 1638 թվականից։ Նույն Մեսրոպից նա 1641 թին ստացել է պաւազան իշխանութեամս, այսինքն վարդապետիլու, քարոզելու իրավունքը 1651 թին Դափիթը նշանակվում է Բաղիշեցի Խոդրակատար Աստվածածնի կոչվող վանահայր։ Այս մասին նա իր տարթզության մեջ գրում է. «Թուին Ռժ. (1641 թ.) ընկալաւ ի նմանէ (այսինքն Մեսրոպ Վարդապետից. Ա. Ա.) աստիճան քահանայութեան և ինտ Զ (6) ամի գաւազան իշխանութեան, թէպէս թափուր և տպէտ գորոսկ իմ յուսմանէ։ Թուին Ռժ. (1651 թ.) եղին զանարժան ծառայ Խոդրակատար սուրբ Աստվածածին»^{**})։

Մեր այս Դափիթն շպիտի զփոթել նվաճամանակակից և Բաղիշեցում ապրող ու գործող մի այլ Դափիթ քահանայի հետ, որը դարձյալ Մեսրոպ Վարդապետի աշակերտն է եղել։ Վերջինս 1658 թին Բաղիշեցում ընդորինակած մի ձեռագրի հիշատակարանում իր բարեկամական շրջանի մասին գրում է. «Արդ՝ որը ճաշակել ամենալի սեղանոյս... աստուած ողորմի ասէք ինձ անարժան (Դափիթ Ա. Ա.) գծողիս և ծնողացն իմոց՝ Մութիասին և Հուրիփաշին և իմ Խոջարը՝ Բլրուլին, Մովսէսին, Ազեկիէլին և նորահաս մանկան իմոյ Սանհիանոսին»^{***})։

Բաղիշեցին մահացել է կիմում 1673 թին և թաղվել այնտեղ:

Հ 5. Որքան հարուստ ևն Բաղիշեցու անձնավորության վերաբերող նյութերը, այնքան կցկուուր են նրա գրական-բանասիրական աշխատառություններին վերաբերող տեղեկությունները, նրա գրական աշխատառության մասին մենք ի մինձակի ենք դատել միայն մեզ հասած այն ճնշագրերից, որոնք ընդորինակելու է ինքը, կամ Հանձնարարել է ընդորինակելու ուրիշներին։

^{*)} Դափիթ Բաղիշեցու ժաղկաբաղ տարեզրություն, էջ 84 (ալսուեղ և մյուս բոլոր աեղերում մենք օգավել ենք հրատարակության համար մեր պատրաստած տերատից և մատենացուց արել նրա էղածամքները)։

^{**) Դափիթ Բաղիշեցու ժաղկաբաղ տարեզրություն, էջ 84։}

^{***) ՀՍՍԾ Մատենադարան, ձեռագիր № 7270, թ. 180ա։}

Դավիթ Բաղիշեցու ձեռքով գրված և մեզ հասած ամենահին ձեռագիրը—այդ ՀՍՍՌ Մատենադարանի № 8692 ձեռագիրն է, որը ընդօրինակել է 1653 թվին. Ձեռագիր մանրանկարչությունը կատարվել է հետագյուտ։ Այս մասին հիշատակարանում կարդում ենք. «Ճանակացող եղեալ [զսա] բարեմիտ քահանայն տէր-Կարդան և ստացաւ զսուգը քառաջանեան աւետարանս, զոր էր դրեալ թարց նկարագրութեան ձեռամբ Դավիթ վարդապետ Բաղիշեցու...»)։

ՀՍՍՌ Մատենադարանում գրնչում է 1651 թվի ընդօրինակած մի ձեռագիր—№ 1752 ձեռագիրը, որի գրին է ոմն Դավիթ, որի գիրը շատ նման է Բաղիշեցու գրին։ Նրա հիշատակարանում ասված է. «Ճառածեալս մեղօք յիշել ի սրբանուեր յաղօթս ձեր աղաշեմ վասն աստուծոյ զգծովս Դավիթս ի տէր։ Կրեցաւ թուխս հայոց Ռ և Ժ (1651)**)։ Հաստատապես ասել՝ թե սա Բաղիշեցի Դավիթն է, դժվար է։ Ի միշտ այլոց ՀՍՍՌ Մատենադարանում կան նման կարգի կասկածելի մի քանի այլ ձեռագրեր ևս, որոնց վրա մենք կանգ չենք առնում։

Տոթ տարի հետո, 1660 թվին, Թումա գրիշը Բաղիշեցու պատվերով ընդօրինակել է Հովհան Ասկերն Ասորու։ Պողոսի տասն և շորս թղթերի մեկնությունը և թողել հետեւյալ հիշատակարանը. Ճեռափակած սրտի և լոժար կամօք ես գրել զսա (վարդապետն Դավիթ) յարդար վաստակուց իշուց... ի մեծ թուականս հայոց Ռ և Ժ (1660) ամին, ի Բաղէջ քաղաքի***)։ Այս ձեռագիրը սկզբում գտնվել է Սևանում, գրանցվել է նրանց № 99-ի տակ****), իսկ հետո տեղափոխվել ՀՍՍՌ Մատենադարան։

Հաշորդ տարին, 1661 թվին, մի այլ գրիշ Դրիգոր անունով, Բաղիշեցու համար ընդշրմանակել է Եփրեմի՝ Երեմիայի մեկնությունը, գանգատվելով ժամանակի գառնության վրա. «Արդ՝ գրեցաւ սուրբ տառս, տր է մեկնութիւն Երեմիայի մարգարէին, ի թուին հայոց Ռ և Ժ (1661) ձեռամբ... Գրիգոր Երիցու, ի դառն և վշտաշատ ժամանակին, որ նեղիմք ի ձեռս այլազգեաց և հարկապահանցութեան նոցա*****)։ Այս ձեռագիրը

*) ՀՍՍՌ Մատենադարան, ձեռագիր № 8692, թ. 210ր:

**) ՀՍՍՌ Մատենադարան, ձեռագիր № 1752, թ. 98ր:

***) ՀՍՍՌ Մատենադարան, ձեռագիր № 4109, էլ. 200:

****) Ն. Մաս, Յուցակ համառու ձեռագրաց վահուց Սևանայ, Մովկա, 1892 թ., էլ. 45:

*****) ՀՍՍՌ Մատենադարան № 5179, թ. 242ա:

գտնվում է ՀՍՍՌ Մատենադարանում։

1664 թվին Բաղիշեցու պատվերով ընդօրինակել է Գրիգոր Տաթևացու։ Հորի մեկնությունը. Ձեռագրի հիշատակարանը գրել է ինքը, Բաղիշեցին*). Այս ձեռագիրը ևս ՀՍՍՌ Մատենադարանի սեփականություն է, հանդիսանում։

Դավիթ Բաղիշեցու անվան հետ կապվում է իմ անապատում երբեմնի գոնված մի հարանց Վարդ, որն ունի Դավիթի փոքրիկ հիշատակագրությունը՝ իրեն, Վարդան Բաղիշեցու (տաղասացի) և Մեսրոպ վարդապետի (իր տառացի) հետ իմ անապատ ովատի գալու և մի շաբաթ նվերներ վանքին տալու մասին։ Այս ձեռագիրը, զժրախտաբար, առաջին համարի ամառարհային պատերազմի ժամանակ տաճկական վայրագրությունների շրջանում կորել է։

Եզ վերջապես, 1669 թվին Բաղիշեցին ընդօրինակել է տվել իգնատիոսի կողմից Ղուկասի և Մատթեոսի ավետարանների մեկնությունը։ Այս մասին նա գոել է. «Վարդապետն իգնատիոս մեկնեալ [էր] զաստուածընկալ սուրբ աւետարանս Ղուկասու... և ես էկս և թշուառականս և թափուրս յամենայն գործոց բարեաց, տրուա Դավիթ բանասէր... ցանկացայ սմա... և յանկեալ աւարտեցաք ի թուարանութեանս Յարեթական տոմարի Ռ և Ժ և ԾՓ անհրորդի...**)։ Այս ձեռագիրը Բաղիշեցու վերջին ձեռագիրն է հանդիսացել։ Այդ երեսում է նույն ձեռագրում Մեսրոպ վարդապետի թողած մի հիշատակարանից, ուր կարդում ենք. ևս Բաղէջու քաղաքի վերատեսուշ տառապետաւ տրուա Մեսրոպ վարդապետու ի թոփն ՌՃԻԲ (1673) եկի ի ծովաշուրջ անապատն կմայ հանդերձ Հոգիւոր որդուք իմովք, Դավիթ վարդապետաւն և Աւետիք բանասէրիւ, Դավիթ վարդապետն վախճանեաց զկեանս իւր... և մարմինն եղեալ եղել ընդ Հավանեաւ սուրբ Գևորգավարին...***)։ Ուրեմն, Դավիթ Բաղիշեցին Մեսրոպ վարդապետի հետ միասին ուխտի է եկել իմ, այսուեղ էլ մահացել ու թաղվել։

Որ իրոք, Դավիթ Բաղիշեցին մահացել է իմում, այդ երեսում է նաև իմում Դավիթի վերազմանի վրա գրված տապանաքարից, ուր կարելի էր կարդալ. «Կանգնեցաւ սուրբ Խաչոյ բարիխոս առ Աստուած. Բաղիշեցի Դավիթ վարդապետին, և ամենայն աշխատողացն. յիշեցէք ի Քրիստոս. թոփն ՌՃԻԲ

*) ՀՍՍՌ Մատենադարան № 5722, թ. 195ա:

**) ՀՍՍՌ Մատենադարան, ձեռագիր № 5156 թ. 503ա:

***) Նույն, թ. 185ա:

(1873)^{*)} աւ Այս ձեռագիրը սկզբում դունկել է իմ անապատում, իսկ հետո, առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ մի շարք ձեռագրերի հետ տեղափոխվել է Եզմիածին և այժմ ՀՍՍՌ Մատենագրարանի սեփականությունն է։

Բացի մերեւ հիշված ձեռագրից և տարեգրությունից, անկասկած, Դավիթ Բաղդիշեցին ունեցել է ինքնուրույն աշխատություններ, որոնք մեզ չեն հասել Այդ երեսում է Բաղդիշեցու ժամանակակիցների կողմից նրան տրված այն մականուններից, որոնց հաճախ հանդիպում ենք մենք. ոքաջ փիլիսոփա, «անյաղթ իմաստուն», ոմեկնող ամենայն խորածուկ դրոց և այլն։ Պավիթն ունեցել է բանասիրական-մեկնողական կարգի ուրիշ աշխատություններ, որոնք եւ հիմք են տվել ժամանակակիցներին նման էպիտետներ գործ ածել։

Տ6. Դավիթ Բաղդիշեցու «Մաղկաքաղ տարեգրությունը», որի մասին մենք ցանկանում ենք խոսել, մատենագրական ինչ որ նորություն չի հանդիսանում և նա հայտնի է հայագիտական նեղ շրջանակում։ Նրանից առաջին հանդիպումը անգամ, նրեսուն տաղի շափ մի փոքրիկ հատված, առանց կոմենտարիայի, բերել է Զ. Վ. Փիրղալեմյանն իր «Նոտարք Հայոց-ում»^{**})։ Այնուհետեւ Բաղդիշեցու պատմությանն անդրադարձել է Հ. Թոփշյանը 1898 թ. իր կազմած Խաչիկ Վ. Դավյանի ձեռագրաց ցուցակում՝ տարեգրության իրեն հայտնի ընդօրինակությունը նկարագրելիս^{***})։ Նա ևս Բաղդիշեցու տարեգրությունից բերել է մի քանի փոքրիկ հատվածներ և առաջ քաշել այդ երեսի հրատարակության

անհրաժեշտությունը։ Նույն թվին ըլլրարատա ամսագրում Կիլիկեցի ստորագրությամբ, (Հավանական է նույն Թոփշյանը լինի) լույս է տեսել Դավիթ Բաղդիշեցու մասին մի փոքրիկ հոդված և նորից շեշտվել նրա տարեգրության կարեւորագրությունը^{**})։ Բաղդիշեցու տարեգրության մասին մի քանի տող տեղեկություն է տվել Զ. Ալիշանը իր «Հայապատություն» աշխատության մեջ։ Սակայն նա, ըստ երեսությին, տարեգրությունն անձամբ չի տեսել, ուստի և սիսակամք ենթադրում է, որ Բաղդիշեցու տարեգրությունը սկզբած պիտի լինի «արաբացոց աշխարհակալութեան սկզբէն»^{***}), այն ինչ նա սկսվում է ավելի հին զրշանից։ Եվ վերջապես, 1912 թվին Գ. Ք. Աղանյանը իր «Դիման հայոց»-ի 10-րդ հատորում, որը նվիրված է մանր մատենագրներին, կանգ է առել Բաղդիշեցու տարեգրության վրա և Փիրղալեմյանից առնելով մի քանի հատված, որպես նմուշ, հրատարակել^{****})։ Հայագետներից վերցին անգամ, Բաղդիշեցու տարեգրության վրա կանգ է առել մեծանում գիտնական Հ. Անառյանը՝ իր «Հայոց անձնանունների բառարան»-ի երկրորդ հատորում և նորից շեշտել նրա հրատարակության անհրաժեշտությունը^{*****})։ Սակայն Թոփշյանի, Աղանյանցի և Անառյանի հայտնած ցանկությունները մնացել են լոկ ցանկություն։


(Ծարունակելի)

^{*)} Կիլիկեցի, Դավիթ Բաղդիշեցի (տես «Արարատ» 1898 թ., էջ 120—124)։

^{**)} Զ. Ալիշան, «Հայապատություն», Վենեսուբկ 1901 էջ 129։

^{***)} Դիման հայոց պատմութեան, 10-րդ հատոր, էջ 40—55։

^{****)} Հ. Անառյան, Հայոց անձնանումների բառարան, և հատոր, Սրբակ 1944 թ., էջ 57—58։



ԿԱՐԱՊԵՏ ԵԶՅԱՆ, ՄԿՐՏԻՉ ՍՈՒՍՍԱՐՅԱՆ, ԼԵՎՈՆ ՑԻԴՐԱՆՅԱՆ

Ա

արագետ նպասնի ընտանիքը, վաղոց Հաղտարփանից տեղափոխված լինելով, վերաբնակություն էր հաստատել Մոսկայում: 1859 թվին այդ ընտանիքը բաղկացած էր մորից, ծերացած մորաքոչից, երկու եղբայրներից՝ Կարապետ և Հովհաննես և երկու քուրեբից՝ Մարիամ ու Աննա:

Հարությունի որդի Կարապետն ուսանել է Հազարյան ճեմարանում, որոտեղ և գիմնազիական միջնակարգ ուսման դասընթացն ավարտելոց հետո (1850-1851 թ.), իր համար որպես մասնագիտություն ընտրելով արևելագիտությունը՝ հատկապես հայոց լեզուն, մտել է նույն ճեմարանի Արևելյան լեզվաց ուկիցնական հոչված մասնագիտական դասարանը:

Հարությունը ավարտելով կիկոնական դասընթացը (1852-1853 թ.), նա փոխադրվում է Պետերբուրգ և կանդիտասության ընություն բռնում համարանի արևելյան բաժնում, ուր հայոց լեզվի պրոֆեսորն էր Հաղուարինացի Մկրտիչ Թերոյանը: Այնուհետև նա պատրաստվում է մագիստրոսության ընության, որի համար գրում է «Հին Հայութանի ներքին կենցաղը» խորագրով գիտական շարադրությունը («Կոյորդանի Երեւանի Արմենիա»): Քեյյած այդ աշխատությունը բռն աղբյուրներից քաղված զուտ գիտական աշխատություն էր, այլ Համարյա ամբողջապես փոխառված էր Խնձօքյանի հայտնի «Հնագիտութիւն» գրքից, բայց և այնպես նա հաշորությամբ պաշտպանում և արժանանում է չԱրևելյան լեզուաց մագիստրոսական կուման (1860թ.):

Նա մոտագիր էր Մկրտիչ Թերոյանից հնատն նրա տեղը համարանի արևելյան բաժնում ինքը գրավել, ուստի երբ 1860 թվին աղբունքուն հերոյանը ծերության պատճառով գրադիր էր մոտագիր էր պաշտոնից, նա իսկույն

շտապում է ինքրամատույց լինել համալսարանի ֆակուլտետին, որպեսզի իրեն հանձնեն նրա պաշտոնը:

Այդ պաշտոնին տիրանալու համար նրան յրցակից էր Հանդիսանում Ատավրոպոլի Պատկանյան Տ. Պետրոս քահանայի որդի, Հարություն Վարդապետ Ալամդարյանի թոռ Թերության Պատկանյանը, որը 1857 թվին Պետերբուրգի Մանկավագֆական հիմնադրությունում պատմական գիտությունների բաժինը ավարտելոց և ապա երկու տարի էլ Թիֆլիսում ուսուցչի պաշտոն վարելոց հետո, 1859 թվից ընդմիջությունից փոխադրվել էր Պետերբուրգի ու իրեն նվիրել պատմության ու լեզվագիտության ուսումնասիրման գործին:

Իրավունքի տեսակետից առաջնությունը պատկանում էր Եղյանին, որովհետև նա թե՛ կանդիտատի և թե՛ մագիստրոսի կոչում ուներ, մինչդեռ Պատկանյանը նույնիսկ կանդիտատի կոչում էլ չուներ. նրա թեկնածկության կողմերից էր նաև Ազգային կուագվորության նախարարություն՝ ի ղեկան Հովհաննես Դելյանյանի, որն այդ ժամանակ Ս. Պետերբուրգի ուսումնական շրջանի հոգաբարձու էր: Մական ընտրության իրավունքը պատկանում էր ֆակուլտետին, որը դիմելով Մկրտիչ կիմինին և նրա կարծիքը հարցնելով երկու մրցակից թեկնածուների արժանավորության մասին, նպաստավոր գրադիր էր ստացել Հայութ Պատկանյանի: Այսպիսով ընտրվում է Պատկանյանը:

Կորցնելով այդ պաշտոնին տիրանալու հույսը և յուր մասնագիտության համապատասխան մի ուրիշ պաշտոն էլ շգտնելով, նա դառնում է աստիճանավոր, առաջն հերթին ծառայության մտնելով ներքին Պոնտ նախարարության ղեպարտամենաներից մեկը:

1860 թվին նա բաց է անում մի մասնա-

վոր պանսիտն, հատկապես գիմնազիաների ավարտած նայ երիտասարդների համար, որպեսզի նրանք այդտեղ պատրաստվելով նարավորություն ունենան համալսարան մանելու, քանի որ այդ ժամանակները գիմնազիաներն ավարտողները տակալին արտօնություն շռնեին անմիջապես համալսարան մտնելու, այլ պարտավոր էին նախապես դրա համար, սահմանված քննության ենթակալվելու. համալսարանում, Դրա համար նա վարձում է մի բնակարան և իր ընտանիքը փոխադրում Պետերբուրգ. այստեղ էր նաև նրա եղբայրը, որը 1859—1860 թվին նույնպես ավարտած լինելով լազարյան հեմարանի միջնակարգ դասընթացը, մտել էր համալսարանի բժշկական բաժինը; Հետագայում նա ավարտելով բժշկապետ է դառնում:

Եղանի պանսիոնում հավաքվում են մոտավորապես 10—12 աշակերտ, որոնցից յուգագանցուրը վճարում էր նրան տարեկան 800 ռուբլի, որպես ուսման, բնակարանի և սննդի ծախք. աշակերտները նրա մոտ ապրում էին շատ լավ. թե բնակարանը, թե նրանց ու կացն. թե սնունդը և թե նրանց հետ վարկելու ընտանեկան ու սիրայի ձեւվը գոհացուցիչ էին, և այդպես էլ շարունակվեցին մինչև վերջը: Այդ պանսիոնում են գոյնվել երեսնցի հայտնի փաստարան Ռուգենի Զայալցանը, «Փորձ»-ի խմբագիր Արգար Հովհաննիսյանը, Երևանի քաղաքացին բժիշկ Անոն Տիգրանյանը, Երևանի հարավետ երկու եղբայրներ՝ Մկրտիչ և Կարապետ Էղիլյանները, մողղոկի Միքայիլ Բուրզալյանը, պետներուրոցի Դրիգոր Բուրզալյանը, մուկվացի երկու եղբայրներ՝ Մեհրուման և Արշակ Խալաթյանները և ուրիշների:

Դասատվությունը կանոնավոր էր. ինքն Եղանը դասավանդում էր պատմություն և աշխարհագրություն. մյուս առարկաների համար հրավիրվել էին մասնագետ ուսուցիչներ: Հսկողությունն աշալուքը էր և կատարվում էր իր եղյանի, նրա ընտանիքի անդամների և երկու առանձին վերակացուների միջոցով, որոնցից մեկը գերմանացի Օտտենն էր, որ տիրապետում էր նաև ֆրանսական լեզվին, իսկ մյուսը համալսարանի վերցին կուրսի ուսանող վաղամեռ Մարտիրոս Միմոնյանցը. (Հետագայում լավահամբավ ուսուցիչ ներսեսյան պարուցած և Գեղարդյան Շնմարանում), Բայց առենալավ Հակոբյանի նայրը (Մամինին), և քուլը՝ Աննան, որոնք իրենց հարազատների պես սիրում էին աշակերտներին ու փոխարարձարար սիրում նրանցից:

Եղանը շատ հմուտ մանկավարժ և վարպետ ուսուցիչ էր. Բժ. Անն Տիգրանյանը,

որը ինն տարեկան հասակում Թիֆլիս տեղափոխվելով և այդտեղ 6—7 տարի մասնավոր պանսիոններում, զանազան դպրոցներում և այլ մասնավոր՝ հայ, ուսուու ու ֆրանսիացի ուսուցիչների և վարժութիւնների ձեռքի տակալ տովորելուց հետո, 16 տարեկան հասակում, համարյա բոլորովին տգետ, եկել էր Պետերբուրգ և իր քոռու՝ Մկրտիչ Սանարյանի միջոցով 1859 թվին, նախքան պանսիոնի բացումը, առաջավորվել եղյանի մոտ համար՝ տարեկան 1200 ռ. վճարով, նրա դասավանդության մասին իր «Հիշուակարան»-ում պատմում է Հետևյալը. «Պետերբուրգով երկու շաբաթ մնացի քեռուս մոտ, որ ապրիլի 25-ին 1859 թ. տվեց ինձ նարապետ Եղյանի մոտ սովորելու. դա այդ միջոցին մաղիստրոսի քննություն էր տվել և պատրաստում էր յուր դիմումագիտան և դարձավ մագիստր արևելյան լեզվաց գիտության... Եղյանը շատ վարպետ մարդ էր կրթության գործում, նա ինձ հետ վարկեց շատ մեղմ, ընկերակար, որպես սիրով մեծ եղանց. ամեն օր երեկոյան դնում էինք զրունելու և այդ միջոցին ինձ ամեն բան ցույց էր տալիս, բացարձում էր, (սոկրատական ձև), աշխատում էր հարցուցանել իմ մեջ հետաքրքրություն գիտությանց վերաբերմամբ և ընտերացնել աշխատամիրության. երկու շաբաթվաք ընթացքում ինձ այնպես ողործեց, որ ես ականցի մեծ զանքով պարապել և աշխատել սովորեցրեց բառարան (ուսու-հայ) գործածելու: Երբ սկսեցի հին պատմություն սովորելը, նա առաջին դասս (բարեկոնացիք) հարցնելիս տեսավ, որ լավ եմ պատմում և հասկացավ, որ անգիր եմ սովորել: Այն ժամանակ բացատրեց, որ շպետը է անգիր սովորել, այլ պատմել: Այդ առաջին անգամն էր կյանքում, որ ուսուերեն կարդացած պետք է պատմեի, այն ինչ պատմելու նաև ձևը զգիտեի: Այդքան էր Թիֆլիսից բերած գիտությունս Եղյանի մոտ հենց սկզբից սկսեցի շատ աշխատել և երբ երթարյան պահին ինձ տւղում էր ման գալու տանել, ես չեմ ուզում զանալ, ասելով թե ես սովորելու բան ունեմ: Ես ամբողջ օրը պարապում էի և ինքս զարմանում էի, թե ինչ է պատահել ինձ, որ ամեն ինչ ինձ հետաքրքրում է: Իմ մեջ ծագեց ցանկություն Եղյանի նման գիրք կարդալ և առաջին գիրքը, որ կարդացի, էր Պոլ և Վերժին (Հայերն թարգմանություն), որ կիսատ էի հասկանում և շատ բան Եղյանից հարցում: Այդ գիրքը ինձ վրա շատ մեծ ապահովություն նողեց. հետո կարդացի ուսուերեն լեզվով՝ Քօնքաօք-ը: Նա կարդում էր ինձ կերպությունից, ես շատ-

հավանեցի ռայլաւան և նա մի օր ասեց, ուղում ես թարգմանիր հայերեն և մենք տպենք, ես կուղեմ: Այդ այնպես գրգռեց իմ ինքնասիրությունը, որ ես իսկուցն համաձայնեցի և սկսեցի: Բայց ինչ թարգմանություն էր, թարգմանելու եղանակը շփտեի, ուստեղին կիսատ էի հասկանում և երբեք հայերեն բան գրած չէի: Եղանն ամեն օր դասին գրած ուղղում էր, խրախուսում էր, բացատրում էր կանոնները և այլն: Ես ամբողջ ռելիաւան թարգմանեցի և ուզի պես կաղըս էի Եղանի յախից, թե հիմա պետք է տպել տալ: Նա ժամանակով խոստանում էր, բայց ես չէի հասկանում, որ այդ թարգմանությունը տպեթու համար չէր, այլ ուստեղին հասկանալու և առվորելու համար: Նույն կերպ վարդեց ինձ հետ ֆրանսերեն սովորեցնելու համար: Ես նրան անպայման հաջատում էի, զարգմանում էի նրա համբերության, վարդելու քաղցրության վրա: Նա ամենամեծ վարպետովովյամբ սովորեցրեց ինձ աշխատանքի, և սովորեցրեց հետաքրքրվել, գիտությունով, լեզուներով և ամեն մի լավ գործով: Նրա հայտնած գաղափարներն ուղիղ, արդար, ազնիվ էին: Նրա խոսքն ինձ համար սուրբ էր:

«1859 թ. հունիսին զնացինք Եղանի հետ Մոտկվա՝ ներկա լինելու նրա մեծ քրոջ՝ Մարիա Արտեմովնայի հայտանիքին (Թողորան Վարդակի; Բողդանովի հետ, որ հայ էր): Արդիեղ ծանոթացա մար, քուլրերի և եղանք հետ: Նրանք ինձ սիրեցին և ես էլ նրանց սիրեցի: Մենք մի ամիս մնալով Մուկով, վերադարձանք Պետերբուրգ: Եղանը ակաց մտածել պահսին բանալու...»

Եղանը թեև հմտու մանկավարժ, ուսուցիչ, պահսինի լավ կառավարիլ ու բարեխիղ պետական աստիճանավոր էր, բայց բնափորության այնպիսի գծեր տաներ, որոնք նրան ծանր և անբարեհամրուց էին դարձնում առօրյա կանքում՝ հասարակության մեջ: Նա փառասեր էր, ինքնահաման, զողոքրթիւն ամրող, ուրիշի կարծիքի շնանդութուղ, քնն պահող, ազդեցություն ձնոք բերելու, շրջապատողներին փրեն հպատակեցնելու գործում ունեցող. սրանք բնափորության գծեր ու հատկություններ էին, որոնք նրան հին քրմերին էին նմանեցնում, ուստի և նա ժամանակի հայ ինտելիգենտ դասի կողմից քուրմա անունով է կնքված եղել ու ռիուլմա է անվանվել: Որքան մեղ հայոնի է այդ հորդորչումը առաջին անգամ Եղանին հատկացրել է Գրիգոր Արքունին ուր միջակ-ում: Այս բոլորի հետ միասին սակայն նա մյուս բարձր զիրք ունեցող հայ աստիճանավորներից տարբերվել է մի իսո-

շր առավելությամբ. Նա ներքին Գործոց նախարարությունից ծառայության փոխադրվել Ազգային լուսավորության նախարարությունը և այդտեղ հետզհետե առաջնակությունը ու կրավելով Դպրոցական գործերի ղեպարտամենտի փոխվերատեսչի բարձր պաշտոնը (Անդրեյ Ռեմեր գլուխությունուն առաջարկության հետ, այլ ընդհակառակը էլ ավելի ամրացնում է այդ հարաբերությունները, մշտական ու հարատես գործակցությունն և մասնակցություն ցույց տալով հայկական բոլոր ազգային կուլտուրական ձեռնարկումներին:

Ամեն մի հայ անխտիր մուտք է ունեցել նրա բնակարանը և մինչև իսկ նրա պաշտոնատեղում ունեցած առանձնասենյակը, խոսել նրա հետ հայերեն լեզվով, առանց թագցնելու իր կարիքները հայտնի նրան. և եթե ինդրողը հավաստիքներ է մատոցել նրան իր իսկական հայ լինելու, հայ կուտարական կրանքին ծառայելու կամ հետագյում այդպիսի գործի պետք գալուն, Եղանն աշակցել է նրան թե իր խորհուրդներով, թե իր պաշտոնի հետ կապված նպաստավորմերով և թե սեկեղեցական խորհրդի տրամադրության տակ գտնված գումարներից օժանդակություն ցույց տալով, թոշակ նշանակելով. Նա սեկեղեցական խորհրդի ազեցիկ անդամը և հետո էլ նախագահն է եղել երկար ժամանակ:

Մայրագաղաքի ուսանողներից զատերն են վայելի նրա աշակցությունը բարձրագույն դպրոցներ մտնելուց, շատերն են ազատ եղություն ունեցել նրա բնակարանը, վայելի նրա ընտանիքի սիրալիք հյուրասիրությունը, շատերն են պարբերաբար հրավեր ստացել մասնակցելու նրա շաբաթական ժողովներին, ուր շահեկան զրոյցներ ու մտքերի փոխանակություններ էին կատարվում և ուր նրանք որոշ ուղղություն էին ստանում ազգային կուտարական խնդիրների շուրջը ու պատրաստություն ձնոք բերում իրենց ապագա ազգային գործունեության համար:

Այդ բոլորի հետեւնքով հասկանալի պիտի լինի, թե ինչու Եղանի անունն ու հոչակը իր ժամանակ այնքան տարածված են եղել հայերի մեջ, հայ աշխարհում, թե ինչու նա դարձած է եղել մի կենտրոնական անձն, որին դիմել են ամենքը, ե՛վ էջմիածինը, ե՛վ հայ ազգային գործի գրում կամնված մարմինները, ե՛վ հայ մասնակոր անհատները, որոնք ի վիճակի են Փղել և կամեցել են ազգի կուտուրական գործի համար մի բան ա-

նելը նրա խորհուրդներով և բարժակամն ու գործնական աշակցությամբ է գրփել Սանա-սարյանի կտակը, հիմնարկվել Սանասարյան դպրոցը Կարինում, հաստատվել նոր Նախիչևանի ու Թևարարիայի Թեմական դպրանոցի կայսերահանստատ հիմնական կանոնները, նոր Նախիչևանի ռեկեղեցական Հոգարարձությունը և այլն:

Առն Տիգրանյանի ասելով՝ Եղյանը մի քարի, աշխատասեր մարդ է եղել, յուր մասին մեծ կարծիք լի ունեցել և բնակորության մերուհիցյալ վատթար գծերը կամ բոլորին չեն արտահայտվել նրա մեջ, կամ արտահայտվել են այնքան մեղմ եղանակով, որ համարյա թե նկատելի չեն եղել, բայց Հասակն առնելու և ծառայության աստիճանի հետ միասին վատթար գծերն էլ զարգացել և հետագայում արտահայտվել են զորեղապես Օրինակ նա չէր կարող լսել ու տանել հակառակ կարծիքներ. նա այդպիսի կարծիքներ համար ուներ մի բառ, որ հաճախ և համարյա միշտ փորձ էր ածում— «հիմար», որի ը տառն արտասանում էր ո տափ հնչումով և ծոր տալով «հիմադղո» կամ ուղարկն ուղղաղակի Ռաւանովների մի մասն անհանդուժելի համարելով նրա բնակորության այդ և դրա նման գծերը, հեռու էր պահում իրեն նրանից, լրնդունելով նրա հըրավերը և շայցելելով նրա շաբաթական ժուռֆիքսները, աւելովներն էլ զուսում ճանաշելով նրան, հետզհետ հեռանում էին և մինչև վերջը մնում էին միայն նրանից մի որևէ պատճառով կախում ունեցողները:

Թե որքան ոխակալ ու քենահնոհո էր նա, Տիգրանյանը, իրեն նրա բնակորության այդ գծի ցայտուն օրինակ, իր «Հիշշատակարան»ում մեջ է բերում նրա Պետքրուրդի համալսարանի արևելյան բաժնում հայոց լեզվի ու պականության պրոֆեսոր լինելու ձգուումը և անհաջողությունը հայոնի հայացետ Մկրտիչ Էմինի պատճառով։ Նա այդ հանգամանքը լի մոռանում և 35 տարի անցնելուց հետո, երբ պատեհ առիթը ներկայանում է, միտեն է բերում ու վրեժինդիր լինում:

«Երբ ես 1887 թվի վերջին արտասահմանից եկել էի Պետքրուրդ և Եղյանի հետ խոսում էի Պատկանյանի մասին, — գրում է Տիգրանյանը, — Եղյանը պատմեց ինձ Հետևյալը. «Մի՞տ է, որ ես էի ուղարկմ պրոֆեսոր գառնալ և պրոֆեսորությունը տվեցին Պատկանյանին։ Այդ Էմինն արեց։ Մի բանի ժամանակ սրանից առաջ էմինը Պատկանյանին նամակ էր գրել, իննդիրելով որ

առաջարկի ֆակուլտետին տալ իրեն գոկտորության գիպլոմ (Honoris Causa)։ Պատկանյանն եկավ ինձ մոտ, բերեց Էմինի նամակը Թասաց. թե Էմինից այսպիսի նամակ եմ ստացել մենց է կամնատում այդ Էմինը, նու ո՞ր աշխատության համար պետք է առաջարկել ֆակուլտետին պատվո դրատորի գիպլոմ տալ և վերջապես նա սաստիկ ծնրացել է, այսօր թե վաղը պետք է մեռնի, ուղիղն ասած զգիտեմ, թե ի՞նչ պատասխանեմ։ Եղյանը պատասխանում է, թե Էմինի նամակն իրեն տա և նա կդրի, բոլ բան է։ Պատկանյանը տալիս է նամակը։ Եղյանը ասեց ինձ. Անհամ ժամանակն ակել էր Էմինից թե վարդի Պատկանյանի կողմից մի արագի նամակ, որ Էմինի շիզագը դադիղ. ավեցի Պատկանյանին ստորագրելու և ինքու տվեցի փոստը, որ մի գործ Պատկանյանը կարդա և շուղարկի։ Ես ի հարկի բացասակարգ էմինի խնդիրքը, ասելով, թե, պ, Էմին, Ձեր ո՞ր աշխատության համար եք կամնատում այդ գիպլոմն ստանալ առանց քննության, Գուք այնպիսի աշխատանք չունեք և այն. շատ քաղաքավարի, բայց կծու նամակ էր ներ Էմինի իմ վրա ցույց տված մներ պրոֆեսորության համար, ևս նրա հետ շատ պենցի լավ կվարդի և ամեն միշտոց գործ կդնեի, որ այդ գիպլոմը նրան տան, ի՞նչ բան է մի թղթի կտոր տալը Էմինին։

Տիգրանյանն Եղյանին, իրեն շառ և վոնասակար հակումներ ունեցող անձի, ավելի ցայտում ֆոռնակով ընորոշելու ու ընութագրելու համար, մեջ է բերում նրա կյանքից նաև մի երկու երեք գեպք, որոնք սակայն այնքան վրդովեցուցիլ ու այնքան զարհուելի են, որ մենք դժվարանում ենք հավատալ, թե զրանք կատարված լինեն Եղյանի պես մարդու ձեռքուվ, ուստի այդ գեպքերը մեջ ենք բերում վերապահությամբ։ Պարտք ենք համարում այստեղ նկատել և այն, որ թե Առն Տիգրանյանը, ինչպես երեւում է նրա մեր քանից հիշած աշխատանքից, իր կյանքում, սկսած 1859 թվից, երբ առաջին անգամ ուսման համար տեղափոխվել էր Եղյանի մոտ, և մինչև յուր քեռու՝ Մկրտիչ Սանասարյանի մահը (1890 թ. 5 մարտի), այսինքն ամբողջ 41 տարի, ստիպված լինելով քեռու պատճառով կապված մնալ Եղյանի հետ, այնքան և այնպես էր տանչվել ու շարշարվել նրա ձեռքից, որ այլև շամբերելով, յուր աշակերտության օրերին դաշույնի շափի գանակը ձեռքին մի գիշեր մտն էր ննջացյանը՝ նրան

սպանեցու նպատակով. բայց թրբ զանակը բարձրացրել էր, որ հարվածի, իսկույն հեշտ էր նրա մորը, իր զատ սիրած Մամինկեխն. ձեռքը թուղացել էր և թողել թեռացել էր ասելով. «Եռու ես, շուն էլ մնա աշխար. Հիս փրկութիւն»: Եվ այդ բօլոր տանջանքները հետևանք էին նրան, որ նա ունետր, բարեգործ Սանասարյանի քրոջ որդին էր, քեզու մեծ կարողության ապագա ժառանգը, որին իրըն թե Եղյանը կամեցել էր ատելի դարձնելով հեռացնել քեռուց, որպեսզի ճանապարհ հարթած լինի Սանասարյանի կարողությունն իր ձեռքն առնելու և գործադրելու իր ուսգածի պիս: Այսպիսի հանգամանքներում բնական է կարծել, որ ատելությամբ առցցված Տիգրանյանը կարող էր, չնաք ասում ստել, այլ շափականցրած լինել նրա ասածները և նրա բնավորության հոռի կողմերը:

«Եղյանի մասին,— ասում է Տիգրանյանը, մոռացա հենց «կղրում մի հետաքրքիր բան պատմել: Երբ ես մտա Եղյանի պանակնը, մեր բնասատեղծ Միքայիլ Նալբանդյանն Եղյանի հետ դուստ էր, Երբ նրան բանտարկեցին, Եղյանը հաճախ մնում էր բանտը, նրան տեսնելու: Երբ վերջին անգամ բոսեցրել էին Նալբանդյանին, նրան հայտնել էին նրա այնպիսի գաղտնիքները, որ նա ակամա ապշած մնալով ասել էր. «Այդ բոլորն տաղիով է, բայց ես ոչ ոքի այդ գործերի մասին չեմ հայտնել, դուք ո՞րտեղից գիտեք: Այդ ժամանակ սերորդ աղեկին դումն էլ կային ազատամիտ մարդիկ, որոնք ծածկաբար ասել էին Նալբանդյանին, որ նրա սրտակից բագեկամ Եղյանն է այդ գուանուն արելու Եղյանն այդ ժամանակները գետ ծառայում էր ներքին Գործոց նախարարությունում:

«Երբ Նալբանդյանին բանտից արձակեցին (շաբաթ օր էր), կիրակի օրը նա ըստ սովորության եկավ եկեղեցի: Երբ եկեղեցուց հետո, բակումն Եղյանն ինձ հետ միասին մոտեցավ Նալբանդյանին բարեկեռ, նալ-

բանդյանը կատաղարար նրա վրա նախեցվ, մի քանիսի և իմ առաջ ասեց Եղյանին. առ այս ուղարկությանը զանազան առաջ առաջի վրա իմ պատմած մանրամամությունները լսեցի Մովսես Բուգալյանի մոտ, երբ ես գնացել եի այստեղ. խոսակցությունը Բուգալյանի և Նալբանդյանի մեջ էր: Դրանից հետո Եղյանը և Նալբանդյանը, ի հարկե, ույիս ծանոթներ չէին: Մի օր էլ Եղյանը խոսելով Սանասարյանի հետ, իմ առջեր արդարանում էր այդ գործում:

«Մի այլ հետաքրքիր բան Եղյանի մասին, — գրում է Տիգրանյանը. — Գևորգ կանողիկոս աշխատում էր վիճակավոր եպիսկոպոսների մի քանի իրավունքները իր ձեռքնեցել, որոնք իսկապես պատկանում են կաթողիկոսին: Կաթողիկոսը գրագրություն ուներ Ներքին Գործոց նախարարի հետ այդ իրավունքների մասին:

«Այդ ժամանակ աշխարակցի Վեհապետյան Գևորգ արքեպիսկոպոսը Հաջտարիանի առաջնորդ էր և Գևորգ կաթողիկոսի հետ կաթողիկոսության կանդիտատ էր (եղել), ուրեմն պետք է կաթողիկոսին հակառակ լիներ Եղյանը գրում է Վեհապետյանին նամակ և հայտնում, որ կաթողիկոսը կամենում է նրա առաջնորդական իրավունքները անփականացնել և փորձուրդ է տալիս հակառակն կաթողիկոսին: Ուղարկում է իրնորդիքի սեագրությունը, որ Վեհապետյան արտագրել տա, ստորագրել և ուղարկե նախարարի հասցեով: Այդ միջոցին Պերճ Պողյանը այդտեղ է վնում: Եղերճ, մի տես Եղյանը ինչ է գրում, ես բան չեմ հասկանում: Պերճը կարդում է և հասկացնում: Ապիսկոպոսն ասում է. «Քավ լիցի, ես այդպիսի զանգատ չեմ տա կաթողիկոսի վրա: Եղյանի ցանկությունն էր, փոնի, մի խալ ստանալ, կամ տեղը շաղացնելու:

(Շաբանձակելի)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1946 թվի սեպտեմբերի 25-ին, Սպենդիա-
րովի անվան էնինի շքանշանակիր օսկերայի-
ի բալետի Պետական թատրոնում բացվեց
Հայաստանի Սովետական գրողների երկրորդ
համագումարը:

Համագումարին մասնակցում էին 58
պատգամավոր վճռական ձայնի իրավուն-
քով։ Սովետական Միության Գրողների
վարչությունից՝ Միության քարտուզար,
ականավոր գրող ընկ. Նիկոլայ Տիխոնովի
պիտակությամբ համագումարին, որպես
հյուրեր, մասնակցում էին արձակագիր
Ռերգե, Թուրովինը, բանաստեղծ Սերգեյ
Շերվինսկին, բանաստեղծուհիներ Վերա
Զվյագինցևան, Մարիա Պետրովիխոր, քննու-
դատ և «Դրուժքա» նարոգով ալմանախի
խմբագիր Արլագի Դեկը, թատերագիր Քրն-
նադատ Յոան Ալթմանը, Սովետական
Գրողների Միության վարչության ազ-
գային գրականությունների բաժնից՝ Սեմ-
յոն Եվգենիսը, Շիրացի գաղետաշից՝ Պել-
սոնը, Էստոնիայից՝ Գրողների Միության
նախագահի տեղակալ, բանաստեղծ Մարթ
Ռասուրը, Լենինգրադից՝ բանաստեղծներ
և նատոլի Չերկիսինը, Վագիմ Շեֆները և
գրականագետ, Փիլոլոգիական գիտություն-
ների թեկնածու Կամսար Գրիգորյանը, Վը-
հաստանից՝ ականավոր գրամատուրից,
և ԱՌՄ Գերագույն Սովետի գեպուտատ հալ-
լա Դադիանին, ակադեմիկոս, Ստալինան
մրցանակի լաուրեատ Գնորդի Լեոնիձեն,
վիպասան Կոնստանտին Գամսախուրդիան,
բանաստեղծ Ալիք Մաշաշվիլին, Վրաստավի
Գրողների Միության Հայկական սեկցիայից՝
բանաստեղծ Շուքրեն Աղաբարը, արձակա-
գիր Մերուն Թորգոմյանը, Բենիկ Սեյրան-
յանը, Մարո Զուրաբյանը, Մկրտիչ Ասլան-
յանը, Վահան Ասրյանը, Վարդան Սիմոն-
յանը, դրամատուրգ-թարգմանիչ Սուրեն
Ավլյանը, քննուդատ Միհրան Քրաջանը,
Աղքաբեջանից՝ բանաստեղծներ Վարսենիկ
Աղասյանը, Համո Սահյանը, Սամվել Գրի-

գորյանը, Դանիել Գրիգորյանը, արձակա-
գիր Մարգար Դավթյանը, դրամատուրգ
Արշավիր Պարբենին, Արտասահմանի հայ
և ուշագնեմ գրողներ ու գրականագետներ —
Ամերիկայից՝ բանաստեղծ Կարապետ Սի-
տալը, Իրանից՝ Շվերածնունդը թերքի
և մրագիր Հայկ Գարադաշը, բանասեր-քըն-
նադատ Արամ Սրբյանը, բանաստեղծ Հովհ-
աննես Ղուկասյանը, Թերութից՝ բանա-
տեղծ Վահե Վահյանը, տիղովուրդի ձայն
թերթի խմբագիր, Հրապարակախոս և գրա-
կան քննադատ Հովհաննես Աղքաջյանը,
Կիպրոսից՝ բանաստեղծ Մմրատ Տիրունյանը.
Ֆրանսիայից՝ բանաստեղծ Օմար-Խայամի
և ավագույն թարգմանիչ Արամ Զարգը, ար-
ձակագիր Զարեհ Որբոնին, վիպասան
և լուս Մեսրոպը։

Ամբողջ գաւակին բուռն օվացիայի տակ
համագումարը պատվավոր նախագահու-
թյան մեջ ընտրեց Համն(բ)Պ Կենտկոմի
Պաղբուրոյի կազմը՝ մեծ Ստալինի գլուխ
վորությամբ, ինչպես նաև ընկ. Գր. Հարու-
թյունյանին։

Համագումարում գործարար նախագահու-
թյան մեջ ընտրվեցին ընկ. ընկ. Զ. Դրե-
գորյանը, Ավ. Խաչակրյանը, Ն. Տիխոնովը,
Ս. Կարապետյանը, Դ. Դեմերճյանը, Ստ.
Զորյանը, Ն. Զարյանը, Արագին, Գ. Սարյա-
նը, Հր. Գրիգորյանը, Գ. Թորյանը, Ե. Դա-
դիանին, Միրասը, Գ. Լենինիձեն, Գ.
Լենյանը, Կ. Սիտալը, Ա. Զարգը, Լ. Մեսրոպը,
Խ. Մարգարյանը, Զ. Որբոնին, Վ. Վահյանը,
Վահյանը, Հ. Աղքաջյանը, Ս. Ռատուլը, Ա.
Զեփիիսինը, Ս. Տիրունյանը, Հ. Գարագչը,
Ա. Երեմյանը և ուրիշներ։

Համագումարը բաց արեց Հայաստանի
Սովետական Գրողների Միության նախա-
գահության նախագահ, Ստալինյան մրցա-
նակի լատրեատ, ակադեմիկոս Ավետիք
Խաչակրյանը, որը սփռագին ողջունելով
Համագումարի մասնակիցներին, իր ներա-
ծական խոսքում նշեց, որ երբ բարրարու

Գաշխստները հարժակվեցին մեր երկրի վրա, և այ ժողովուրդն անձնամիտաբար կովկեց հայրենիքի թշնամիների զեմ, իսկ նրա գրողները ճշգրիտն խոսքերով երգեցին ու փառարաննեցին, այն բոլոր վեհ զգացմունքները և բարձր գաղափարները, որոնց սիրուն մեր սրանշերի ուղղմիկները գնամ էին կովկեցտ, թշնամու զեմ մարտնչում և ներըսանում—այսինքն Հայրենի Հող, լեզու, զուգուրդ, ընտանիք, մայր, կին, երեխան. Սովորական Միություն. խրախուսում էին նրանց, գովերգում նրանց սիրալի գործերը և անմահացնում նրանց հերոսական անձնագումբն Ապա անդրադարձավ երան, որ աշխարհում ցրված գաղութահայությունը ևս անմասն չի մնացել Հայրենական պատերազմին և երաղել նրա Հայրենական պատերազմին և երաղել նրա Հայրենական Այսօր այդ գաղութահայությունը վերադասնում է իր Մայր Հայրենիքը՝ Սովորական Հայաստան. նրանց թիվը հարյուր հազարներ է, միլիոն է, բայց Մայր Հայրենիք վերադարձել են մի քանի տասնյակ հազար: Նրանք բոլորը պիտի գան Հայրենիք և արտասահմանի Հայ գրողները պետք է ռաջակցեն ներգաղթի Հաջողությանը: Նրանք պետք է տանին գաղութահայերին այն խնդացից պատգամը, որ Սփյուռքի բույր հայերը Սովորական Հայաստանի գաղութահայությունը սեր գրակիցները պիտի երգեն ու արծարծեն սեր ցեղի Սովորական Հայաստանը, բոլոր հայերի Հայրենիքը, պիտի վառ պահեն ազգային ինքնապահության ազգային պատկանելու մասը, բոլոր միջոցներով պիտի ձգտեն հեռու պահեն հայությունը այլասերությունը: Նրանք պիտի կամուրջ դառնան տարածելու Սովորական: Հայաստանի կուլտուրայի արվեստի և գրականության արժեքները և ատեղման միասնական գրականությունը սովորական պահպանական դրամատիկա:

Ավ. Բասհակյանի քացման խոսքից հետո համագումարը լսեց Դրոշների Միության պատասխանատու քարտուղար ընկ. Հ. Դրիգությանի գեկուցումը օրակարգի առաջին հարցի՝ «Սովորական Հայ գրականությունը և նրա հետագա զարգացման ուղիները թիմացի մասին»:

Զեկուցողը մանրամասնորեն բնութագրեց սովորականի գրականության զարգացումը ըստ ժամանակաշրջանների, սկսած նրա ժամանակից մինչև մեր օրերը: Նա առանձնապես կանոնական պահպանական սովորական գրողների մասն եղանակության դրամատիկան առաջին ու երեսները:

մարների միջն ընկած ժամանակաշրջանի վրա:

Համագումարի սեպտեմբերի 26-ի առավոտյան և երեկոյան նիստերում լսվեցին ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր պետքեսոր Մ. Մկրտչյանի «Սովորական պահպանական», Մ. Հարությունյանի «Սովորական պահպանական արձակը և նրա զարգացման խնդիրները», Փիլոլոգիական գիտությունների թեկնածու Ռ. Վարդապարյանի «Սովորական պահպանական», Ս. Հարությունյանի «Սովորական պահպանական ամսաւում է Դ. Դեմիրճյանի «Հայրենական մեծ պատերազմի պահպանությունը», Հարսկից զեկուցումները: Իսկ սեպտեմբերի 27-ի առավոտյան նիստում լսվեց արվեստի գաստակավոր գործի Տ. Հախումյանի «Սովորական պահպանություն» հարակից զեկուցումը:

Հարակից զեկուցողները մանրամասնորեն նկարագրեցին սովորական գեղարվեստական գրականության զարգացման էտապները, օրինակներով և փաստերով ցույց տվին նրա հուժկու աճը լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության դրոշի տակ Արձակը, պտեղիան, դրամատուրգիան անցել են սոցիալիստական ուսալիզմի մեջող տիրապետելու ու նշան ուղին, հարստացել են գաղափարավես և գեղարվեստականորեն: Սովորական գրականությունը Հայրենական պատերազմի սարիներին նոր ծաղկում ապրեց: Սոցիալիստական Հայրենիքի պաշտպանության գաղափարը գրկորդ պլանի վրա մղեց բոլոր մշյուս ինդիքները, և մեր գրականությունը հուժկու ձայնով խոսեց սովորական հայրենասիրության, հայրենիքի նկատմամբ սովորական մարդկանց անհուն, անսահման սիրո մասին: Սովորական Հայաստանի սննտեսության ծաղկումը և՛ր կարող շնորհադառնալ Հայ գրական լեզվի զարգացման վրա: Այդ լեզվի հասունությունը, հարստությունը, նրա բարձր մակարդակն են վառ կերպով վկայում այդ տարիներին ստեղծված արձակ ու շափածու:

Սեպտեմբերի 27-ի առավոտյան նիստում լսվեց նաև ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Հ. Մամիկոնյանի «Դրամատինապատության վիճակն ու ինդիքները» գեկուցումը:

Զեկուցողը նշեց, որ քննադատական աշխատությունների մեծ մասը նմիւրված է հին, նախառավուցուցիոն հեղինակներին, սովորական գրողների ստեղծադարձությունները դեռևս չեն գտնվում գրական քննադատության ուղարկում:

Մեպահմբերի 27-ին սկսվեցին ժաքերի աշխույժ փոխանակությունները զեկուցում-ների շուրջը:

Ելույթ սանեցավ նաև Ն. Ռ. Տիխոնովը, որը նախ ՍՍՌՄ Սովետական Գրողների Միության նախագահության և նրա նորըն-ակր քարտուղարության անոնից սրտապին ոչչումնեղ Հայաստանի սովետական գրող-ների երկրորդ համապումարը և ամպա իր ելույթի մնջ ընդդեց այն խոշոր գերր, որ կատարել էն Հայաստանի սովետական դրողները թե Հայրենական պատերազմը

օրերին և թե նրանից առաջ նշեղով այն հպատար վերաբերմունքը, որով շրջապատշաճ են գրողները սովետական իշխանության որոք, Ն. Տիխոնովին ասաց. «Ենքն գիտենք և սիրում ենք հայ գրականությունը, որպիս մեր հղայրական գրականություն-ներից մեկը! Հայ դրականությունը հնագույն սերիցն է աշխարհում, նույնիսկ նրա տառերը գոյցություն ունեն ավելի քան մեկ ու կես հազարամյակի ծվ ահա դուք միտք արեք, թե ինչի՞ց է սկսել առաջին հեղինակը ունեսալով այդ այբուբենը և թե մարդկության



Համագումարի մի խումբ մասնակիցներ. նստած են՝ (ձախից աջ)՝ Ա. Խանիկյան, Դ. Դեմիրենյան, Լևոն Մեսրոպյան, Արագին, Մ. Մարյան, կանգնած՝ (ձախից աջ)՝ Հր. Քոչար, Զ. Որունի, Գ. Սարյան, Մկրտչյան, Հմ. Արքաս, Հ. Գառագազ, Ա. Վշտունի, Ա. Երեմյան, Հովիկ Ղուկասյան, Ա. Սիսակյան:

Համար հնչ նոր խոսքեր եք դուք գրուն այսօր այս տառերուի:

Տիխոնովը նշեց հայ ժողովրդի բարձրաբեր կուտուրան, նրա բարձր պեղպահն, դրական արձակը, որոնք տոգորված են Հայրենասիրությամբ և որոնց նպատակը հայրենիքին ու ժողովրդին ժառանիլն է: Այսուհետեւ անդրադարձով հայ ժողովրդի համախմբմանը Հայրենիքում՝ նա ա-

սաց, Ալբեմուտքի և Արևելքի երկրներից Հայերը վերադառնում են Հայաստան, որով հետև նրանք այս սրբազն հողում տեսնում են կյանքի ծաղկում, կյանքի ճշմարտություն և ապագայի մեծ ուղիները:

«Արտասահմանից եկած գրողները իրենց աշխով տեսան, թե ինչ է կատարվում այս տեղ և թե ինչ բան է Սովետական Հայաստանը: Այդ շատ լավ է, որ նրանք եկել են,

և մենք հավատում ենք, որ արտասահման վերադառնալով Հայաստանի այս ծաղկման ու ճշմարտության մասին կպատմեն ամենու ըեց արտասահմանում, Հերթելով զրապարտությունը, որպես վկաներ ցրելով կեղծիքը և ես մզելով կատաղի Հարձակումները»:

Նույն նիստում Վրաստանի Սովետական Դրողների Միության անունից ողջույնի խոսքով Հանգիս եկավ ընկ. Շալվա Դադիանին, որը խոսեց վրացի և Հայ ժողովուրդների դարավոր բարեկամության, Ֆրայթական դրականության մեջ կապերի, Սարաթ-Նուզիի, Գ. Սունդուկյանի, Հովհաննես Թումանյանի և Մյուսների մասին։ Նա նշեց սովետակայաց գրականության նվաճումները և վաստանություն Հայտնեց, որ Սովետական Հայաստանի գրողները, իրագործելով ՀամԿ(ր)Պ Կենտրոնի պատմական որոշումները, ձեռք կբերեն է և ավելի մեծ նվաճումներ։

Սեպտեմբերի 28-ին, առավոտյան և երեկոյան նիստերում, շարունակվեցին մտքերի փոխանակությունները։

Էստոնական գրողների կողմից ողջուկներ խոսքով հանդիս եկավ ընկ. Մարթ Ռապուզը. Նա հիշեցրեց, որ Հայ մեծ լուսավորիչ հաշատուր Արովյանը սովորել է Տարտուի համալսարանում և որ էստոնիայում լավ ծանոթ են Հայ գրականության նվաճումներին։ Հազարավոր կիրովետքեր են բաժանում մեզ՝ էստոն ժողովրդին Հայաստանից։ Սակայն այս հետափոխությունը յիսնգարեց, որ մեր ժողովուրդները դեռ անցյալ դարից կուլտուրական կապեր հաստատեն։ Տարտուի համալսարանի պրոֆեսոր Պարորտը 1820 թվին գալիս է Հայաստան և էջմիածնում բարեկամանում հաշատուր Արովյանի հետ, որը հետագայում դաշնում է խոշորագույն Հայ գրող։

«Եթե մայրենի լեզվով մենք կարողացանք կարգալ ծրանկացուն, հատվածներ ու Սասունցի Դավիթ էպոսից, Հայ ժողովրդական երգեր ու Հերթաթմեր, Հայ նոր գրականության կլասիկներ Հ. Թումանյանի, Ավ. Խոհճակյանի և այլոց գործերք»։

Սեպտեմբերի 30-ի առավոտյան նիստում իշմափումարը շերմորեն դիմավորից Բեյրութի ժողովրդի ձայնա թերթի խմբագիր Հ. Աղբաշյանին, որը ողջույնի փոսք ասաց Սիրիայի և Իրանանի Հայության անունից. «Պատմական եղակի համագումար մըն է ասիկա, — ասաց նա, — որովհետեւ կզուգացի. պի արտաքին պալմաններու հարկադրանքին

տակ, գարերով իրարժե բաժնված Հայ ժողովրդի երկու մեծ հատվածներուն՝ արևմտահայ և արևելահայ հատվածներուն, միակ հայրենիքի մը՝ Սովետական Հայաստանի մեջ համախմբվելու դորժին։ Դամական եղակի համագումար մըն է ասիկա, որովհետեւ անհիկա հայ ժողովրդի ազգային սիրավորումի գործին կործին նշուվ պատահականության մը արդյունքը չէ արտահմաննեն հայ առաջադիմական գրողներու նիրկայությունը սույն համագումարին, այլ հետևանք է պատմական իրադրության մը՝ հայ ժողովրդի ազգային մշակուրության իրողությունը իրականացնելու արագածական պարագաներուն կնկատենք Սփյուռքի Հայության անունով խոր երախտագիտությունը հայտնի ժողովրդական իշխանությունը։ Ահա թե ինչու համագումարի արտահմանյան պատգամավորներս սրբազնա պարտականություն կնկատենք Սփյուռքի Հայության անունով խոր երախտագիտություն հայտնի ժողովրդական իշխանությունը։ Հայություն ժողովրդի մեծ բարեկամ և առաջնորդ ընկեր Ստալինին, որուն ազգային արդար քաղաքականության շնորհիկ արևելահայ ժողովուրդը երկու անգամ փրկվեցավ բնաշնչումի վտանգեն, իսկ Սփյուռքի հարթաքանը կիրկվի երկարաժամ պանդիմական թեմենին։

Համագումարը ողջույնեց նաև գաղութահայ խոշորագույն գրող Կ. Սիմալը.

Նշելով որ Հայ ժողովրդի վերթերը տնտեսության ու կուտուրայի մարզում վիթխարի ու ապշեցուցիչ է, նա ասաց. «Ավելի քան 30 տարի ապրած լինելով կապիտալիստական աշխարհի ամենահզոր երկրում համարակալվում եմ ասել, որ Երևանի մզակույթային կյանքը իր բովանդակությամբ, իր արժեքով, իր ծավալով, ժողովրդական խավերում իր վայելած հսկա ժողովրդականությամբ և ապա ուրույն բնութագույն շատ ավելի բարձր է կանգնած, քան կապիտալի մեծ ներկայի՝ Ամերիկայի մշակույթային կյանքը։ Մինչդեռ մեծահարժուատ Ամերիկայում մշակույթի վայելքը վերնախավերին է պատկանում, Հայաստանի մշակույթի բոլոր պատուաները ժողովրդական բոլոր խավերի սեփականությունն են կազմում»։

Հոկտեմբերի 1-ի նիստում համագումարն անցավ օպակարգի երկրորդ Հարցի քննարկմանը՝ «Հայէկական արտասահմանյան արդի գրականությունը զեկուցումով հանդես ե-

կավ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու ընկ. Եղ. Թոփլամենը, Զեկուցման առթիվ բացված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ընկ. ընկ. Ն. Զարյանը, Դ. Դեմիրճյանը, արտասահմանյան առաջադիմ հայ գրողներ և. Մեսրոպյանը, Կ. Միտալը, Հ. Գարագաշը, Վ. Վահյանը, Զ. Որբոնին, Ա. Զարյանը, Հ. Աղբաշյանը, Ա. Երեմյանը, Հ. Դուկասյանը, Ա. Տիրոնյանը:

Արտասահմանյան հայ պրականության ներկայացուցիչները ողջուներով Սովետական Հայաստանի գրողների երկրորդ համագումարը՝ հիացմունքով էին խոսում հայ ժողովրդի նվաճումների մասին 26 տարվա ընթացքում։ Նրանք շնորհակալությունն հայտնացին կոմունիստական պարտիային և սովետական կառավարությանը համագումարի աշխատանքներին մասնակցելու հնարավորություն տալու համար և հույս հայտնեցին, որ շուտով բոլոր վտարանդի հայերը կվերադառնան իրենց հայրենիքը։

Այսուհետև համագումարը միաձայն Հայաստանի Սովետական Դրոշների Միության նախագահ ընտրեց ավագ բանա-

տեղը, Ստալինյան մրցանակի լառվեատ։ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ավետիք Խաչակրյանին։ Համագումարը ընտրեց Գրողների Միության վարչություն՝ ՀՀ հոգուց բաղկացած խված բոլոր զեկուցումների համար համագումարն ընդունեց ծավալուն բանաձևեր։

Սեծագույն ոգևորությամբ, դահլիճի բուռն ծափահարությունների տակ համագումարն ընդունեց ընկեր Ի. Վ. Ստալինին ուղղված ողջույնի նամակը, որի մեջ Սովետական Հայաստանի գրողները հավաստիացնում են պարտիային և կառավարությանը, մեծ Առաջնորդին, որ պատվով կկատարեն ՀամԿ(բ)Պ Կենտկոմի որոշումները և կստեղծեն ստալինյան մեծ դարաշրջանին արժանի գեղարվեստական գործեր։

Համագումարը նաև ողջույնի նամակ ընդունեց ուղղված Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Գր. Հարությունյանին։

Հոկտեմբերի 1-ին համագումարն ավարտեց իր աշխատանքները։





ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻ ՎՐԱ

ԳՐԱՄ ՄԻՒՍ.ՔՅԱՆ

ԻՄ ՏՈԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



րեան ենք մեկնում. Հայ աշխատավորության գրտինքով կերտված նորաշեն այդ քաղաքը, որը կենդանացավ, շունչ առավ միայն սովհտա-

կան իշխանության օրովի:

Դեռ իրանում եղած ժամանակ բազմաթիվ անգամներ լսել ու կարդացել էի Երևանի ձեռք քերած նվաճումների մասին:

Յուրաքա՞նչուր անգամ Հայաստանի սովհտիկացին տարեկարձը տոնելիս մեծ տեղ էր հասկացվում մայրաքաղաքին ու համամանորին խոսքում նորաշեն այդ օրբանի վերթիքի մասին: Այդ բոլորը ես գաղութում լսում, կարդում էի և խանգաղատանքով ապրում Մայր Հայրենիքով, Թայց լինել Հայրենիքում, մոտիկից տեսնել նրա նմանումները երբեք չ'ի երևակայել Հայրենի հողի վրա ենք: Գնացքը սուրում է արագ: Խնձ թվում է, թե երազ է այս, քաղցր ու անուշ երազ, թե ես Հայաստանում չեմ, Արարատյան դաշտի քաղցրաշունչ օդը չեմ զնլում, այլ գոնզում եմ օտար ու անժանոթ մի հերթափային աշխարհում:

Սակայն ոչ, դա փրականություն էր, ես Հայրենի հողի վրա էի: Զառամյալ մայրս թերքրանքով ինձ ցույց էր տալիք Մասիսները, որոնք միգապատ ցցվել էին. Ծեռվում: Նրանք ժպտում, աշքով էին անում մեզ, կարծես բարի գալուստ մաղթելով բոլորին: Ուղևորները խումբել էին վագոնների առջև, աղմկում, բացականչում էին, իրար ցույց տալով հեռվում կանաչների մեջ սուզված շենքերը:

Գնացքը Համբարք ընթանում էր առաջ: Մոտենում էինք քաղաքին, Սպասումի ծանր պահենք, անցան: Ամբողջովին հետաքրքրություն դրաբան եւ հայցացքով չափում էի Թեռունեցը, որտեղից պիտի Հայտնիքը հըրացք քաղաքը:



Վուամ Միւրայան:

Եղիքարշը սովեց, նրա սուլոցը արձագանք քսավ հեռվում, սուլոցները կրկնապատկվեցին, Մոտենում էինք Երևանին: Հեռվում երևաց կայարանը:

Չտեսնաված իրարանցում էր տիրում կայարանում: Մեզ դիմավորելու համար հավաքվել էր մեծ բազմություն: Բարի գալուստ էին մաղեռում մեզ, բոլորի դեմքը ժպտում էր բնրկանքից:

Եղիքարշը հոգնած հսկայի նման կանգ առափ: Դուքս թափվեցինք վագոններից, կառամատուցի վրա ենք: Լայնանիստ Երևանը մեր դիմացն է:

Անմիջապես մեզ կայարանից քաղաք են տեղափոխում, Պաժանիում ենք իրարից: Ավտոն մեզ տանում է քաղաք, մայրս լուս է լինում, նա հուբված է: Նա անհանականալի բառեր է շնչում և կամացուկ արտասանում է ՍՏԱԼԻՆԻ անունը: Խնձ թվում է, որ այդ նվիրական պահին իր ստացած շերմ ընդունելության համար նա իրեն երախտապարտ է զգում Մեծ Մարդու հանդեպ:

Հոյակապ բարաշեն շենցերով փողոցները հազորում են իրագ. մեծնաներով սրբնաց անցնում ենք բաղաքի միջով. Անսովոր եռուցիքը, իրաժանցումը, աղմանին ու ժմորը դարձացնում են մեզ, նման բան չենք տեսել: Թավրիքի խաղաղ ու անազմում կյանքի մոտ դա թվում է անսովոր, բայց հետաքրքրական:

Վերջապես մեցենան կանք է առնում, իշնում ենք, և մեզ առեղավորում են նոր բնակարանում: Մայրս և գույրս հոգեն են երկար ճամբորությունից, նրանք հանդստանում են, իսկ ես գույրս եմ նետվում փողոց, ժամերով թափառում: Անթիվ նոր փողոցների եմ հանդիպում, մեկը մուսից գեղեցիկ, մեկը մյուսից հոյակապ, բայց ոչ մեկի անոննը ժեռ շփտեմ: Մի թիւ շփոթված ու երկուսով շարունակում եմ գեղերումներս, իմ ոեմ հանկարծ մի լայն հրապարակ է բացվում, որի մի ծայրին կանգնած է անմահ վ. Բ. Լենինի հրաշագեղ արձանը: Լենինի, Նալբանդյանի, Աբրյանի, Ստալինի անվան փողոցները իրենց շքեղությամբ զարմացնում են ինձ: այդ բոլորը կառուցվել է Սովետական իշխանության օրոք, հայ ազատագրված աշխատավորության միահամուռ շանքերով:

Ստալինյան պողոտայի վրա ծառացած է օպերայի վիթխարի շենքը: Նա կառուց լած է ճարտարապետական անգերազանցելի արժեստով, ամեն ինչ այլունեղ գեղեցիկ է ու ակնահած: Օպերան դյութում է անցորդին:

Երեանը բազմամարդ մի բաղաք է, նա ապրում է տեսնված վերջիք: Նա համառուն ծագալիում է զեպի մօտակա բլուրները, զեպի մերձակա անմարդաբնակ դաշտները: Զանգվի տվիերը զերծ շեն մնացել այդ համար հետապնդումից: Գեսիր աչ ու ծախ ափերին, բնական ամրությունների վրա, որպես լեռնային արդիվների բների թառել են բաղաքացիների հողաշեն տները: Երկու տանյակ տարվա ընթացքում բաղաքը դարձել է անձնանաշելի: Երբեմնի հողաշեն ու անկենդան բաղաքը վերածվել է արդյունաբերական խոշոր ու կենսախնդ կենտրոնի:

Մայրաքաղաքը մասնավորապես գեղեցիկ է վիշերը, էլեկտրական թանձր զույգի տակ բաղաքի բազմամարդ փողոցները կենդանառում են, ժիորդի լեցվում:

Երեանը համալսարանական բաղաք է, դա Սովետական Հայաստանի մտքի օջախն է, Ո՞րքան հոյական կրթական ու գիտական հատառություններ կան այստեղ՝ Մոլոտովի անվան Պետական համալսարանը, ման-

կավարժական, պոլիտեխնիկ, բժշկական, անասնարութական, գյուղատնտեսական և այլն բազմաթիվ ինստիտուտներ:

Ընդունելություններն ակնվայր են. Համազարանում և ինստիտուտներում բազմաթիվ դիմումներ կան, շրջաններից եկել են Հարյուրամբ ուսումնածարավ երկարացներ հավեցնելու իրենց ուսման ծարավը:

Ես նոյնպես զնում եմ համալսարան, ներկայանում ուկտորին և այցելության նպատակը հայտնում իրեն: Բարի մարդ է, ծպտում է և սիրով ընդունում ինձ: Նրան հետաքրքրում են արտասահմանից եկողներն իրենց կրթական ցինգով:

Ես համալսարանից դուքս եմ գալիս թեմնացած սրտով. Հպարտ եմ և այդ ամենի է խանդակառում ինձ: Ես արդին ուսանող եմ և ապագայի Նեանկարները ոգեշնչում են ինձ:

Սեպտեմբերի երեք վրա է հասնում: Ժամը ութ և կեսին քայլում եմ զեպի համալսարան: Կես ժամ ուշացել եմ, բայց շեմ շտապում, կարծում եմ, որ մեզ մոտ՝ նրանում ընդունված սովորության համաձայն համալսարանական առաջին օրը ուզ կսկսվի, պարապմունքն ըն լինի, այլ միայն կժանդապանան ուսմանության հետ, հետևաբար շտապելու կարիք չկա: Սակայն զարմանքս մեծ է լինում, երբ համալսարանի սեմից ներս մտնելիս ինձ պես ուշացած ընկերներից իմանում եմ, որ պարապմունքն արդեն սկսվել է և դասախոսը կարգում է իր լեկցիան: Ամոթօհար և գլխիկոր ներս եմ մտնում մեր լսարանը, բոլորը հետաքրքրությամբ իմանում է զեմքը, բայց մի պահ միայն: Նա հարցում է ուշացմանս պատճառը: իմ պատասխանը լսելով բարեսարությամբ ծըպտում է, ապա թույլ տալիս նստելու:

Հասրանում հնում է զասախոսի թափ ձայնը, ուշացիք ուսանողները լարված տնկընդում են նրան:

Ես հետաքրքրությամբ ու մի ներքին մըղումով դիտում եմ շտաբը, տեսնում մի բանի տասնյակ երիտասարդների, նրանց լարված ու խոնան անհագ ծարտավ, նրանց զինվում են պիտության նոր ուսմունքով և գոտեպնդում համամալրդկային նպատակների իրականացման համար:

Ուսումնական առաջին օրը հարանման մտորումների հետ միասին վերջանում է: Ես ժամը երկուուրին վերադառնում եմ տուն՝ երկանում իմ երջանիկ վերածնուուղը ապրելու համար:



ՃԱՎԵՆ ԹԱՐՈՒՂՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔ

Ճավեն Թարուղյան



այստան, երկիր դրախտավայր...

Այսքան միայն լսած ու երգած էինք, լավ կհիշեմ, երբ փոքր երեխա էինք: Երգ մընէր սա, որ քնքորեն կթրթուր

մեր շրթներուն վրա, երգն էր այն երկրին, որուն, ավաղ, մեր մատղաշ ուղեղիսերը չէին հասկցած, և զերշապես, երգ մըն էր սա, որ ամենեն անուշն ու քաղցրն էր մեզ համար...

Բավական տագիներ հոգ, որոնք անցան դանդաղորեն օտար երկրի մը մեջ, ըմբռնեցինք, թե այն երկիրը դրախտավայր, զոր Հայաստան կոչած էինք, է մեր հայրենիքը, հայրենիքը հայում...

Որքան ցավ պատճառեց մեր մանուկ հոգիներուն, որ դրախտությունն էինք ունեցած շնովերու և շապրելու մայր հողին վրա:

Մեր ծնողները մեզ պատմեցին ամեն ինչ, պատմեցին, թի ինչու որուս արտաքսված են այդ հարազատ օջախից, պատմեցին թի թուրքն է եղած անհայրենիքության պատճառը...

Այսպիս պատմեցին մեր ծնողները, երբ մանուկ էինք մենք...

Ու այդ վայրիլյանից զգացինք հայրենիքի կարուց: Հայրենիքի արկից, Հայաստանի հողից զրկված ըլլալիս մնձ վիշտ պատճառեց մեզ՝ այդ մանուկ հասակին:

Ու երգեցինք սիրակարութ, երկեցինք

զախ, կապվեցանք նրան, կարդացինք ու երազեցինք զախ...

Կամահերն տարիներ, տարիներ հայրենաբաղձության, տարիներ ստար երկրներու մեջ:

Ու վերշապես ձայն լսվեցավ մեր երկրեն, որ ցնծությամբ լցրեց արտասահմանի ողջ Հայրենակարսու ու վտարանդի հայության սրտերը: Զայն մըն էր սա, որով Հայաստանի կառավարությունը աշխարհի շորս ծագերում սփոված հայերը իր հարազատ քաղաքացիները կկոչերի:

Զայն մըն էր, որ կհնչեր Հայաստանեն, նրեանի ուղիոկայանեն...

Ակսանք հայրենիքը տեսնելու հույս մը շոյել: Սագող արևի մը արշարույն էր սա, որոն առաջին ճառագայթները սկսան նըշմարմիլ:

Անկի հետո էր, որ հայրենիքին ճկող ավետարեր ծիծեռնակները ավետեցին ազգահավաքան հրավերը Հայաստանեն:

Վերշապես 1946 թ. վենաբար 1-ին էր, որ ներդազի արձանագրություններն սկսան ինչ անսահման ցնծություն... Զէինք հավատար կարծես...

Ու դարավոր երազն էր սա, որ մարմին կստանար...

Մեր պատմության արդումով գրկած էքերը շատ մը բռնի ներգաղթներ արձանագրած

են. բազմաթիվ հայորդիներ, հալածական փախուստ տվին հայրենիքն, աշխարհի բուսափոր և մութ անկյուններում ինչած, լցոցան անմիտիթար և անհույս... ու վլւցին, հայրենակարոտ հոգիներն իրենց, աշխարհին բաց, օտար և անհարազատ ափունքներու միջի.

Սակայն բախտը ժապաց մեզ! Կմուճնար երանեղի հոմանիւս ամիսը, այն պատմական ամիսը, երբ այնքան երազված ներգաղթի կարավանը պիտի շարժվեր գեպի հոն, գեպի լույս, գեպի Հայաստան, այն ամիսը, որ գաղթականության վերջը և հայրենիքի տեսնելու առաջին օրը պիտի լիներ:

Սրբատրիփ կսպասեինք մեր հերթին, ինքանցնիս ամեննեն երջանիկը պիտի զգութինք, եթե բախտ ունենայինք առաջին կարավանով ներգաղթող ըլլազու... Սակայն մեզի լիմենակվեց այդ, հույսերնիս սպահցինք երկրորդին:

Ու վերջապես 23-ին հունիսի գեպի հայրենիք շարժվեց առաջին կարավանը... 23 հունիսի... դեպի հարազատ ափեր թռչող առաջին ծիծեռնակներու թվական...

Սա էլ ներգաղթ մըն էր... Եատ ներգաղթներ տեսանք, աղյուն արցունք լացինք, ամեն մի կարավան անծանոթ ափեր քշվելուց:

Սա էլ կարավան մըն էր, սակայն դեպի լույս և ապահով ապաստան վնացող, ուրկնու մի անգամ էլ որևէ թշնամի շպիտի կառողանար քշել, վտարել դուրս....

Երկրորդ կարավանով մեկնիլ - լիմենակվեց մեր ընտանիքին ալ, ինչ մի երպ կարող եմ արտահայտիլ ու նկարագրել այն ուրախությունը, որ զայցինք այդ վայրկյանին:

Հունիս 10-ին էր, որ մեր նավը շարժվեց դեպի հոն, գեպի երկրորդ դրախտավայր, զոտ մանկության աաեն երգած էի....

Գրեաթառնվեցանք ու լացինք այդ բաժանման պահուն, սակայն սա լաց մըն էր թեթև ու վերջին, լաց մըն էր սա ուրախության, կրածնվեինք իրարմե հայրենիքի մեւ տեսնվելու համար:

Արագորեն կսահեր «Թրանսիլվանիան» Պեյրովի կապույտ ափերնեն... Պիտեցի Պեյրովը վերջին անգամ, գիտեի, որ մանկական ու պատանեկան թարմ հիշատակներ հոն կթաղվեին, սակայն մի քանի օր վերջ հայրենիքի ծոցում պիտի մոռանայի զանոսք ու պիտի սկսվեր նոր կյանք մը նոր եռանդով....

Ընդարձակ զուրի տարածություններ ճեղքելով կանցնեինք և կզայինք մոտեցումը հայրենիքին:

Ու պայծառ առավոտ մը նշմարվեցավ թաթումի գեղածիծաղ համայնապատկերը. զնծության աղաղակներ թռան մեր թերաններնեն... Քիչ վերց, նավն արդեն մտած էր նավահանգիստ:

Առաջին անգամ էր, որ պարզվեցավ մեր ապշահար աշքերում դրոշը կարմիր, կարմիր հողի վրա:

Առաջին անգամ էր, որ լսեցինք Սովետական հիմնը սովետական նվազախումբ է, սովետական հողի վրա....

Այն երջանկությունը, որ մեր այրած սրտերը ողողեց, սահման շոմներ և նույնիսկ ոչ մի բառ չի կարող գտնվիլ նկարագրելու գայն: Այն պահում էր, որ առաջին անգամ մեր դարավոր վշտերը և ցավերը իսպան խուլու տվին մեզմէ....

Նավը արդեն իսկ միացած էր քարափին ու անհամբեր կսպասեինք ցամաք իշնիլ:

Կարգը մերն էր... Ու գանգաղործն իշա սանդիսմատերն ու վերջինին վրա կանգնած սլացիկ կերպով հիշցի այն բորորը, դիտեցի հողը սովետական ու իշա ցած... Լիեկորական հոսանքը անցա կարծես....

Արգեն սովետական հողի վրա էի... Համբ ըայրերով կառաջանայի դիտելով ծովոր ու հավու... մտարերեցի այն բռնի ներգաղթներըն ու այս երջանկագիթ ներգաղթը... Հուզմական հուզմականին իսկ այն գաղթականի ցուպը, որ անբաժան եղած էր հուզմող հայության, ծովը նետած էինք կարծես, երբեք ու երբեք զախ լրունելու հանգստությամբ...

Սովետական հողի վրա էինք զիմա...

Հնտանիոք ման գալու պահուն աղբյուր մը նշմարեցինք ու բոլորս առաջին զուր խմելու բախտը ունեցած լինելու համար խուժեցինք գեպ այդ կողմը, բիշ մնաց, որ խողովակը բանդեինք:

Խմեցինք զայն: Չեմ գիտեր, ինչպես զիրար դիտեցինք... կարծես փոխված էինք ու անձանաշելի... ինչ թաղցր շուրջ սովետական երկրի զուրն էր սա....

* * *

Ծովեկառքը կտարար Սովետական Վրաստանի կանաչազարդ լեռներու և դաշտերու մերն ու ամեն վայրկյան կարծես կղզանք Հայաստանի հոտը...

Կես պիշեր էր, լսեցի մի ձայն, որ կըսիր՝ Շայաստան հասանք: Ընդունու ցատկեցի տեղես ու գլուխ լուսամուտեն դրւու հանեցի ապշահար...

Անուշ զեփյուր մըն էր, որ հպեցավ դեմ-

թիս... Սա տարրեր օգ էր, սա հայրենի անուշ հովիկն էր, որ կփշեր ծառեղու ընդմիշն... արժաթափրփուր վետակի կլկլոցն ալ տարրեր ծայն մ'ուժեր կարծես. հայրենի քաղցրիկ չուզն էր սա...

Կանգ առաօտ շոգեկառը մթության մեջ...

Սուրբ հոգի վրա կանգ էր առած. իշխ ցած ու վերցուցի քարը հայրենիքիս, քարը սուրբ, ու տարի շրմանը...

Երգած ու երազած հայրենիքի քարն էր սա, քարքարուներու կոմիկրտած քարը պապերու, պանդսառթյան ատեն մեր արած հոգիներու դարման ըլլալիք քարը և վերցապես քարն էր այդ երիտասարդ քանհինդ ամյա Հայաստանիս, Սովոտական հայրենիքիս քարը, զոր երկրազածությամբ կհամբուրի ալրած շրմերամ...

Ժամերը շարունակ կսահման ու ահա հայրենի արևը կսկսեր կարմրեցնել լեռների երկնամերձ զագաթները, որ կարծես վերակենդանություն մը ստացանք կենսատու արեպակի ճառագալթներն...

Ամեն ինչ նշմարվի սկսան. կդիտեի արցունքոտ աշքերով այգիները փոված լանջեին վրա լեռներու, Փարթիկաները, որնց բովերիկներն ելած բարակ ծովիերը մինչև ներկինք կ'բարձրանային: Դիտեցի բոլորը, դիտեցի ամեն տեղ ու դիտեցի միշտ:

Անցանք կայարաններ կարպով, որ հայրենակիցներ նկած էին մեզ նոցադուրելու. վերցապես անսահման անհամբերութեան

վերջ կառաշարը դանդաղորեն կմտներ երեւան:

* * *

Հայրենիքի տագուկ ծոցում, Երևանի մեջ է, որ կգրեմ, Արարատը դիմացիս:


Երկու ամիս անցել է այն օրեն ու կը զամ, որ այլևս չեմ այն պատանին, որ օտար երկրի մեջ գիտեր իր անհայրենիք ըլլալը, քաջ գիտեմ, որ հոս շպիտի գտնվեն մարդիկ, որոնք հարցնեն ինձ՝ «Դուք հայրենիք ունի՞ք»:

Ու մենք, երանելիներս, որ գաղթական ու հայրենակարու վերշին սերումդը եղանք, նույնպես հայրենիքի ծոցին մեջ ապրելու բախտն ունեցանք: Բառ կարո՞ղ ենք գտնիլ արտահայտելու մեր սրտարուին և անկեղծ երախտագիտությունը հանդեպ Սովոտական հզոր Միության:

Անսահման զնորհակալության տուրքի բաժին մըն ալ ունինք մեր քաղցրիկ Հայաստանին, որ նյութական ու բարոյական ամեն զոհողությունները չնկանեց, ամենադժվարին ներգաղթը կազմակերպելու:

Ու մեր մարուր ու անկեղծ մաղթանքները կընենք հանճարեղ մարդուն, ժողովրդների աղաւոռնեյան Ռահնիւրային, մարդսաեր մեծ Ստալինին:

Քայլ' գու, ո'վ քաղցրիկ մայր Հայաստան: Ժամեր' ավելի, քանի քո վերելքին սատարող, քեզ համար զոհվող որդիներ պիտի լինինք:



ԳՐԻԳՈՐ ԿՅՈՒԼՅԱՆ

ՀԱՅՐԵՆԱԴՐՁԻ

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԵՍ



Գրիգոր Կյուլյան

 այրենադարձ երկրորդ կարագանով վերադարձա հայրենիք։ Վերջապես կդառնվիմ հայրենի հողին վրա, այն հողին վրա, ուր դարեր շարունակ ապրած ու ստեղծագործած են իմ հայրերը, ուր ամեննեն աննըշան իրն անցամ ընտանի լեզվով մը կխոսի մեր սրտին հետ։ Տարիներ շարունակ ապրած ու զոյատևած էի այսօրվան երազով։ Այսօրվան հնուանկարներ, որ արտասահմանի մեջ, հակառակ դժվարին առօրյալի մը պարտադրած բոլոր նվաստացումներուն, կանգուն պահած էր մեր միտքն ու ուգին։

Սովետ կենտրոնական կառավարության այն հրամանագիրը, որով արտասահման գտնվող բոլոր հայերը արտօնված էին վերադառնալու Սովետ Հայաստան, անօրինակ խանդավառությամբ մը ոգնորած էր ողջ հայությանը։ Վերջապես դարերով սարահալած հայության փայտիալած երազն իրականացալ Հայությունը պիտի վերջապես համախռնմք ապրեր իր հայրենի հողին վրա։

Մարդկային լեզվին կերտած բառերով դժվար կարելի է արտահայտել այն անօրինակ հուզումն ու խանդավառությունը, որ էլեկտրական հոսանքի մը պես սրտե ի սիրու անցնելով տուներեն դուրս եկավ ու պոռթկաց հրապարակներուն վրա իրարահաջորդ հսկայական հավաքություներու մեջ։

Անձնապես շկրցա անմիջապես հավատալ լուրի ճշտության Կըսեի, Մի՛թե կարելի է, որ դարերով երազած բան մը, որուն համար զոհված էին մեր ժողովրդին լավագույն զավակները, իրականանար մեկ վայրկյանին մեց, Բայց կարելի չէր կասկածել թերթերը մեծ վերտառություններով հաղորդած էին բարի լուրը. նույնպես մեղական ձայնափյուր պաշտոնապես զայն հաղորդած էր ի լուր աշխարհի Ուրբեմն լուրը ստույգ էր։ Բայց ե՞րբ արդյոք պիտի սկսեին արձանագրությունները։ Անհամբերությունը ծայր տված էր արտասահմանի հայության մեջ։ Ծատերը կպատրաստվեին լուծարի ենթարկել իրենց գործերը, ժամ առաջ հայրենադարձ առաջին կարավանով վերադառնալու համար հայրենիք։

Մինհստրների Սովետին կից արտասահմաննեն ներգաղթող Հաֆերու Էնդոնման ու Տեղափորման Կոմիտեին մեկ պաշտոնական նամակը ուղղված Սովետի և կիրանանի Ազգային Խորհուրդներուն և Ս. Հայաստանի Քարեկամներու Միության նախագահին, կուգար իր լրումին հասցնելու Սովետի և կիրանանի հայության մեջ ծայր տված խանդավառությունը։ Արձանադրությունները պիտի սկսեին շրատով և առաջին կարավանի մեկնումի ամիսն ալ արդեն հայտնված էր։

Երբ արձանադրություններու թվակամը հայտարարվեցավ ու օրը հասավ, առաջին օրն իսկ արձանադրվեցա։ Ամեն ինչ մեկ

օրվա մեջ օտար լուրձավ ինձի. կապերս հանկարծ կորդիցան այն երկրին,ուր ապրած էի վաղ մանկություննեւ ի վեր ավելի քան քառասուրեց տարի. կուլքին ժամ առաջ մեկնի Սովետ Հայաստան,Կըսեիլ վերջապես պիտի մեկնե՞մ այն երկիրը, որ մեր ժողովրդին անոնք կկրե, որ մերն է, մերը եղած է ու մերը պիտի մնա հավիտյան: Հուու որ հանդինի ասել, որ ես օտար եմ, պիտի թոթափեմ անտարբերությունն և իմ լեզուս խոսող ժողովրդին մեջ իմ պատասխանատվություններս ատանձնած պիտի վերագտնեմ կյանքը քաղցրացնող, անոր իմաստ ու նպատակ տվող իմ ունակություններու զարգացումը: Արդեն առանց սպասելու, որ անոնք հայտարարվեր, սկսած էի պատրաստվել: Վերջապես երջանիկ ժամը հասավ երկրորդ կարավանը պիտի մեկնեի հայրենիք:

Հուլիս 10-ին արդեն «Թրանսիլվանիա» նավուն մեջն էի: Նավը տոնական կերպարանք մը ստացած էր: Ամեն ոք ուրախ էր, դիտեր, թե ասիկա իր վերջին տեղաշարժը պիտի ըլլար, գաղթականի ցուլը պիտի նետվեր թանգարան, ինչպես նախապես հայտարարած էր Ս. Էջմիածնի պատվիրակ պրոֆ. Աշոտ Աբրահամյանը:

Սուրբացող նավին կտրած հեռավորության մեջն Փելլութը կամաց կամաց սկսակ անտեսանելի դառնալ: Նույնպես սկսան կամաց կամաց ուրվանալ իրանանի լինենքը կորուսիլու համար բրաբրովին հեռավորության մեջ, երկինքն ու ծովը միացան իրարու: անոնց միջև կուրքար «Թրանսիլվանիա» նավը հայրենաբաղ զանգվածներու տաք ու բարախուն սիրու վրան:

Վերջապես հասանք Բաթում, նավը դանդաղեցուց իր ընթացքը, նազանքով մոտեցավ քարափին, ուր ծաղկափունշերով սպիտակագեստ կիներ սկսան թաշկինակներ ճոճել: Նավը անօրինակ խանդավառությամբ մը թնդաց Սովետ Միության և Սովետ Հայաստանի հիմներու առույգ ու պայծառ շեշտերուն տակ:

Քարափը պատասխանեց իր երկրուն:

Ընդուման կայաններու ճակատին, կարմիր ժապավեններու վրա գրված էր, «Թարքի կալուստ Սովետական Հայաստան վերաբերող մեր Հարազատներին, Սովետական Միության նոր քաղաքացիներին»: Քարափին վրա կսպասեին ներգաղթի Կոմիտեի ներկայացուցիչները: Անոնք նավ քարծրացան և տողագործվելով՝ քարփ գալուստ մաղթեցին: Հուպիչ էր տեսարանը: Ներգաղթող հայերու զանգվածը կեռազեներ

նավու կամրջակին վրա, անհամբեր էր ժամառաջաք իջնելու Պաշտոնական անհրաժեշտ ձևականությունները լրանալին վերց, բոլորը իջան ցամաք և անհրաժեշտ թշկական խնամքը առնելի նետու տեղակարգացան ընդուման կայաններու մեջ:

Երեք օր Բաթում մնալի հետո, տւր արծանացնք եղբայրական լիրաց ժողովրդի ամենան չերմ վերաբերմունքին, վերջապես շարժեցանք դեպի Սովետ Հայաստան: Մեզմե ոմանք իշան կիրովական, ուրիշներ՝ կենինական և Հոկտեմբերյան և մյուսներն ալ երեսն ևս երեսն իշնողներու մեջ էի:

Դիշերով հասանոր բնակարասնաւ Ընթրիքի համար մեզի բերին ուստիչիք: Հոգնած էի շատ, ջուտ մը քննեցաւ:

Առավոտուն, հանելի անակընկալը ունեցազիս գտնելու համապատասխան բնակարասնի մը մեջ, Պարտեզով տուն մըն էր, Բակում կային ընկույզի ու գեղձի ծառեր: Փոքր առու մը շուր կրամներ ածուներուն: Տանտերս նույնպես շատ ազնիվ տիկին մըն էր, 38-ին ներգաղթած ժունաստանն: Ամուսինը կորսցուցած էր հայրենական պատերազմին, սակայն հակառակ իր ակներն տիրության, բնավ ընկնված չէր. ընդհակառակը՝ հպարտ էր, որ իր ամուսինը պատվով կատարած էր իր պարտականությունը: Թեև ան չէր վերադարձած տուն, սակայն հայրենիքը տունակուի չէր եղած թշնամինն: ու այս էր կարեւորը: Անզուստ կատաղությամբ մը լցցված էր վերմաններուն հանդիպ, որ խանգարած էին իրենց անդրբությունը, ոչող չէ, — կրսեր, — էի բայ կըլլանք, — քանի որ շահեցանք պատերազմը. մեր երկիրը աշխատանքի երկիր է. բավական է, որ աշխատելու կամքն ունենաս, գործը անպակաս է: Խավ էք ըրեր, որ եկեր էք. Թող գան, բոլորը թող դան. կշատանանք, էլ ավելի լավ կըլլանք, հերիք է, որ օտարաներուն երկիրը շնչուցինք: Հիմի ալ մեր երկիրը շնչնենք. մեր շնչնածը մերն է, ու մերը պիտի մնա միշտու:

Ազնիվ տիկինը ամբողջ օրը ընկերացավ ինձի, պիտեր, որ տակամին քաղաքին անծանիթ էի և ոժքարություններ պիտի ունենացի փնտրած տեղերու գտնելու համար:

Խնդպես նախապես հանձնարարված էր, առաջին օրն իսկ ներկայացան մեր ույունի նախագահին:

Առաջին անգամն էր, որ ներկայությանը կպտնվեի սովետական պաշտոնյայի մը: Հու պաշտոնյաներու վերաբերումը բոլորովին տարբեր է: Ընկերու քառը շնչած է բոլոր հեռավորությունները. հոս պարտադիր

Նվիրապետության տեղ, մարդիկ իրարմն կտարբերին միայն իրենց զերով՝ Պաշտօնայան ու պարզ քաղաքացին իրարու. Հանդիպ տոգորված են փոխազարձ հարգանքով և իրավունքի ու պարտականության գիտակցությամբ; Այս իրողությունը հաստատել մեծագույն ուրախություններես մեկը եղավ:

Նախագահը հարցուց, թե արտասահման ինչ գործով կզբակվի, համապատասխան գործ մը հաջթայթելու համար ինձի այստեղ, նրբ ըսի, թե գրելու որոշ շնորհ ունեմ և ուսումն թերափարու է, ինձի հանձնարարեց, որ ուսումն շարունակեմ Պետ. Համալսարանի մեջ: Հոս բարձրագույն կրթություն ստանակու համար ուսանողները պետություննեն թոշակ կստանան: Պարտապմունքներն բաժանված են երկու հերթի. ուսանողության մեկ մասը առավոտյան կերթա, մյուս մասը՝ կեսօրին հոր, այնպես որ կարելի է ուսանելով հանդերձ պարապել նաև մեկ ուրիշ գործով: Այս պարագան նկատի ունենալով հետեւցա նախագահի թելադրության և այժմ կուսանիմ Պետ. Համալսարանի ֆիլոլոգիական ֆակուլտետի հայկական բաժնին մեջ, Միաժամանակ հոդվածներ կպատրաստեմ հանդիսներու համար:

Ամեն օր ավելի կսկսիմ սիրել նրեանը: Նոր նրեանը, մանավանդ իր արդիական շենքը, որոնց մեջ հաջողապես օգտադր-

ված են մեր հարտարապետության տուշմիկ մոտիվները, երովական մեծ քաղաքի մը կիրապարանքը ունի: Դիմավոր հրապարակներուն վրա զետեղված են բարձրախոսներ, սրոնք օրն ամբողջ հձայնասփռեն ուսդիուկայանի գեղարվեստական և տեղեկատվական շաղարդումներու, երբեմն բաղցր ու ծանոթ երդի մը կամ նվազի մը հնչողուներով հապշտապ քայլերը անցորդներու: Ամեն ժամ ականշիդ կհասնեն մայրենի բարբառին հնչողուները, էտվյունդ լեցնելով Հայրենի ու հարազատ մթնոլորտով:

Արդին մեր ներկա բնակարանները ժամանակավոր են. պետական որոշումով յուրաքանչյուր ներդադթող ընտանիք պիտի ստանա Գող և ՅՈ Հազար ոուրի, սեփական բնակարան կառուցելու համար: Սեփական տոն ունենալ կնշանակն միերջնականապես դաշնակել այն հոդին հետ, ուր կապրիս և որուն շփումք ամեն օր պիտի զորացնի և իմաստավորի բու կյանքը. որ պետք է շարունակություն մ ըլլա և ոչ վախճան: Ասիկա մեկըն է տակամին սովորական իրավակարգի այն անթիվ բարիքներեն, որոնց համար միայն ու միայն երախտապարտ կրնա ըլլա սեփական հալրենիքին մեջ մերահաստատված աստանդական հայը:



ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԹԻՉՆԵՐԻ ԶՐՈՒՅՑԸ ԱՆԳԼՈ-ՍՈՎԵՏԱԿԱՆ
ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵԼԵԴԱՑԻԱՅԻ ԱՆԴԱՌՆԵՐԻ ՀԵՏ

 բնանում գտնվող անդու-սո-
վետական բարեկամության
ընկերության դելեգացիայի
անդամները հունիսի 29-ին
գրույց ունեցան տեղական մամուլի ներ-
կայացուցիչների ֆեռ:

Անդիքական հյուրերին տրվեցին հետևյալ
հարցերը.

1. Ի՞նչ տպավորություն են ստացել նը-
րանք Սովետական Հայաստանի, նրա տվյալ-
տեսական և կուլտուրական շինարարության
մասին:

2. Ի՞նչ կարծիքի են դելեգացիայի ան-
դամները արտասահմանյան հայերի իրենց
հայրենիքը վերադառնալու մասին:

3. Ի՞նչպես է վերաբերվում Անդիքայի
հայարակայինությունը Թյուրքիայի կող-
մից զավթված բնիկ հայկական հողերը
վերադարձնելու հարցին:

Դելեգացիայի ղեկավար պ-ըն Ստենլի
էլվանը հայտարարեց.

— Ակներե է Հայաստանի ժողովրդական
ամբողջ տնտեսության մեծ առաջադիմու-
թյունն ու զարգացումը, որը տեղի է ունե-
ցել Սովետական իշխանության գոյության
ժամանակաշրջանում: Մենք նշում ենք նաև
քնակշության կենսամակարդակի բարձրա-
ցումը: Մեզ վրա առանձին տպավորություն
դորժեց ելակրի էլեկտրիքիկացման վիճակի
պլանը, ինչպես նաև երևանում իրադրու-
ված բնակարանային շինարարությունը:

Երբ մենք գրուցում էինք ուսուառելիկա-
յի կուսավորության Մինիստրի հետ, —ա-
սում է այսուհետև պ-ըն էլվանը, —մենք
իմացանք, որ բնակչության 30 տոկոսը սո-
վորում է գործոցներում: Պետք է փոստվա-

նել, որ մենք սկզբում դրան չհավատացինք:
Սակայն գործի հետ մոտիկից ծանոթանա-
լով մենք համոզվեցինք, որ զա ծիշտ է,
որովհետև հայ բնակչության զգալի մեծա-
մասնությունը կազմում է երիտասարդու-
թյունը:

Անդիքական պառամենուի անդամ Ճուղի
Սրբարձնը հաջորդեց իր տպավորություն-
ները Սովետական Հայաստանի կողմուրա-
յի մասին:

— Սովետական Միություն ժամաներուց
հետո, —ասաց նա, —մեր դելեգացիան ա-
մենուրեք տեսակ բնորդանուր ծգտում դե-
պի ուսումը: Պետք է ասել, որ այնպիսի
լայն մասշտաբով ուսուցում, ինչպիսին կա
Հայաստանում, մենք ոչ մի տեղ չենք տե-
սել: Ռեսպուբլիկացի կառավարությունը
բաց է բողոքում մեծ միջոցներ լուսավորու-
թյան գործի համար և զա ապագայում ան-
շուշտ կտա իր պատուները:

Մեզ վրա հաճելի տպավորություն թողեց
այն, որ Սովետական Հայաստանում կան
շատ թատրոններ, և այդ թատրոնները,
ինչպես նաև Սովետական ամբողջ Միու-
թյունում, հանրամատչելի են, ինչպես աշ-
խարհում ոչ մի տեղ:

Դելեգատները նշեցին Սովետական Միու-
թյունում թատրոնական բեմադրությունները
հակայական դաստիարակչական նշանակու-
թյունը:

Այն հարցին, թե ի՞նչ կարծիքի են դելե-
գացիայի անդամները արտասահմանյան
հայերի Սովետական Հայաստան ներգաղ-
թերու մասին, պատասխանեց դելեգացիայի
ղեկավար պ-ըն էլվանը:

— Այդ հարցում, — ասաց նա, —մեր դելե-
գացիայի և անդիքական հասարակայնության

կարծիքները միառնական են: Մենք իմացանք, որ Հայաստանի կառավարությունը մեծ հարավորություններ է տալիս ամբողջ աշխարհում ցրված հայերին հայրենիք վերադառնալու համար: Մենք գտնում ենք, որ դա Հայաստանի համար մեծ գործ է: Ենք ավելի քան երշանիկ կլինենք, եթե իմանանք, որ բոլոր արտասահմանյան հայերը հնարավորություն կտանան վերադառնալ իրենց հայրենիքը:

— Նույնիսկ բաղաբականապես քիչ զարգացած անգիտացին, որը ծանոթ չէ Հայաստանի պատմությանը, գիտե, որ թյուրքերը կոտորել են հայերին, դիտե, որ այդ ժողովարդը շատ է տանջիկ և նա նրան համակրում է, — ասաց պ-ըն Թիշոպպը: — Անգիտա վերադառնալուց հետո մենք կաշխատենք այդ գունի շնչավորված համակրանքը դարձնել ձեւավորված հասարակական կարծիքը:

Անգիտական պառկամենտի անդամ պ-ըն Սիլվերմենը հայտարարեց, որ դեռ մինչ Սովետական Սիություն ժամանելը նա դիտեն, որ հազարավոր արտասահմանյան հայեր գալիս են Սովետական Հայաստան:

— Սակայն միայն ալսեել ժամանելուց հետո, — ասաց նա, — ես հասկացա և ինձ պատկերացրի այն մեծ աշխատանքը, որ այդ ուղղությամբ կատարում է Սովետական Հայաստանի կառավարությունը:

Սիավորել ամբողջ աշխարհում ցրված հայ ժողովրդին, ստեղծել բոլոր պայմանները հայերի ներգաղթի համար՝ հնարավոր է միայն Սովետական իշխանության օրոք: Որը ապահովում է նրանց անվտանգությունը և վաղվա նիւթամամբ նրանց վատահությունը: Կրկնում եմ, միայն սովետական իշխանության օրոք հնարավոր էր ձեռնամուխ լինել ներգաղթի այդպիսի մեծ պլանի իրազորմանը:

Մեզ իրազեկ են դարձել ներգաղթի թուլլություն տալու վերաբերյալ սովետական կառավարության որոշման առթիվ արտասահմանյան հայերի արձագանքներին և արտասահմանյան հայերի Սովետական Հայաստան գալու հսկայական ցանկության վերաբերյալ:

Թյուրքիայի կողմից բռնի կերպով անշատած հողերը Սովետական Հայաստանին վերադարձնելու հարցի մասին արտահայտվեց անգիտական պառկամենտի անդամ պ-ըն Սիլվերմենը:

— Դժբախտարար, — ասաց նա, — անգիտայինների մեծ մասը Սովետական Հայաստանի մասին քիչ բան դիտե, Մենք՝ Սովետական

Հայաստան ժամանած զելեգացիայի անդամներս հասկանում ենք, որ այդ հարցը մեզ համար կենսական նշանակություն ունի: Այդ պրոբլեմը արտացոլում է հայ ժողովրդի հոր զգացմունքներն ու իղձերը: Վերադառնալուց հետո անգիտական ժողովրդին կպատմենք այդ զգացմունքների և իղձերի մասին:

— Այդ հարցը իմ կարծիքով, — ասում այնուհետև պ-ըն Սիլվերմենը, — կարելի է լուծել Միավորված Ազգերի կազմակերպության աջակցությամբ:

Դեկագացիայի զելեգացը պ-ըն Էվանսը իր հերթին ասաց:

— Ես կարծում եմ, որ այդ հարցի առթիվ այստեղ պետք է անկեղծ խռուել երբ մենք ժամանեցինք Սովետական Հայաստան: Մեկանք, որ բռնի կերպով թյուրքիայի կողմից անշատոված հողերի վերադարձումը, Սովետական Հայաստանին՝ հանդիսանում է գործնական հարց և որ առանց այդ խնդրի լուծման Հայաստանը լի կարող ընդունել ամրող աշխարհում ցրված հարյուր հազար հայերին:



Երեան այցելած անգլո-սովետական բարեկամության ընկերության զելեգացիայի անդամ, օմուլսաստանն ալսօրը ժուռնալի խմբագիր Ռեշինալդ Թիշոպպը մամուլի ներկայացուցիչներին հանձնեց հետեւյալ հոդվածը:

ՈԵԶԻՆԱԼԴ ԲԵՇՈՊ

Աշխարհում չկա մի այլ ազգ, որը կարողանար ալելի հեշտությամբ նվաճել բրիտանական ժողովրդի բարեկամությունն ու համակրանքը, քան հայերը: Մեզանում նոյնինիկ բազաբական սիսակետից ամենահետամաց և վատ իրազեկ մարզիկ լսել են հայկական կտորածների մասին: Նրանք կարող են շիմանալ այդ գաղանություններին ուղեցած հանգամանքների մասին շատ բան, զարող են նույնիսկ շիմանալ, թե ո՞րեղ են տեղի ունեցել այդ զազանությունները, նրանք կարող են շիմանալ, թե ո՞րեղ է գտնվում Հայաստանը, — բայց այն մասին, որ հայերը անցյալում եղել են հալածված ժողովուրդ, նրանք գիտեն և որպես այդպիսի ժողովրդի նրանք պատրաստ են բանալ իրենց սրտերը:

Ես կարծում եմ, որ մեր զելեգացիայի լուրաբանը պատճենագործ անդամ ապշեց տեսնելով, թե որքան շատ բան է արված սովետական

իշխանության անցած ժամանակաշրջանի 25 տարվա ընթացքում՝ Հայաստանը կուլտուրական, արդյունաբերական և մշտւա տեսակետներից զարգացնելու համար:

Դեռ ավելի և շատ բան պետք է արդի, բայց այն, ինչ կատարված է, հանդիսանում է լավագույն հարավոր նախանշանը ապագայի համար:

Երեանում հայ ժողովուրդը ունի մեծ ազդին արժանի մայրաքաղաք: Նրա ծառերով պատաժ լայն փողոցները և հոյակապ շենքերը խիստ հակապատկեր են ներկայացնում բլուրի վրա դեռ ճրեացող հին քաղաքի մացորդների համեմատությամբ:

Գյուղական վայրերում տները դեռ պրիմիտիվ են, բայց այստեղ ևս մեծ քանա-

կությամբ նոր կառուցված շենքերը խոստանում են, որ հայերի ապագա սերունդները կունենան գյուղեր, որոնցով նրանք կկարողանան հպարտանալ նույնպես, ինչպես այսօր նրանք հպարտանում են իրենց մայրաքաղաքով:

Կրթության տարածումը շտեսնված է: Աշխարհում ոչ մի ազգ չի կարող պարձենալ նրանով, որ նրա բնակչության 20 տոկոսուց ավելին գտնվում է դպրոցում: Իչարկե, դրա համար կան հատուկ պատճառներ, բայց նրանք չեն փոխում այն փաստը, որ այդպիսի խնտենսիվ կրթական աշխատանքը կզարդացնի հայ ժողովորդին, որը ունենալու բոլոր հիմնալի մարտական հատկությունները, կունենա նաև լայն կուտուրա, որը



Անգլա-սովետական բարեկամության բնիկերության դելեգացիայի
անդամներն էջմիածնում.

անցյալում ունեցել են միայն քչերը:

Արդեն այժմ այդ վայրերում պատուական կյանքը հոսում է շատ ուղղություններով: Այդ բանը մենք տեսանք ձեր թատրոններում, որտեղ այդ կուտարան մեզ թվաց շատ նրբին: Ի դեպք, ամրող աշխարհում չի կարող լինել այդ մասշտաբի մարդկանց մի այլ հասարակություն, որը կարողանար պարծենալ 26 թատրոնով, եւ շնոր խոսում թատերական արվեստի ինստիտուտի մասին:

Աղքատ և հետամնաց հողագործական

երկրից, որը ստրկացված էր օտարերկրյա լծի տակ, Հայաստանը վերածվեց առավելապես արդյունաբերական կիոնմիկա ունեցող ազատ երկրի, այն միջոցին, երբ նրա հողագործական արտադրությունը զարգացավ ինչպես քանակական, այնպես էլ սրակական տեսակետից:

Մենք հասկանում ենք, թի ինչու հայերը ամբողջ աշխարհից ձգտում են վերադառնալ իրենց հարազատ հողը: Նրանք իրենց

կողմից է՛լ ավելի հՀարստացնեն Հսկայական առաջադիմության հորձանքը:

Մեծ Թրիտանիայում քիչ բան է հայտնի Սովետական Հայաստանի, այդքան հեռու գտնվող փոքրիկ երկրի մասին: Մենք մեր պարտքը կՀամարենք նրա մասին տարածել ճիշտ պատկերացում մեզ մատչիլի բոլոր ժիցուներով: Մենք կնշենք արդեն ձեռք բերված մեծ առաջադիմությունը և այն Հսկայական շանքերը, որ երկիրը կատարում է հնգամյա նոր պլանի ընթացքում: Մենք կանենք նաև այս, ինչ որ մեր ուժերը ներում մն, որպեսզի պարզ դրձնենք թյուր թիրապետության տակ գտնվող հին տերիտորիաները վերադարձնելու հայկական պահանջների բնույթը: Մենք կփորձնեք սարզ դարձնել, որ այդ տերիտորիաներում 1915-1920 թվերին կոտորվել է մեկ միլիոն հայություն և պիտի ևս մեծ քանակությամբ հայեր սքսորվել են և փախուստի դիմել: Մենք կնշենք, որ մեկ ու կես միլիոն հայերի նկանամբ արդարությունը հնարավոր չէ գենսագործել ամերող աշխարհում, մինչև որ նրանց համար մատչելի չի դառնա այդ հոգը որպես ազատ Սովետական Հայաստանի անքածան մասը:

Մենք շենք փորձի Հայաստանը նկարսգրել որպես մի դրախտավայր: Ավելի շուտ կփորձնեք մեր տապավորությունները շարադրել այն դիտողության ոգով, որ 18 ամյս առաջ թրիտանական պառամենտական դեպարտամենտին արել է գեներալիստի մուսա Ստա-

լինը: Դեւեգացիան նրան հարցրել է, թե ինչպես կարող է ավելի լավ ծառայել բրիտանա-սովետական հարաբերություններին: Նա պատասխանել է, ասելով, որ ամենից շավն է տուն վերադառնալով պատմել ամբողջ ճշմարտությունը այն մասին, որին դեղեգացիան տեսել է Սովետական Միությունում, թե վատը և թե լավը: Մենք աւցելել ենք Սովետական Միության շատ մասեր և տեսնել ենք, թե ինչպես մեծ երկիրը տորի է կանգնում այն բոլոր զուհարերությունների ու տառապանքների տարիներից, որ բաժին են ընկել միայն մի բանի երկրների:

Մենք տեսանք շատ այնպիսի բաներ, որ պետք է բարեկավել, բայց է՛լ ավելի շատ այնպիսի բաներ, որոնք հիացմունք են առ ուղացնում: Օվ վերջին տեղը չէին գրավում հիացմունք առաջացնող այն բաները, որ մենք տեսանք Սովետական Հայաստանում:

Մեր երկրների բարեկամությունը սովետական ժողովրդի, ինչպես նաև թրիտանական ժողովրդի համար հանդիսանում է խաղաղության, անվտանգության և բարգավաճման էական հիմք:

Մեր գերեգացիայի անդամները Հայաստանի և հայերի նկատմամբ կպահպանեն առանձնապիս շերմ բարեկամություն այն սրտագին վերաբերմունքի համար, որ նըրանց ցուցը տրվեց այստեղ գտնվելու ժամանակ:

(Քարզմանություն անզիւրենից)

Պ-ՐՆ ԴԵՆԻՍ ՆՈԵԼ ՊՐԻՍՏԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

